

Գիրքը լուսապատճենահանվել է
"ՀամաՀայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ Շերկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրք կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

library

ԴԱԼԻ ԱԼԻՎՈՒ ԿՈՂՈ, ԵՎ ՅԵՐ ՆԵՐՈՒՄ ԼԻՇԱԾ, ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱՎԱԼԽԵՅԱ ՏՐՈՅՈՒԹՅԱ ԳՈՐԾՈՒ ԵՎ, ԽԵՆԵՐԴ,
ԸՆԴՊՈՅՑՔՎԱԾՈՒԵ, ԳՐԵՐ:

ԲՆԱԿ ԳՐԵՐԻ ԽԵՂՈՄՈՒ ՄԱԼԻՎԱՆԱԼԵԾ ԿՈՂՈ ԵՎ
ԽՈՎՈԾ, "ՅՈՒՆԵՎԵՆԻԿԱՆ ԽԵՎՈՅՈՎԵՆ ԳՈՐԾՈՒ" ԿՈՎԱՆ

www.freebooks.am

ԾԱԼԳՅԱԿՈՒ ԵՎ, ՈՐ ՕԳՏԱԼԻՇ Ե՞Զ ՄԵՐ ԿՈՎԱՆՈՒ:
ՅԵՎԿՈՎՈՒՄ ԵՎ ՀՈԽԵՐԻ ԸՆԴԳՐԱՆՆԵՐՈՒՆ:



ԳՐԵՐ ՄԵՐ՝ freebooks@rambler.ru

Գ. Ն. ԻՎԱՆՈՎ



ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿՏՈՄԵՔԵՆԱՌ
ՎԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գ.Ն. ԻՎԱՆՈՎ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ԱԿՏՈՄԵՐԵԼԱ
ՎԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ



«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1981

Դուստրենից բարգմանեց
Պ. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆԸ

Խվանով Վ. Ն.

Ի 855 Գիտություն ավտոմեքենա վարելու մասին: (Ուսա.
թարգմ. Պ. Ս. Մարգարյանը). Եր., «Հայաստան»,
1981, էջ 328, նկ.:

Դրույմ լայնորեն լուսաբանված են մեքենայի անվտանգ երթևեկության խնդիրները: Տեղեկություններ կան ճանապարհային պայմանների և վարորդի հոգեքանական աշխատանքի մասին, մանրամասնորեն լուսաբանված է տայրեր կրիմայական և ճանապարհային պայմաններում ավտոմեքենա վարելու տեխնիկան, տրված են ճանապարհատրանսպորտային հնարավոր պատահարներից նախազգուշանական համարականները: Մեծ ուշադրություն է դարձված արգելակման, շրջադարձի, վազանցի, երթևեկության տեխնիկային ինչպես կարգավորվող, այնպես էլ շահարդավորվող խաշմերուկներում: Տրված է ավտոմեքենան վարելու ժամանակ վարորդների կողմից թույլ տրված բնորոշ սխալների վերլուծությունը:

Դիրքք նախատեսված է ինչպես սկսնակ, այնպես էլ փորձառու վարորդների համար:

Ի $\frac{3603030000}{701 \ 01 \ 81}$ 111—81

ԳՄԴ 39.33 + 39.808
6T2.1 + 6T3

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Նախքան այսօրվա սկսնակ վարորդները իրենց լիիրավ կերպով մայրուղիներ նվաճողների փառավոր կոհորտային կղասեն, կանցնի ժամանակ և կյուրացվեն հազարավոր կիլոմետր ճանապարհներ։ Այդ գրավիչ, բայց դժվար գործում փորձ ձեռք բերելը հեշտ չէ և ոչ էլ անվտանգ։ Այս գրքի նպատակն է՝ օգնել վարորդներին հոգեոր և ֆիզիկական ուժի նվազագույն ծախսումով ձեռք բերել այդպիսի փորձ, հուշել բարդ իրադրություններից դուրս գալու ուղիներ։

ԱՅՍ ԳԻՐՔԸ ՌԴԻՄ ՀԱՄԱՐ է ՆԱԽԱՏԵՍՎԱԾ։ Նրանց համար, ովքեր արդեն ի վիճակի են մոտենալ ավտոմեքենային և կառավարման վահանի վրա գտնվող փայլուն «իրերի» շարքում փնտրել վառոցքի բանալու համար նախատեսված անցքը, բայց դեռևս վերջնականապես չեն տիրապետել վարման հնարքներին։ Նրանց համար, ովքեր ազատ շարժումներ են կատարում կառավարման լծակներով և վստահ պտտեցնում «ավտողեկը»։ Նրանց համար, ովքեր վաղուց վարում են ավտոմեքենան, բայց դեռևս չեն հասկացել վարման նրբությունները և միշտ ինչ-որ խորհրդավոր անախորժությունների են հանդիպում։ Նրանց համար, ովքեր ավտոմեքենա լավ են վարում, բայց կուզենային ավելի լավ վարել։

Ե՞րբ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ԳԻՐՔԸ։ Կարելի է կարդալ առավոտյան, ցերեկը, երեկոյան և նույնիսկ գիշերը։ Կարելի է կարդալ ձմռանը, գարնանը և մինչև անգամ ամռանը (եթե ավտոմեքենա չունեք)։ Բայց, հավանաբար, տեքստը յուրացնելու ամենալավ, ամենահարմար ժամանակը ճանապարհային պատահարից հետո ձեր և ավտոմեքենայի վնասվածքները բուժելու ժամանակաշրջանն է։ Մի մտածեք, որ եթե դուք

վնասել եք ձեր ավտոմեքենան և ինքներդ էլ նոր եք դուրս գրվել հիվանդանոցից, ապա այդ գիրքը կարդալը արդեն ուշ է։ Ընդհակառակը, այն ձեզ կօգնի խուսափել ավելի ծանր պատահաբներից։

ԱՅՍ ԳԻՐՔԸ Ո՞ԻՄ ԿԱՐՈՂ է ՕԳՆԵԼ, ԵՎ ԱԿՍՆԱԿՆԵՐԻՆ Ա պրոֆեսիոնալներին, այն պայմանով, որ նրանք քննադատութեն զնահատեն ճանապարհում իրենց գործողությունները, սովորեն միմյանցից, այսինքն գիրքը կօգնի այն ավտովարորդներին, ովքեր վարելը համարում են գիտություն։ Այս գիրքը հատկապես օգտակար կլինի նրանց համար, ովքեր առանց շտապելու ամեն օր ավտոմեքենան անվտանգ վարելու փորձ են կուտակում, իրենց օրինակով ցույց տալիս, որ կարող են ամբողջ կյանքն անցկացնել ավտոմեքենայի ղեկի մոտ, և ոչ միայն վթարի շենթարկվել, այլ շստեղծել ոչ մի վթարային իրադրություն։

ՍԱ ԴԱՍԱԳԻՐՔ է, ԹԵ ՈՉ։ Ավելի շուտ ոչ, քան այս Այս գիրքը նախատեսված է վարորդական դասագրքերին և «Ճանապարհային երթևեկության կանոններին» լավատեղյակ մարդկանց համար։ Մեր խորհուրդները որոնց դուք կծանոթանաք, մի ընդունեք որպես բոլոր դեպքերի համար ամփոփուի, ինչ-որ օրենք, երթևեկության ինչ-որ օրենսգրքի նման բան։ Ոչ, այն դոգմա չէ, այլ ավտոմեքենայի ստեղծագործական վարման ձեռնարկ։ Զէ՞ որ նույնիսկ նույն հնարքը միևնույն ավտոմեքենայի վրա կարող է ունենալ տարբեր հետեւանքներ, կախված այն բանից, թե ավտոմեքենան արդյոք ընթանում է դատարկ թե՞ լրիվ ծանրաբեռնված, բեռը բարձր է թե՞ ցածր, ճանապարհը չոր է թե՞ թաց և այլն և այլն։


ԻՆՉՈ՞Ի է ԳԻՐՔԸ ԱՅՍՄԵՍ ԿՈՉՎՈՒՄ։ Շատերը վերնագրում տեսնելով «գիտություն» բառը, գիրքը կարող են պատկերացնել բազմաթիվ բանաձևերով և ոչ թե վարորդներին տրվող կոնկրետ խորհուրդներով։ Հուսով ենք, որ կարդալով այս գիրքը, նրանք չեն գտնի այն «վտանգները», որոնք նրանց սպառնաւմ են վերնագրում։

Գիրքը, այնուամենայնիվ, ինչո՞ւ է կոչվում «Գիտություն ավտոմեքենա վարելու մասին»։ «Գիտություն» բառը շատ լայն իմաստ ունի։ Գոյություն ունի նաև այնպիսի հասկացություն, ինչպիսին է «կյանքի գիտություն»։ Իզուր չէ, որ

բաղմափորձ մարդկանց մասին ասում են. «Նա կյանքի մեծ դպրոց է, անցել»:

Այսպիսով, այս վերնագրում «գիտություն» բառը՝ «կյանքի փորձ» հասկացության հոմանիշն է։ Հատկապես ասյդ տեսանկյունից էլ խնդրում ենք դիտել ձեր ուշադրությանը ներկայացվող այս համեստ աշխատանքը։

Նախքան ավարտելը բերենք մի միտք, որը ժամանակին արդեն ասել ենք անվտանգ վարմանը նվիրված մի ռայլ գըրքում, բայց որը այն ժամանակվանից ամենենին էլ չի կորցրել իր հրատապությունը։ Իհարկե, վարորդն ականորդ չէ, բայց զեկի մոտ նաև նույնպես իրավունք չունի սխալվելու Եթե այս գիրքը օգնի ձեզ խուսափելու թեկուզ մի քանի ճանապարհային աղետներից, ապա հեղինակը իր խնդիրը կատարած կհամարի։



ՓՈՐՁՆԱՎԱՏՈՄԵՔԵՆԱՆ ԱՎԵՏԱԳ ՎԱՐԵԼՈՒ ՀԻՄՔՆ Է

Գլուխ 1

ԵՐԲ ԴԺՎԱՐ ԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԵջ է ԴՆՈՒՄ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ

ՀԱՄԱԲՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԻ ՀՈՒՍԱԾԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այս գլխում պատմվում է ավտոմեքենայի հուսալիության և վթարի ու ճանապարհային աղետների միջև եղած տարբերության մասին:

Վթարը ավտոմեքենայի ճանապարհի կամ մարդու հանկարծակի հրաժարումն է իր դերը կատարելուց: Օրինակ, ավտոմեքենայի վթարը անիվի կեռակալի և կարդանային լիսեռի կտրվելն է, արգելակների սեպումը և նման այլ խանգարումներ: Ճանապարհի վթարը՝ բանուկ մասի փորվածքն է, որը ցույց շի տրված նշաններով, մարդու «վթարը»՝ ցավի նոպան է, քունը, ալկոհոլի ազդեցությունը, որոնք վարորդին դրկում են ավտոմեքենան վարելու հնարավորությունից:

Սակայն ժամանակակից ավտոմեքենաների, ինչպես նաև ճանապարհների վթարները բավականին հազվադեպ են հանդիպում և ավելի հազվադեպ են նրանք հանգեցնում ճանապարհային աղետների, իսկ ահա մարդկանց «վթարի» համարյա 100%-ը հանգեցնում են ճանապարհային պատահարի:

ԿՑԱՆՔԻ ԴԱՍԵՐԸ

Հնում ասում էին. «Ամեն ինչ աստծո ձեռքում է»: «Ամեն ինչ մարդու ձեռքում է», հաստատում ենք մենք, նկատի ունենալով ցանկացած, այդ թվում վթարային և վտանգավոր իրա-

գրություններում ավտոմեքենա վարելը։ Հավանաբար դուք մեկ անգամ չեք, որ տեսել եք, թե վարորդները ինչպես շրջան կազմած պատմում են ճանապարհին իրենց հետ պատահած տարբեր դեպքերի մասին։ Այստեղ կարելի է լսել բազմաթիվ հետաքրքիր դեպքեր, որոնց շես հանդիպի ոչ մի գրքում։ Մենք էլ փորձենք պատմել մի քանի այդպիսի դեպքեր և միասին վերլուծենք, թե ինչ կարելի է անել վտանգավոր իրադրությունից պատվով և նվազագույն կորուստներով դուրս գալու համար։

Անիվը պոկվել է։ Մարդատար ավտոմեքենան 60 կմ/ժամից փոքր ինչ ավելի արագությամբ անցավ ժամանակակից մեծ կամրջով։ Վարորդը վայրէջքի ընթացքում մի փոքր արգելակեց և օ՛, հրաշք՝ ավտոմեքենայի տակից դուրս գլորվեց իսկական մի անիվ և սլացավ առաջ։ Վարորդն ավտոմեքենայում նստած ուղևորներից պակաս զարմացած չէ։ Բայց զարմանքն արագ փոխվում է տագնապի, որովհետև բոլորը հասկացան, որ առջևում իրենց ավտոմեքենայի անիվն է գլորվում։ Ո՞րը. առջևի՞նը, թե՞ ետևինը, ձա՞խը, թե՞ աջը։ Այդ բոլորը տևում է 3—4 վրկ. այսինքն՝ դա այն ժամանակն է, որի ընթացքում ուղղվում է կախոցի զսպանակը, թեքվում է թափքը և լսվում հարվածը (կարծես դիպչում են աղյուսի կամ եղբազարդի) և աջ ու ձախ կայծեր տարածելով ասֆալտի ետոնե ծածկույթի վրայով տանում է ավտոմեքենան երեք անիվի և մեկ արգելակային թմբուկի վրա։ (Ինչպես պարզվեց հետագայում, մեխանիկի անփութության պատճառով անիվը դուրս էր թռել, որը լավ չէր ձգել սկավառակի ամրացման պնդողակները):

Կարելի է հանդիմանել վարորդին, որն ավտոմեքենայի շարժման ընթացքում չի զգացել, թե ինչպես է անիվը ռօրորվել։ Սակայն նա եղել է երիտասարդ և անփորձ։ Բայց և փորձված վարորդն էլ կարող է շնկատել այդ, քանի որ 60—80 կմ/ժամ արագության դեպքում գործնականորեն հնարավոր չէ հայտնաբերել այնպիսի անսարքինություն, ինչպիսին է անիվի վատ ամրացումը։ Այն ոչնչով ի հայտ չի գալիս։ Միայն 50 կմ/ժամ արագության դեպքում ավտոմեքենայի առջևի մասում լսվում է անկանոն թխկթխկոց, որը հաճախ ուժեղանում է դեկորատիվ կափարիչի զնդզնգոցից։ Եթե արագու-

թյունը 80 կմ/ժամից ավելի է, ապա նրա նվազագույն փոփոխությունից լրիսկոց է լսվում, իսկ զեկանիվում զգացվում են կտրուկ, բայց թույլ հարվածներ, ինչպես շհավասարակը-շըռված դողերի դեպքում։ Առավել բացահայտ այն հայտնը-վում է շարժման ուղղությունը փոփոխելիս։

Պատահում է, որ անիվը պոկվում է արգելակային թըմ-բուկի հետ միասին՝ սոնու պնդողակի ետ պտտվելու պատճառով։ Այդ դեպքում հատկապես զեկով մաներելիս, անի-վը դուրս է սահում առանցքակալից։ Ավելի վատ, երբ կոտրվում է անիվի շուր տալու դարձակը և անիվը վերջինիս մնացորդների հետ միասին շարժվում է արագությունը կորցրած ավտոմեքենայից ավելի արագ, Երբեմն պոկվում է ետեղի անիվը։ Դրա հետևանքը նույնպես բավականին տհաճ է։ Այս դեպքում ամենից շատ տուժում է ավտոմեքենան։ Ետեւ անիվը պոկվելիս կոտրվում է ձայնամարիչի խողովակը, ճմլվում է վառելիքի բաքը և այլն։

Վարորդը ինչպես պետք է պահի իրեն կրիտիկական իրադրությունում, երբ պոկվել է ետեղի անիվը։ Նա պետք է մնացած միակ զեկավարվող անիվի օգնությամբ աշխատի, որպեսզի մեքենան շուր չգա։ Դրա համար անհրաժեշտ է երբեմն «կաղացող» ավտոմեքենայի նկատմամբ ներողամիտ լինել, թույլ տալ նրան գնալու իր ցանկացած ուղղությամբ։ Բայց այս դեպքում ջանացեք, այնուամենայնիվ, ավտոմեքենան պահել շարժման գոտու վրա։ Արգելակել կարելի է, բայց շատ զգույշ, քանի որ եթե անիվը դուրս է թոել արգելակային թմբուկի հետ միասին և արգելակների բանվորական անիվային գլանները բաց են, ապա արտահոսող հեղուկը ընկնելով մյուս անիվների տակ, կարող է շատ անախորժություններ պատճառել։

Կախոցի կոտրվելը։ Արագաշափի սլաքը տատանվում էր 70 և 80 թվերի միջև։ Մինչ ավտոտնակ մնացել էր 2 կմ։ Շարժիչը բզզում էր և կարծես երգում՝ «շուտով ավտոտնակ, շուտով հանգիստ»։ Վարորդն առջեռում, ճանապարհի վրա նըկատեց փոքրիկ անհարթություն, Անցնելով այն, նա զգաց թափքի թեթև ցնցում դեպի աջ և հարված անիվում։ Եվ հանկարծ ավտոմեքենան սկսեց ուղղվել աջ և զեկանիվն ինքնիրեն պտտվեց։ Վարորդը, բնականաբար, սկսում է այն պըտ-

տեղնել դեպի ձախ: Զնայած բավական դժվարությամբ, այնուամենայնիվ դա նրան հաջողվում է և ավտոմեքենան շարունակում է մոտենալ մայթին:

Հետագայում, ինչպես պարզվում է, կոտրվել էր առջեկի աջ կախոցի ներքեկի լծակի սոնին: Անիվը վերեկի մասով թեքվել է դեպի շարժիչը և շնայած այն ձգվել է ձախ, ներքեկի լծակը, կայծեր հանելով ասֆալտից և կրճատցնելով դարձել է պտըտման կենտրոն, որի շուրջը ավտոմեքենան պտտվել է դեպի աջ: Եթե վարորդը փորձված լիներ, հեշտությամբ կարող էր գլուխ հանել նման իրադրությունից: Սակայն շհասկանալու հետևանքով առաջացած վախը նրանից խլել էր ամենագըլխավորը՝ իրավիճակը զգաստորեն գնահատելու կարողությունը: Իսկ, եթե նա այդպիսի դեպքերի փորձ ունենար, ապա դրանում անսովոր ոշինչ չէր տեսնի, որից կարելի էր վախենալ և ընկնել խուճապի մեջ: Սա ավտոմեքենայի բանող մասի վթարներից մեկն է, որն առաջացնում է միայն շարժման հետագծի փոփոխություն:

Ամենապարզը դեկանիվն էլ ավելի ձախ շրջել և արգելակելն է: Դեկի լայնական ձգիչները կդիմանային, իսկ դեկանիվի վրա գործադրվող ուժը շափից մեծ չէր լինի: Իհարկե, այն սովորականից մեծ է, բայց սահմանայինից՝ հեռու վտանգավոր է միայն բեռնվածության սկզբնական փոփոխությունը, իսկ այնուհետև դառնում է սովորական: Այդ դեպքում անվտանգության տեխնիկայի հիմնական կանոնը նույնն է, ինչ որ անիվը պոկվելու պահին: Խիստ հետեւ, որպեսզի ավտոմեքենայի «կաղ» կամ «հիվանդ» տեղը շհարվածի կոյուղու հորի կափարիչին: Դա շատ վտանգավոր է, որովհետև կարող է ավտոմեքենան շուռ գալ:

Այսպիսով, շնայած վարորդը շարունակել էր ճիգ գործադրելով դեկանիվը պտտեցնել դեպի ձախ, այնուամենայնիվ ավտոմեքենան շարժվել է աջ: Եվ վարորդը, ըստ երեսութին, որոշել է, որ իր բոլոր ճիգերն անօգուտ են: Մանավանդ, որ մայթեզրը գտնվում էր կողքին և սյունն էլ հեռու չէր: Այս բոլորը միասին բարոյալքել են մարդուն և նա... վհատվել է: Ավտոմեքենան ազատ զգալով, պտտվել է դեպի աջ, բարձրացել մայթեզր և աջ լապտերով հարվածել սյունին: Ամբողջ աջ կողմը՝ մինչև ետևի անվածածկոցը, ներառյալ ուղևորի

Համար նախատեսված առջևի նստարանը, ուր բարեբախտաբար ուղևոր չի եղել, ճմլվել է։ Արդյունքն եղել է այն, որ վարորդը երկու ամիս պառկել է հիվանդանոցում, իսկ «Վոլգան» դուրս է եկել գործածությունից։ Վարորդը դարձյալ նստել է ավտոմեքենայի ղեկին, բայց պատահարը իզուր չի անցել և այժմ բարդ պայմանների ամենափոքր նշանի դեպքում (կանգնած ավտոմեքենայի ետևից հետիւնի երևալը, ինչոր տեղ ճանապարհի նեղանալը) վարորդի շունչը կտրվում է։

Աեկային կառավարման նաղորդակում ձգիչի պոկվելը հազվագյուտ է հանդիպում, բայց շատ վտանգավոր է։ Կարող է պոկվել կամ ղեկի երկայնական ձգիչը, կամ էլ լայնական ձգիչներից մեկը։

Քննենք ամենավտանգավոր ղեպքը՝ երկայնական ձգիչի պոկվելը։ Այն վտանգավոր է, որովհետև երկու անիվներն էլ (որոնք միացված են երկայնական ձգիչներով) ակնթարթորեն կորցնում են ղեկի հետ կապը։ Այդ պատճառով, եթե զգաք, որ ղեկանիվը դարձի ժամանակ դիմադրություն չունի, և նրա պտույտը շարժման հետագծի փոփոխության վրա չի ազդում, ապա կրիտիկական իրադրություն է։ Ծշմարիտ է, համանման ղեպք կատարվում է, սառույցի վրա շարժվելիս, բայց դա քիչ սարսափելի է, քան շշարժվող անիվները։ Եթե դրանք ղեկավարվող շինեին, բայց մնային նույն վիճակում ու ֆիկսացված, ապա վտանգը մեծ չէր լինի։ Սեղմել արգելակին և զերջ։ Իրոք, որոշ վարորդների շրջանում առաջին ցանկությունն է սեղմել արգելակի ոտնակը։ Մի շտապեք Զղեկավարվող անիվները մի ակնթարթ կարող են կանգնել աջ կամ ձախ սահմանային դիրքերում։ Երկու ղեպքում էլ տեղի է ունենում կամ ավտոմեքենայի շրջում, կամ հարված ճանապարհասպասարկու կառուցվածքներին, կամ էլ ավտոմեքենաների ընդհարում։ Այդ պատճառով է հենց, որ ղեկանիվը սկսում է շատ հեշտ պտտվել, փորձված վարորդները անմիջապես շեն արգելակում, այլ եթե արագությունը 30—40 կմ/ժամից բարձր է, թուլացնում են զազը։ Եթե արագությունը ցածր է, ապա կարելի է արգելակել։

Իսկ ի՞նչ է կատարվում դրոսելավորման և ոչ թե արգելակի ոտնակին սեղմելիս։ Ետեսի անիվները սկսում են «հետ մնալ» առջևիններից և առաջանում է մի փոքր կայունացում։

Փորձված վարորդները նույնիսկ 30 կմ/ժամից բարձր արագության դեպքում ավելացնում են «գազը», ջանալով կտրուկ արագացնել ավտոմեքենայի ընթացքը, որը ձգտում է դուրս գալ ճանապարհից: Թափավագքի դեպքում կատարվում է ավտոմեքենայի սովորական կայունացում ուղղագծային ուղղությամբ, այնպես, ինչպես ոլորանից դուրս գալիս, երբ դիտավորյալ բաց են թողնում դեկանիվը, որպեսզի ավտոմեքենան ինքը գնա ուղղագծով: Ավտոմեքենան հենց որ կայունացնում է իր շարժումը, անհրաժեշտ է անմիջապես արգելակել:

Փորձառու վարորդներն այդպիսի մաներ մինչև լրիվ կանգառը կատարում են մի քանի անգամ:

Անփորձ վարորդներին տրվում է հետեւյալ խորհուրդը: Այդպիսի դեպքում անհրաժեշտ է արգելակել «ամուր», որպեսզի ավտոմեքենան կանգ առնի սահելով: Արգելակի ոտնակը բաց մի թողեք այնքան ժամանակ, մինչև ավտոմեքենան կանգ չի առել: Ընդ որում անիվները ոչ թե գլորվում, այլ սահում են և ավտոմեքենան գնում է սահելով, խստորեն պահպանելով սկզբնական առաջադրված ուղղությունը: Բաց մի թողեք արգելակի ոտնակը, եթե համոզված չեք, թե անիվները որ կողմն են շրջված:

Կայնակի ձգաձողերից մեկը եթե կտրվել է, ուրեմն առաջին ազդանշանը կլինի դեկանիվի վրա ուժի ակնթարթային թուլացումը (կտրման պահին), իսկ այնուհետև տեղի է ունենում ուժի մի փոքր մեծացում, ինչպես առջևի անիվի փշած դողով ավտոմեքենա վարելիս: Երբեմն հնարավոր է, որ դա անմիջապես չնկատվի: Շարքից շարք վերադասավորվելիս, ավտոմեքենան չի ենթարկվում վարորդին, դարձը կատարվում է զգալիորեն դանդաղ, քան սովորաբար և դրա հետևանքով նրա շարժման հետագիծը բոլորովին այն չէ, ինչ դուք նկատի ունեիք: Այդպիսի դեպքում անհրաժեշտ է արգելակել որքան կարելի է սահուն: Եթե ավտոմեքենայից դուրս գալուց հետո դուք համոզվեք, որ լայնակի ձգաձողերն անվնաս և անվթար վիճակում են, փնտրեք ավտոմեքենայի նման վարքի այլ պատճառ (իջել է անվաղողը, կոտրվել կամ նստել է զսպակը, ուղևորները կամ բեռը ճիշտ չեն տեղաբաշխված):

Բեռի նիշտ տեղավորումը: Նրանք, ովքեր հաճախ են երթևեկում, կարող են վկայել, թե ճանապարհի բանուկ մասում

ինչպիսի անսպասելի առարկաների են հանդիպում։ Արկղեր, ներքնակներ, դույլեր, բրեգենտ, ինքնաթափ ավտոմեքենաների թափքի ետևի կողեր և այլն։ Դա բեռի սխալ կամ անփութ ամրացման հետևանք է։ Բայց նույնիսկ, եթե բեռը չի կորշում, այն կարող է տեղաշարժվել և ձեզ ու շրջապատին անհանգստացնել։

Հաճախ ավտոմեքենաների հոսքում հանդիպում են մի կողմի վրա թեքված մեքենաներ, որոնցում օրինակ, կոնտեյները կամ բետոնե սալիկը սահել են դեպի թափքի կողերից մեկը։ Վատ է, եթե սահել է դեպի աջ կողմը։ Անհրաժեշտ է հաշվի առնել նաև տեղափոխվող բեռի բնույթը։ Այսպես, շրջադարձով երթևեկելիս ցիստեռնում գտնվող հեղուկը կարող է ավտոմեքենան կամ կցասայլը լրացուցիչ թեքել։

Եինարարությունում ցեմենտբետոնյա խառնուրդի կամ շինարարական շաղախի տեղափոխման համար հաճախ օգտագործում են ինքնաբեռնաթափ ավտոմեքենաներ։ Եվ ահա որոշ վարորդներ, որոնք սովոր են ափազով, հողով խճաքարով բեռնված ինքնաբեռնաթափ ավտոմեքենաներով բավականին կտրուկ մաներել, զարմանում են, եթե հեղուկ բեռնված ավտոմեքենան սովորական ճանապարհում շուր է գալիս։ Այդ տեղի է ունենում, որովհետև կենտրոնախույս ուժի ազդեցության տակ հեղուկ բեռը հեշտությամբ տեղափոխվում է թափքի արտաքին պատի կողմը և առաջացնում շուր տվող լրացուցիչ մոմենտ։ Ավտոմեքենայի թափքում, խցիկում կամ կցասայլում բեռի տեղափոխման պատճառով կարող է առաջանալ վտանգավոր իրադրություն և այդպիսի դեպքում պետք է ուշադիր լինել, հատկապես շրջադարձի ժամանակ։

Այս խորհուրդը վերաբերում է ոչ միայն բեռնատար, այլև մարդատար ավտոմեքենաներին։ Փորձված վարորդը ծանր իրերը չի դնի և գեր ուղևորին չի նստեցնի ետևի ձախ մասում, քանի որ գիտի, որ բեռի և ուղևորի այդպիսի տեղափորման և ճանապարհի լայնակի թեքության առկայության դեպքում ավտոմեքենայի առջեկի ձախ մասը վեր է բարձրանում և ետևի աջ մասը ուժեղ իջնում է ներքև։ Ըստ որում, ավտոմեքենայի վարումը և ուղղագիծ, և թե կորագիծ տեղամասերում տարբերվում է սովորականից։ Փորձված վարորդ-

ներն այդ գիտեն և բեռն այնպես են տեղաբաշխում, որպեսզի
դրա շնորհիվ ավտոմեքենան «Հարթ» լինի:

Միայն այդ դեպքում, նույնիսկ ուղղագիծ տեղամասե-
րում, պետք չէ ղեկանիվը ուժ գործադրելով թեքել ձախ, որ-
պեսզի ավտոմեքենան ուղիղ գնա:

Խափանվել են արգելակները: Հայտնի են դեպքեր, երբ
երկարածիգ վայրէջքի ժամանակ խափանվել են ավտոմեքե-
նայի արգելակները և վարորդները ելք են գտել այդպիսի
անելանելի թվացող վտանգավոր իրադրությունում:

Ավտոմեքենան, որը վայրէջքի սկզբում շարժվում է 30—
40 կմ/ժամ արագությամբ, կարող է 60° թեքություն ունեցող
մեկ կիլոմետր տարածության վրա շարժիչից անջատած
տրանսմիսիայով զարգացնել 60—70 կմ/ժամ արագություն:
Եթե վայրէջքն ավելի երկար է կամ արգելակների խափանու-
մը տեղի է ունեցել լեռնային ճանապարհին, որտեղ թեքու-
թյունը բավականին կտրուկ է, ապա արագությունն ավելի է
մեծանում:

Իրոք, ավտոմեքենայի արգելակների խափանման ժամա-
նակ ստեղծվում է բարդ իրավիճակ: Ավտոմեքենան շարժ-
վում է ներքեւ, անընդհատ ավելացնելով արագությունը: Դա
տհաճ է և սարսափելի: Իսկ եթե ներքենում կանգնած են այլ
ավտոմեքենաներ և մարդիկ, կամ գետակի վրայի կամուրջը
քանդված է, իսկ այդ կամրջի շրջանցումը այնպիսին է, որ
նույնիսկ ցածր արագության դեպքում դժվար է անցնել թեք
հողաշերտի վրայով և կամրջի կողքի ծանծաղուտով: Տվյալ
պայմաններում արգելակների խափանումը համարյա միշտ
հանգեցնում է աղետի: Կա՞ն, արդյոք, մեթոդներ՝ որոնք թույլ
են տալիս խուսափել այդպիսի աղետներից կամ գոնե մեղ-
մացնել դրանց ծանր հետևանքները: Այո՛, կան:

Եթե դա պատահել է լեռնային ճանապարհին, պետք է
խնդրել ուղևորներին տեղափոխվել ավտոմեքենայի կամ ավ-
տոբուսի մի կողմը, իսկ նրա մյուս կողմով սահուն քսվել
լեռնային սանդղածե խորշերին, զանալով շուրջ շտալ ավտո-
մեքենան, եթե տեղանքը լեռնային չէ, այլ ուժեղ կտրտված
է, ապա անհրաժեշտ է ցանկացած ճանապարհով (սովորա-
բար խրամառվի թեքությամբ, ճանապարհի ձախ կողմով կամ
ճամփեղերքով) հասնել հաջորդ վերելքը և երբ արագությունը

Նվազքի համարյա մինչև զրո, ավտոմեքենան կանգնեցնել ճանապարհի լայնքով, որպեսզի այն ետ շգլորվի, ըստ որում միաժնելով ետքնթաց կամ առաջին փոխանցումը։ Մի մոռացեք, որ գոյություն ունի ձեռքի արգելակ։ Ըստ որում պետք է ճանապարհի երկու կողմից դնել վթարային կանգառի նշանը։

Ուղղագիծ վայրէջքի դեպքում անմիջապես սկսեք փոխարկել փախանցումները և ամենաբարձրից աստիճանաբար (եթե արագությունը բարձր է) անցնել ցածրին։ Եթե արագությունը բարձր չէ, պետք է առաջին փոխանցումից հետո փորձ անել կցորդիչի սեղմումով միացնել ետքնթացը։ Այդպես կանգնեցնելիս կցորդիչը կոտրելուց խուսափելու համար այն բաց են թողնում շատ սահուն։

Եթե խոշրնդուտ չկա, և տեսանելիությունը լավ է, ապա առանց անիվային արգելակների վայրէջքի ընդհանուր կանոնը հետևյալն է. միացնել այնպիսի փոխանցում, որով կկարողանայիք քարձրանալ այդ վայրէջքը։ Բայց և եղեք շատ ուզադիր։ Եթե դուք միացնեք ավելի ցածր փոխանցում, քան պետք է, կարող է արագության տուփը կոտրվել։ Կվերանա արգելակման վերջին հնարավորությունը։

Ինչպես հայտնել այլ վարորդների, որ ձեր ավտոմեքենայի արգելակները խափանվել են։ Անհրաժեշտ է պարբերաբար սեղմել ձայնային ազդանշանի կոճակը և միացնել ու անջատել հեռավոր լույսը, կամ լուսամուտից՝ դուրս հանել ձեռքը և թափահարել վերև-ներքեւ։ Եթե առցելից շարժվում է համընթաց ավտոմեքենա, ցանկալի է բեռնատար կամ առանց ուղևորների ավտոբուս, պետք է հասնել և ետևից սահուն դիպչել նրան՝ վարորդին տալով կանգառի ազդանշան։

Թեքություններից շատ բան է կախված։ Եթե դրանք համեմատաբար մեծ չեն, ապա անհրաժեշտ է ավտոմեքենայի ելքի համար գտնել այնպիսի տեղ, որտեղ՝ ճամփեղերքից վայրէջք կատարելուց հետո խոտի, քարքարոտ գետնի և այլնի վրայով սկսվի վերելք։ Դա հնարավորություն է տալիս ավտոմեքենան կանգնեցնել։

Եթե դուք, վայրէջքով շարժվելիս, հանկարծ լսել եք ավտոմեքենայի ազդանշանի ընդհատվող ձայն, տեսել եք առցելից գնացող ավտոմեքենայի լուսամուտից դուրս հանած

ձեռք, պետք է օգնել դժբախտության մեջ գտնվող ընկերոջը։ Անմիջապես պետք է վազանցել վթարային ավտոմեքենային, տեղավորվել նրա առջեռում և ձգտել ընտրել որքան հնարավոր է միևնույն արագությունը։ Այդ դեպքում հարվածը աննշան կլինի և վնաս չի բերի ոչ ձեր, և ոչ էլ նրա ավտոմեքենային, որի արգելակները խափանվել են։

Եթե խափանվել է ձեր ետևից եկող ավտոմեքենայի արգելակները, ապա գործեք այնպես, ինչպես նշված է վերևում։ Բայց արջի ծառայություն ցույց մի տվեք։ Եթե մինչև վայրէջքի վերջը քիչ է մնացել, իսկ հետո ճանապարհը լրիվ ազատ է և ուրիշ ավտոմեքենաներ չկան, բացի ձերից, ապա մի շտապեք ձեր մեքենան դնել հարվածի տակ։ Ավելի լավ է դուրս գալ ճամփեղերք և նրան զիշել ճանապարհը։ Նա ինքը կանգ կառնի մի քանի տասնյակ մետր հետո։

Բնականաբար, անհրաժեշտ է հետևել օգնություն խնդրող վարորդին և նրա ավտոմեքենային։ Եթե այն կանգ է առել հարթ տեղում, ապա պետք է մոտենալ և նրա հետ կիսել հաջող վախճանի բերկրանքը։ Եթե իրադրությունն ավարտվել է ոչ բարեհաջող, անհրաժեշտ է օգնել դժբախտության մեջ ընկածին։

Ավելի վատ է, եթք ազդանշան տվող ավտոմեքենան սլանում է ձեզ ընդառաջ։ Համարյա բոլոր դեպքերում միայն մնում է նրան հայացքով հետևել։ Բայց երբեմն լեռնային ճանապարհներում, եթք վթարի ենթարկված ավտոմեքենայի արագությունը դեռևս մեծ չէ, նրա համար կարելի է թակարդ ստեղծել։ Զեր ավտոմեքենան կանգնեցնելով ճանապարհի առանցքի նկատմամբ անկյան տակ, դուք նրան որսում եք ձեր և լեռան միջև։ Լեռը չի տուժի, իսկ մնացածը կարելի է վերանորոգել։

Պայթել է դողը։ Շատ վարորդներ վախենում են, որ հանկարծակի կարող է պայթել դողը։ Սակայն նրանք հաշվի չեն առնում, որ բոլոր ողբերգական դեպքերը, որոնք նրանք լսել են կամ նույնիսկ կարդացել, տեղի է ունեցել կամ շատ բարձրը արագություն ունեցող մրցարշավային, կամ հին կոնստրուկցիայի ավտոմեքենաների հետ, որոնք չեն ունեցել դեկի կառավարման ուժեղացուցիչներ և, ամենագլխավորը, դողերը բարձր ճնշման ու ավելի «փխրուն» են եղել, քան այժմ։

Փորձված վարորդի համար և «պայթող» դողը, և ցանկացած անիվից դողի օդի աստիճանաբար բաց թողումը սարագիելի չէ։ Նա իրեն շատ լավ է զգում, երբ դողերից մեկի ճնշումը դառնում է ավելի պակաս, քան մյուսներինը, քանի որ այդ դեպքում դեկանիվը, ճանապարհով ուղիղ շարժվելու համար սովորական դրության համեմատությամբ պետք է որոշակի անկյունով պտտեցնել։ Բացի այդ, նշված ուղղուց ավտոմեքենայի «օրորվելը» ավելի է դժվարանում, կարծես «կաղալով» է շարժվում։ Ետեւ անիվների կիսափառ դողերը հետագծի փոփոխության վրա զգալիորեն պակաս են ազդում, քան առջևի անիվներինը։

Ավտոմեքենան սկսում է թեքվել դեպի ծակված դողի կողմը՝ աջ և ձախ կողմերի անիվների ճոճման դիմադրության մեծ անհավասարաշափության պատճառով։ Փորձված վարորդները համարյա ինքնաբերաբար որոշում են $0,1-0,2$ կգ/սմ² մեծության ճնշումների տարբերությունը և դեկանիվի թեքման միջոցով հավասարակշռում ավտոմեքենայի շեղումը շարժման՝ ուղղության նկատմամբ։ Բայց առաջին իսկ հնարավորության դեպքում դողերում ճնշումը նորմալացնում են։ Պակաս փորձված վարորդները լրիվ իջած դողերով կարող են անցնել մի քանի կիլոմետր, այն վերածելով ճիլոպի։

Ոլորածե ճանապարհներում մարդատար և հատկապես բեռնատար ավտոմեքենաների վարորդները դժվար կացության առաջ են կանգնում, երբ կիսով շափ իջած է առջևի արտաքին անիվի դողը։ Անփորձ վարորդը, նույնիսկ դեկանին կառավարման ուժեղացուցիչի օֆնությամբ կարող է գլուխ չհանել ծանր բեռնատար ավտոմեքենայից։ Այսպիսի դեպքում ավտոմեքենայի շարժման հետագծի շառավիղը ավելի մեծ է, քան սովորաբար և այն կարող է շներգծվել շրջադարձում։ Եթե վարորդը, հույսը դնելով ուժեղացուցիչի վրա, ճամփեղրից կտրուկ թեքի ավտոմեքենան, ապա կարող է տեղի ունենալ անիվների ոլորում և ավտոմեքենան շուր կգա։

Իսկ եթե՝ դողերից օդը դուրս է գալիս ոչ թե դանդաղ, այլ միանգամբից, խլացուցիչ աղմուկով, որից անցորդների սիրտը «կանգ է առնում»։ Նախ շպետք է վախենալ։ Գիտեք, որ այդ վիճակում ավտոմեքենան կարելի է կառավարել, իսկ ահա մի քանի վայրկյանի վախը և շփոթվածությունը կաբող է շատ

թանկ նստել: Հենց որ լսում եք պայթող դոզի ձայնը և այնուհետև զգում ղեկանիվի կտրուկ (համարյա հարվածով) մի կողմի վրա պտտվելը, դուք ամենից առաջ պետք է ձգտեք ավտոմեքենային թույլ շտալ ծածկույթով ճանապարհից դուրս գալու ճամփեղերք, քանի որ ճամփեղերքում այն վարել սովորաբար ավելի դժվար է։ Սակայն ղեկանիվն անհրաժեշտ է պտտեցնել միայն այնքան, որպեսզի հավասարակշռել ավտոմեքենայի սկսվող թեքումը։ Զափից ավելի մի պտտեցրեք ղեկը, այլապես ավտոմեքենան կորցնում է կառավարման հնարավորությունը, որը կարելի է պահպանել միայն զգույշ և շատ ճշգրիտ հաշվարկով։

Դրականության մեջ կարելի է հանդիպել դողերի շահագործման բազմաթիվ խորհուրդների։ Ամենից առաջ պետք է ձգտել, որպեսզի բացառվի առջևի անիվների դողերի պայթումը, մշտական հետևել դրանց վիճակին։ Համեմատաբար հեշտ է ստուգել առջևի անիվներում դողերի կողային մակերևույթները, դրա համար անհրաժեշտ է անիվները թեքել աջ և ձախ ու զննել դրանք։ Չի կարելի շահագործել մաշված պահպանաշերտով և (հիմնակմախքի) կորդի երևացող թելերով, ինչպես նաև մեծ անհավասարակշռություն ունեցող դողերը, քանի որ վերջինի դեպքում անիվը պտտվելիս դոզի ծանրացած տեղը ճանապարհի հետ շփվելու պահին առաջանում է շատ ուժեղ հարված, որի հետևանքով դոզը կարող է պատրուզել։ Այդ հարվածները զգացվում են ղեկանիվի վրա։

Դողերից մեկի պայթման դեպքում վարորդը պետք է բավականին ուժ գործադրի, որպեսզի ավտոմեքենան պահի բանուկ մասի վրա։ Դրա համար անհրաժեշտ է ղեկանիվն ամուր բռնել երկու ձեռքով։ Այն վարորդների համար, որոնք բավականին փորձ չունեն և այդ պահին ինչ-որ պատճառով վարում են մեկ ձեռքով (փոխադրում է փոխանցումը, միացնում է լույսը, բացում է լուսամուտը և այլն)՝ այդ պահը կրկնակի վտանգավոր է։ Դոզի անսարքինության պատճառով ավտոմեքենան մի կողմ թեքելիս ձեր ուժը չի բավականացնի այն ուղղել, անկասկած, նորից երկրորդ ձեռքով շեք հասցնի բռնել ղեկանիվը և դուք շեք կարող սահուն կանգնեցնել ավտոմեքենան, որպեսզի այն դուրս շգա ճանապարհի բանուկ մասից կամ վրաերթի շենթարկի խոշընդուները։

Այդ իրադրությունում հաճախ ղեկանիվը դուրս է պրծնում ձեռքից:

Թեքման ժամանակ առաջացած լայնակի ուժերը, որոնք ազդում են ավտոմեքենայի վրա, հատկապես մեծ են բարձր արագությունների դեպքում։ Որպեսզի մնաք ճանապարհի վրա, բոլոր հանգամանքներում պետք է խուսափել արգելակումից։ Եվ եթե ձեզ հաջողվել է կայունացնել ավտոմեքենայի շարժման ուղղությունը, ապա կարող եք սկսել այն արգելակել։ Եթե դուք զգաք, որ արգելակելիս ավտոմեքենան սկսում է այս ու այն կողմ նետվել, անմիջապես դադարեցրեք արգելակումը։

Եթե դողը պայթում է հանկարծակի, ապա ավելի լավ է սեղմել կցորդիչը և ավտոմեքենայի թեքումը հավասարակըշուել ղեկանիվի պտտումով՝ շգործադրելով շատ մեծ ուժ։ Ավտոմեքենայի «օրորումը» աստիճանաբար կթուլանա և այն արդեն կարելի է հեշտ կանգնեցնել զգույշ արգելակելով։ Ըստ որում, այդպիսի դեպքում ավելի լավ է արգելակել շարժիչով։

Զի կարելի մոռանալ նաև հանդիպակաց տրանսպորտային միջոցների հետ ճակատային ընդհարման վտանգի մասին, որ հանգեցնում է առավել ծանր հետևանքների։ Դրա համար, եթե հանդիպակաց շարժումը բավականին ինտենսիվ է և դուք զգում եք, որ դողի պայթման հետևանքով չեք կարողանում ավտոմեքենան պահել շարժման նախկին հետագծում, ապա ավելի լավ է այն ուղղել ճամփեղոի կողմը։ Բայց ավելի լավ է երթևեկել այնպես, որ մինչև անգամ դողերում օդի ճնշման կտրուկ իշեցման դեպքում տեղի չունենա ավտոմեքենայի թեքում և շկարգավորվող շարժում։

Հողմապակու կռտրվելը, որը վարորդների պրակտիկայում հազվագյուտ երևույթ չէ, տեղի է ունենում առջևից ընթացող կամ հանդիպակաց ավտոմեքենայի անիվներից դուրս թռած քարից։ Եթե հողմնապակին տրիպլեքս մակնիշի բազմաշերտ ապակուց է, ապա քարի հարվածը վտանգավոր չէ, այն չի մթագնվում։ Եթե սեկուրիտ կամ ստալինիտ մակնիշի միաշերտ ապակի է, ապա հարվածից ծածկվում է ճաքերով։ Փորձված վարորդները այդ դեպքում ափով սեղմում են ապակուն, ջանալով, որպեսզի խցիկ ներխուժած քամին աշ-

Քերի մեջ բեկորներ շգթի և կանգնեցնում են ավտոմեքենան:

Կանգ առնելուց հետո անհրաժեշտ է ապակին լրիվ - հեռացնել, իսկ թափքի որմնախորշը փակել թափանցիկ թաղանթով: Եթե այդպիսի թաղանթ չկա, ապա պետք է նստարանը ծածկել լթրջվող նյութով և շարունակել երթևեկությունը: Հստ որում ցանկալի է վերարկուն կամ բաճկոնը ետևի կողմը դեպի առաջ հագնել: Կարելի է նաև գոգնոցի նման ինչ-որ բան պատրաստել: Այնուհետև պետք է իշեցնել հակասրեային հովհարը, եթե այն լավ է ամրացված, և ծնկները ծածկել շորով, քանի որ նրանց վրա կսկսի անձրևի կաթիլներ ընկնել: Լավ կլինի, եթե ձեր մոտ գտնվի ականջներով գլխարկ և շարֆ, որոնցով կարելի է մասնակիորեն փաթաթել դեմքի ներքին մասը, փակել բերանը և քիթը: Բազմաթիվ օրինակներ հաստատում են, որ առանց առջևի ապակու ավտոմեքենայի վարումը մեծ վնաս չի պատճառում նույնիսկ ցուրտ եղանակին, եթե ճիշտ ընտրվի շարժման ռեժիմը և միացվի թափքի տաքացուցիչը, որը տվյալ դեպքում կծառայի որպես մթնոլորտային սառը օդի անդրադարձիչ:

Անհրաժեշտ է սառը օդից պաշտպանել նաև ուղևորներին, որոնց պետք է տեղավորել որքան հնարավոր է ներքե, նույնիսկ ուղղակի հատակին, հատկապես եթե այդտեղ կաջեռուցում (վառարան, անցնում է ծայնամարիչ և այլն): Երկաթի, ստվարաթղթի կամ պլաստիկայի մի կտորից կարելի է պատրաստել անդրադարձիչ, որը կփոքրացնի կոտրած ապակուց ներս թափանցող օդի հոսքը:

Ինքնակամ շարժում: Հաճախ վարորդներն իրենց ավտոմեքենաներն առանց արգելակման կանգնեցնում են սրճարանների ու խանութների մոտ, չնկատելով, որ ճանապարհն ունի երկայնական ոլ մեծ թեքություն: Ավելի վատ է, եթե չեն անջատում աշխատող շարժիչը: Շարժիչի աշխատանքն ուղեկցվում է թրթռումով, որի ազդեցության տակ ավտոմեքենան կարող է սկսել ինքնակամ շարժվել: Իսկ չէ՞ որ միայն անհրաժեշտ է քաշել ձեռքի արգելակի բռնակը և կամ ավելի լավ է (չաշխատող շարժիչի դեպքում) փոխանցման տուփի լժակը դնել առաջին կամ ետընթաց փոխանցման վիճակում, որպեսզի մի բոպեռվ առանց հսկողության թողնված ավտոմեքենայի հետ այդպիսի դեպք տեղի չունենա:

Ժամանակակից ավտոմեքենաների «Վտանգավորությունը»: 1965—1970 թվերին թողարկած ավտոմեքենաներն ունեին մի առավելություն 40, 60, 80, 100, 120, 160 կմ/ժամ արագությունների դեպքում կառավարվում էին տարբեր ձևերով: Որքան բարձր է արագությունը, այնքան դժվար և լարված է դառնում կառավարումը և կարելի է չնայել արագաշափին: Ժամանակակից ավտոմեքենաների, օրինակ «Ժիգուլիների» կառավարումը միևնույն է թե՝ 40 կմ/ժամ և թե՝ 120 կմ/ժամ արագության դեպքում: Դրանում է ժամանակակից ավտոմեքենայի կառավարման հմայքը, բայց նաև մի շարք վարորդների համար թաքնված վտանգը:

Ո՞րն է դրա էությունը: Փորձենք բացատրել: Եթե ավտոմեքենան շարժվում է 120 կմ/ժամ արագությամբ, իսկ վարորդը վարման թեթևության պատճառով նույն զգացողությունն է ունենում ինչ 20 կմ/ժամ արագության ժամանակ, ապա դա վտանգավոր է ավտոմեքենայի նկատմամբ ամենանվազագույն չափով հսկողությունը կորցնելու դեպքում: Տըվյալ դեպքում վարման հարմարավետությունը հակասության մեջ է գտնվում անվտանգության հետ: Բարձր արագության ժամանակ դյուրին վարումը ստեղծում է ցանկացած ճանապարհային իրադրությունից առանց դժվարության դուրս գալու վտանգավոր պատրանքը: Եվ, իհարկե, նման փորձանքի մեջ է գցում վարորդին:

Դա հաստատվում է այսպիսի մի հասարակ օրինակով: Ավտոմեքենան ճանապարհի հորիզոնական ուղղագիծ տեղամասով սլանում է 120 կմ/ժամ արագությամբ, իսկ վարորդը այն տպավորությունն է ստանում, թե այն շարժվում է 60 կմ/ժամ արագությամբ: Առջևում երևում է կտրուկ շրջադարձը: Եվ ահա վարորդը մաները սկսում է կատարել այնպես, ինչպես 60 կմ/ժամ արագության ժամանակ: Նա իշեցնում է արագությունը 20—30 կմ/ժամ-ով և սկսում է շրջադարձ կատարել: Վարորդին և ուղևորներին թվում է, թե ավտոմեքենան պարզապես սողում է, այլ ոչ թե շաքժվում է 90 կմ/ժամ արագությամբ:

Բայց ի՞նչ է սա: Դեռևս կորության կեսը չհասած, վարորդը տեսնում է, որ ավտոմեքենան չի ներգծվում շրջադարձում: Այն դուրս է գալիս բանուկ մասից: Արագության

իշեցումը չի օգնում։ Ավտոմեքենան արդեն իներցիայով շարժվում է դեպի ճամփեղը։ Փորձելով դրությունը շտկել, վարորդը կտրուկ թեքում է դեկանիվը, դեռևս հույս ունենալով մնալ բանուկ մասում, բայց դրա փոխարեն կորցնում է ավտոմեքենայի շուռ գալու կանխման հնարավորությունը։ Ավտոմեքենան աղմուկով թռչում է դեպի ճամփեղը և շուռ է գալիս։

Եվ նոր, և հին մակնիշի ավտոմեքենաները այդպիսի իրադրությունում չեն ենթարկվում վարորդին, չնայած վարորդների վարման դյուրինությունը, հարմարավետությունը և արագության զգացողությունը տարբեր է։

Որոշ վարորդներ, դժբախտաբար մինչև անգամ այդպիսի պատահարից հետո չեն կարողանում հասկանալ, որ կառավարման հարմարավետությունը և դյուրինությունը անվտանգության հոմանիշները չեն։

Գլուխ 2

ԵՐԲ ՎԱՐՈՐԴԸ ՍԽԱԼՎՈՒՄ Է

ՎԱՐՈՐԴԸ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆՈՒՄ

Իսկ ո՞վ է հիմնական մեղավորը։ Մարդը ստեղծել է «ինքնաշարժ սայլակ», ստիպել նրան արագ տեղաշարժվելու, բայց ինքը դեռևս չի սովորել այն բացարձակապես ճիշտ դեկավարել և կանխել ճանապարհատրանսպորտային պատահարները։ Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ճանապարհատրանսպորտային պատահարների հիմնական մեղավորը մնում է վարորդը։

Պատկերացրեք, որ դուք քյալագյող չեք և հարգում եք օրենքը։ Առանց շտապելու դուք շարժվում եք ցանկալի վայրը և շարժիչի փաղաքշող գվվոցի տակ ակամա հիշում եք անցյալ օրվա բոլոր իրադարձությունները կամ մտովի պատկերացնում եք, թե ինչպես անցկացնեք այսօրվա երեկոն... Եվ հանկարծ ձեզնից մի քանի մետր հեռավորության վրա նկատում եք կանգ-ազդանշանի վառ-կարմիր լույսը։ Արգե-

Հակոամ: Ո՞ւշ է... Դուք ուշադրություն չեք դարձրել, որ ծածկույթը թաց է և արգելակման ճանապարհը, որի մասին դուք մեկ անգամ չեք, որ լսել եք, մեծացել է հենց այն մի քանի մետրով, որը չի բավականացնում հանգիստ տուն վերադառնալու համար։ Անուշադրությունը, ճանապարհային իրադրությունը և ձեր ավտոմեքենայի տեխնիկական հնարավորությունները ճիշտ և արագ գնահատելու անկարողության հետևանքը ճանապարհատրանսպորտային պատահարն է։

Կարելի է բերել նման բազմաթիվ օրինակներ, յուրաքանչյուր դեպքից հետո ճանապարհատրանսպորտային պատահարների տոկոսների քանակը վերցնելով փակագծերում։ Բայց դա կարենոր չէ։ Մեր գլխավոր նպատակն այն է, որ վիճակագրության շոր տվյալները հասնեն ձեր գիտակցությանը, որպեսզի այդ տոկոսների ետևում տեսնեն զոհեր և վնասներ, որպես յուրաքանչյուր ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանք։

Վիճակագրություն: Ոչ բոլոր վարորդներն են՝ ծանոթ պետականացների հաշվառման փոքր գորշ գույնի քարտերին, բայց, հավանաբար, ոչ ոք էլ չէր ցանկանա ծանոթանալ այդ թերթիկին, դրա վրա տեսնելով իր ազգանունը և բոլոր լրացված սյունակները։ Այդ քարտի շատ կետեր հասկանալի և հայտնի են, բայց որքան էլ տարօրինակ է, հաճախ չեն կատարվում, որը և հանգեցնում է տիսուր հետևանքների։

Տվյալ քարտերի ուսումնասիրությունից պարզվում է, որ ճանապարհատրանսպորտային պատահարների մեծ մասը կատարվում է ինքնավստահության կամ թեթևամտության, շրջապատի նկատմամբ անուշադրության, անզգուշության, անբավարար փորձի, ուրիշներին չհարգելու, իր պարտականությունները կատարելու նկատմամբ անփույթ վերաբերմունքի և, վերջապես, «ճանապարհային երթևեկության կանոններին» շտիրապետելու և խախտելու հետևանքով։

Հետիւտներին հանդիպելու ամենատհաճ ժամերը 12-ից մինչև 20⁰⁰ է։ Այդ ժամերին է բաժին ընկնում վիրավորների մոտ 80 % -ը և մահացածների 75 % -ը։ Քաղաքից դուքս ճանապարհներին հետիւտների վրաերթի ամենամեծ քանակը ընկնում է ժամը 16-ից մինչև 19-ը և 0-ից մինչև 5-ը։ Բացի

դրանից, վիճակագրությունը ցույց է տալիս, որ ճանապարհատրանսպորտային բոլոր պատահարների մոտ կեսը կատարվում է մարդատար ավտոմեքենաների, երկու անգամ պակաս բեռնատար (25), շուրջ 10⁺ անգամ պակաս ավտոբուսների և 5—7 % մոտոցիկլետների հետ:

Անհրաժեշտ է խոսել նաև ճանապարհատրանսպորտային պատահարների կատարման տեղի մասին: Այսպես, կարգավորվող և չկարգավորվող խաշմերուկներում հետիւտների անցումներում և հասարակական տրանսպորտի կանգառներում կատարվում է մոտավորապես 10 % պատահարներ: Դրանք առավել վտանգավոր վայրերն են և անցնելիս անհրաժեշտ է հատկապես ուշադիր լինել: Հորիզոնական ուղղագիծ տեղամասերում կատարվում է 85 %, վայրէջքներում և վերելքներում մոտ 10 %, հորիզոնական կորագծային ճանապարհներում մոտ 4 % և թեքություն ունեցող կորագծային ճանապարհներում մոտ 4 % և թեքություն ունեցող կորագիծ ճանապարհներում 1 % ճանապարհատրանսպորտային պատահարներ:

Ի՞նչ նշանակություն ունի վարորդի աարիքը: Բայ վիճակագրության խոշոր քաղաքներում ճանապարհատրանսպորտային պատահարների մոտավորապես 2 %-ը կատարում են 18, 30 %-ը՝ 19-ից 25, 45 %-ը՝ 26-ից 40, 20 %-ը՝ 41-ից մինչև 60 և 3 %-ը՝ 60 բարձր տարիքի վարորդները: Բայ որում պետք է հաշվի առնել, որ 18-ից 25 և 60-ից բարձր տարիք ունեցող վարորդները համեմատաբար քիչ են:

Վարորդները որ տարիքում են թույլ տալիս շատ ճանապարհատրանսպորտային պատահարներ: Ինչպես ցույց են տալիս հետազոտություններն, ամենավտանգավորը՝ 24—26 տարեկան վարորդներն են՝ իրենց ագրեսիվության, և 60—70 տարեկանները՝ իրենց պասսիվության պատճառով:

Եթե ձեր 20 տարին դեռևս չի լրացել, ապա դուք՝ երեք անգամ ավելի շատ կընկնեք ճանապարհատրանսպորտային պատահարների մեջ, 2 անգամ ավելի հավանականությամբ կլինեք մահացած, 7 անգամ վիրավորված և 2,5 անգամ հաշմանդամ դարձած, քան 25-ից մինչև 32 տարեկան վարորդները: Եթե դուք 70-նն անց եք, դա նույնպես վատ է, թեև տարիքը մեծանալու հետ իջնում է ամենից առաջ այն-

պիսի դժբախտ դեպքերի հաճախականությունը, որոնք տեղի են ունենում ոչ թե վարելու, այլ ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման և վերանորոգման ժամանակ:

Անվտանգ երթևեկովթյան համար մեծ նշանակություն ունի վարորդների մասնագիտական նախապատրաստական որակը, փորձը, գիտելիքները և հոգևոր հատկությունների զարգացումը, առաջին հերթին երիտասարդությանը հատուկ պոռթկունության, թեթևամտության և ներքին մղումայնության փոխարինումը պատասխանատվության զգացումով և խոհեմությամբ՝ ավելի հասուն տարիքում:

Աշխատանքային ստաժի ավելացման հետ միասին պակասում է պատահարների թիվը: Պատահարների մոտավորապես 70 %-ը կատարվում է այն վարորդների հետ, որոնց աշխատանքային ստաժը չի գերազանցում 3 տարուց: 10—12 տարի աշխատանքային ստաժի դեպքում վթարի են ենթարկվել ընդամենը 2 % վարորդներ, իսկ ավելի մեծ աշխատանքային ստաժի դեպքում այդ թիվը ավելի պակաս է:

Վարորդների նշանակալի մասը, որոնց տարիքն անցնում է 50-ից, թողնում են իրենց մասնագիտությունը: Դա բացատըրվում է նրանով, որ տարեց հասակում բավականին դժվար և պատասխանատու աշխատանքը ավտոմեքենայի վրա, դրա հետ միասին հաճախակի տանից հեռու գտնվելը սկսում է ծանրաբեռնել վարորդին:

Վարորդը կյանքում բանի անգամ կարող է ընկնել նախապարհարանսպորտային պատահարի մեջ: Սովետական և արտասահմանյան գիտնականների տվյալներում ժամանակակից բեռնվածության շարժման արագության պայմաններում վարորդը ավտոմեքենան օրական վարելով 12—14 ժամ, մոտ 70 կմ/ժամ արագությամբ, միջին վիճակագրության տվյալներով ճանապարհային պատահարից կարող է մահանալ 50 տարին մեկ անգամ:

Բայց քանի որ շատ քիչ մարդիկ են, նույնիսկ մասնագիտացված վարորդները, ավտոմեքենան վարում 50 տարի, ապա այդպիսի մոռայլ վիճակագրությունը վարորդների բացարձակ մեծամասնության հետ ոչ մի առնչություն չունի: Այդպիսի ծանր պատահարի մեջ կարելի չեն կնքել գլխավորապես կամ սեփական ծախորդության, կամ, որն ավելի հազ-

վաղեալ է պատահում, ուրիշների ոչ բավարար վարելու հետևանքով:

Իսկ վարորդը ավտոմեքենայի ինչ-որ որոշակի վազքի դեպքում քանի անգամ կարող է ընկնել ճանապարհատրանսպորտային պատահարի մեջ։ Այս հարցին կարելի է պատասխանել՝ 200 հազար կմ-ում՝ մեկ անգամ։ Ըստ միջին վիճակագրության, յուրաքանչյուր 360—400 հազար կմ հետո վարորդը կընկնի ճանապարհատրանսպորտային պատահարի մեջ, որի մասնակիցներից մեկը պետք է վիրավորվի, իսկ յուրաքանչյուր 13—15 միլիոն կմ վազքից հետո այն կավարտվի մահվամբ։

Բերված թվերը շեն վկայում, թե կյանքում յուրաքանչյուր վարորդի սպասվում են անախորժություններ։ Ավտոմեքենայով հազվագյուտ և ոչ երկարատև ուղևորվող մի շարք վարորդներ, մեկ անգամ չեն, որ վթարի են ենթարկվում։ Ուրիշներն անցնում են միլիոնավոր կիլոմետրեր և մնում հաջողակ՝ ոչ մի անգամ շեն դառնում ճանապարհատրանսպորտային պատահարների մասնակիցներ։ Ընդհանրապես վարորդների մոտ 25 %-ը քոլորովին շեն ընկնում ճանապարհատրանսպորտային պատահարների մեջ։

Վարորդների հոգեբանական պատասխանատվությունը։ Ցանկացած նորմալ մարդ այրվող լուցկին շի մոտեցնի իր կամ զրուցակցի դեմքին, շի ձգտի կառամատուցից որևէ մեկին հրել սլացող գնացքի անխվների տակ, բայց միևնույն ժամանակ նստելով ավտոմեքենայի դեկին, նա երթեմն մոռանում է, որ իր ձեռքում գտնվում է առավելագույն վտանգի մի միջոց, ինչպես բնութագրվում է ավտոմեքենան իրավաբանական գրականության մեջ։

Շատերը կարծում են, որ ճանապարհատրանսպորտային պատահարները պատահականություն են և այն կանխել չի կարելի։ Այդ կարծիքը սխալ է։ Քննարկելով առանձին դեպքեր, համարյա միշտ կարելի է բերել անվիճելի ապացույցներ այն մասին, որ վարորդը մի որևէ սխալ է թույլ տվել։ Եթե նա լիներ ավելի ուշադիր և հաշվի առներ ճանապարհատրանսպորտային պատահարի առաջացման բոլոր հնարավորությունները, այսինքն, չմոռանար ենթադրվող վտանգը, ապա ժամանակին ձեռք առնված միջոցներով կարելի կլիներ

Կանխել վտանգը: Բայց դեռևս, դժբախտաբար, քիչ վարորդներ կան, որոնք կարող են ավտոմեքենա վարելու իրենց հնագործությունները ինքնաքննադատորեն գնահատել:

Գոյություն ունի այն կարծիքը, որ փորձառու վարորդներն ավտոմեքենա վարելու և երթևեկության անվտանգ ոեժիմ ընտրելու օպերացիաների մեծ մասը կատարում են առանց մտածելու: Դա ճիշտ չէ: Պարզապես փորձառու վայրորդները չեն մտածում միօրինակ իրադրությունների մասին, ավելի ճիշտ ուշադրություն չեն դարձնում վարման հասարակ պարագաների վրա (այլ ավտոմեքենա հայտնվելիս արգելակել, ղեկը պտտե՞լ, թե ոչ), այլ լուծում են ավելի հեռու նշանառության խնդիրներ: Ակսնակը մտածում է տվյալ քայլի մասին, իսկ գրումայստերը պարտիան տեսնում է մի քանի քայլ առաջ:

Պատկառելի ստած ունեցող շատ վարորդներ նշում են, որ Մոսկվայում տարեցտարի երթևեկելը դառնում է ավելի դժվար: Միևնույն ժամանակ ավտոմեքենաների պարկը և երթևեկության ինտենսիվությունը զգալիորեն մեծացել է, իսկ մեկ մեքենային կամ մեկ կիլոմետր վազքին ընկնող ճանապարհատրանսպորտային պատահարների հարաբերական քանակը կրճատվել է: Փորձենք պարզաբանել, թե դա ինչի հետ է կապված: 25 տարի առաջ վարորդները ճանապարհային իրադրությունը հասկանում էին զգալիորեն ավելի վատ: Այսպես, վարորդն անպայման ընկնում էր վտանգավոր իրադրության, իսկ հաճախ նաև ճանապարհատրանսպորտային պատահարի մեջ նույնիսկ երթևեկության սովորական ոեժիմի փոքր փոփոխության դեպքում: Բայց 25 տարի առաջ վարորդն ավտոմեքենայով անցնում էր օրը միջին հաշվով 16 կմ ժամում $40-60$ կմ արագությամբ, այդ ընթացքում հանդիպելով $50-60$ ավտոմեքենայի: Ժամանակակից պայմանները մեզ առաջադրում են այնպիսի երթևեկության ոեժիմ, որի դեպքում վարորդն ավտոմեքենայով անցնում է օրական միջին հաշվով 42 կմ և 2 րոպեի ընթացքում 1 կմ վազքում (60 կմ/ժամ արագության դեպքում) նա հանդիպում է 100 ավտոմեքենայի, շխոսելով արդեն համընթաց ավտոմեքենաների մասին, որոնք առջևից և ետևից գնում են 5 մետր հեռավորությամբ: Բացի այդ, մեկ կիլոմետրում ընկնում է վթա-

րային իրադրությունների մեջ (որոնք 25 տարի առաջ անխուսափելիորեն հանգեցնում էին ճանապարհատրանսպորտային պատահարի) 2-ից 70 անգամ, իսկ ճանապարհատրանսպորտային պատահար տեղի չի ունենում։ Դա կարելի է բացատրել միայն վարորդների վարպետության բարձրացմամբ, նրանց տեխնիկական ու հանրակրթական մակարդակի աճով, ավտոմոբիլիզացման (մոտորացման) մակարդակի մեծացմամբ։

Բայց վարպետության աճը, դժբախտաբար, դեռևս չի կարող փոխատուցել այն պայմանները, որոնք ստեղծում է անընդհատ բարդացող ճանապարհային երթևեկությունը։ Երթևեկության բարդացման աստիճանը առաջ է անցնում վարպետության աճից, այդ պատճառով էլ ճանապարհատրանսպորտային պատահարների բացարձակ քանակը ավտոճանապարհներում աճում է, և եթե նախկինում տարբեր տեսակի ճանապարհատրանսպորտային պատահարներն առաջանում էին վարորդների մասնագիտական անհմտությունից, ապա այժմ այն հաճախ տեղի է ունենում անկարգապահության հետևանքով։

ԱՆՓՈՒԹՈՒԹՅՈՒՆ, ԲԵ՛ ԱՆՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ճանապարհատրանսպորտային պատահարը վերլուծելիս հաճախ որպես դրանց պատճառ նշվում է անուշադրությունը կամ երթևեկության սահմանված արագության գերազանցումը։ Բնականաբար, յուրաքանչյուր վարորդ պետք է իմանա, թե ինչ է նշանակում անուշադրություն, ցրվածություն, անփութություն, անբարեխղճություն, անթույլատրելի արագություն և այլն։

Ցրված ուշադրությունը և անուշադրությունը միշտ չեն, որ ձեր կյանքում, հատկապես վարորդական գործում, ունենում է միևնույն մասնագիտական նշանակությունը։ Հենց որ վարորդը սկսում է վարել ավտոմեքենան, պետք է անմիջապես բացառի ամեն տեսակի անփութություն և անուշադրություն։ Ցրված ուշադրությունը (բնածին, հիվանդության, հոգնածության պատճառով) կարող է լինել բոլորի մոտ, բայց * եթե դուք ավտոմեքենան վարելիս գգաք որ ի վիճակի չեք կենտ-

բոնացնել ձեր ուշադրությունը, ապա հրաժարվեք վարորդական մասնադիտությունից, իսկ եթե դա ձեր մոտ ժամանակավոր երևույթ է, ապա հանգստացեք։

Կարելի է արդյոք ուշադրությունը շեղել ավտոմեքենան վարելիս։ Ոչ միայն կարելի է, այլ նույնիսկ անհրաժեշտ է։ Բայց ուշադրությունը շեղել ոչ թե մեկ ժամով, այլ կարողանալ այն փոխադրել մի առարկայից մյուսին։

Անուշադրության օրինակ։ Վարորդը նոր է դուրս եկել գիծ։ Նա լավ հանգստացել է, իրեն զգում է հրաշալի, իր «կոլգան» վարում է բազմաշարք բանուկ մասով, փողոցի բաժանարար գոտու մոտով։ Նույն գոտով առջևից գնում է «Ժիգուլին»։ Մոտենալով հերթական խաշմերուկին, մեր վարորդը նկատում է, որ լուսացույցի կանաչ լույսը վառվում է, իսկ առջևում շարժվող «Ժիգուլին» արդեն համարյա խաշմերուկի գոտում է և այդ կանաչ ազդանշանով իր «կոլգայի» անցումը ապահովված է։ Այդ ժամանակ նա նայում է ձախ։ Այնուհետև աջ։ Եվ հանկարծ հարված…

Ցնցելով գլուխը և աշխատելով հասկանալ ինչումն է բանը, նա տեսնում է, որ իր առջևում, ուղղվելով դեպի ձախ մայթի կողմը, բավականին արագ, կարծես առանց զեկավարման, գնում է «Ժիգուլին»։ Եվ դա իրոք այդպես էր։ Այն ժամանակ, երբ մեր վարորդը նայում է իր աջ և ձախ կողմերը, «Ժիգուլին» արգելակում է, պատրաստվելով կատարել ձախ շրջադարձ։ Իսկ «Կոլգայի» վարորդը դա չնախագուշակեց և մտածեց, որ իր շարժման գոտին խաշմերուկում ազատ կլինի։ Այդ նույն ժամանակ «Ժիգուլիի» վարորդը միացրել էր ձախ շրջադարձի ցուցիչը, արգելակել և մտնելով խաշմերուկ, կանգ է առել, ավտոմեքենայի առջևի անիվները թեքելով մի քիչ ձախ։ Մոտավորապես հաշվելով, որ հանդիպակաց երթևեկությունը կշարունակվի 35—40 վրկ, նա իրերի արկղում ինչ որ առարկա է փնտրել։

Եվ հանկարծ հարված։ «Ժիգուլիի» վարորդը պառկած է նստարանին։ Զգտելով հասկանալ, թե բանն ինչումն է, նա տեսնում է, որ իր ավտոմեքենան արագ շարժվում է դեպի հանդիպակաց երթևեկության գոտին, ուղղվելով դեպի մայթը։ Նույնիսկ այդպես պառկած դրության մեջ նա սեղմում է արգելակման ոտնակը։ Ավտոմեքենան կանգ է առնում,

բայց մի փոքր ուշ՝ Երկու արկղ և վաճառասեղանից թափած խաղողը ընկած է կապոտի վրա:

Իսկ «Վոլգա՞ն»։ Այն կանգ է առնում, անցնելով համարյա ամբողջ խաշմերուկը։ Նրա վարորդը վճարում է խաղողի և «Ժիգովիի» վերանորոգման համար։ Ահա անուշադրության դինը ճանապարհի վրա։ Իսկ դա միայն անուշադրություն է։ Մեր կարծիքով դա նաև անփութություն է։ Վարորդը ծրագրել էր ավտոմեքենայի շարժման իրադրության զարգացումը, բայց չի բարեհաճել հսկելու ամբողջ «Ճրագիրը», հաշվելով, որ ինքը իր ունեցած փորձով երբեք չի սխալվի այդպիսի պարզ իրադրություններում։

Դոյտիուն ունեն անփութության նաև այլ տեսակներ՝ անժամանակ ու շտապ որոշման ընդունում, երբեմն իրադրության վերլուծության անգրագետ մոտեցում, դրա հետեւանքով էլ տեղի է ունենում ավտոմեքենայի վարման մեթոդի սխալ ընտրություն ըստ ընթացքի և պլանում։ Անփութության հասկացողությունը իր մեջ մասնակիորեն ընդգրկում է նաև անուշադրությունը։

Որքան կարելի է անուշադիր լինել։ Անուշադրությունը կարելի է շափել մետրերով, վայրկյաններով, վախի աստիճանով և ճանապարհատրանապորտային պատահարների քանակով։ Յուրաքանչյուր վարորդ կարող է անուշադիր լինել միայն այնքանով, որքանով անհրաժեշտ է, որպեսզի հասկանա, թե ինչ պետք է տեղի ունենա առջևում, ետևում, աշ և ձախ կողմերում և ոչ միայն հասկանալ, այլև անհրաժեշտ ձեռք արձագանքել ծագող հնարավոր վտանգներին։ Անուշադրության տևողությունը շարժման արագությունը մեծացնելիս պետք է փոքրանա խորանարդային կախվածությամբ։ Եթե արագությունը մեծացել է 2 անգամ, անուշադրությունը 8 անգամ փոքրացրեք, արագությունը մեծացել է 4 անգամ, անուշադրությունը պետք է փոքրացնել 64 անգամ։

Այսուհանդերձ ինչու 64 անգամ։

Արգելակման ուղին քառակուսային կախման մեջ է գրանցվում արգելակման սկզբնական արագությունից։ Արագությունը մեծանում է 2 անգամ, արգելակման ուղին աճում է 4 անգամ, արագությունը 4 անգամ, արգելակման ուղին՝ 16

անգամ։ Արգելակման ուղին 16 անգամ ավելանալիս ինչու ուշադրությունը պետք է մեծանա 64 անգամ։ Այստեղ անհրաժեշտ է որոշ շափով մանրամասն կանգ առնել։ Բայց սկզբում պատասխանեք այսպիսի մի հարցի. որն է աշխարհում ամենաարագը, ո՞րը ճիշտ է՝ միտքը։ Միտքն առաջ է անցնում մեր բոլոր գործողություններից։ Իսկ տվյալ դեպքում միտքը ապահովում է ձեր անվտանգությունը։

Ուշադրությունը սնունդ է տալիս մտքին։ Որքան բարձր է ուշադրությունը, այնքան մեր ուղեղն արագ է հրամաններ տալիս, որոնք ճիշտ կատարելու դեպքում երբեք վթարի չեն հանգեցնի։

Վարորդի գործունեությունը հիմնականում բաղկացած է չորս էլեմենտից։ Ինֆորմացիայի ընդունում. դրա մշակում, այսինքն վտանգի կամ անվտանգության մակարդակի որոշում, իրադրության կանխատեսում, առավել անվտանգ որոշման մշակում և ընդունում, ընդունված որոշման գործնական կիրառում։

Կարելի է տիրապետել էլեկտրոնային հաշվիչ մեքենաների արագ գործողության կարողությունը, բայց ընդունած որոշման դանդաղ կատարման պատճառով ընկնել ամենահսկարակ ճանապարհատրանսպորտային պատահարների մեջ, քանի որ այդ դեպքում, ինչպես ցույց են տալիս գիտական հետազոտությունները, պահանջվում է ապահովել ոչ միայն փոքր արգելակման ուղի, այլև ոչ մեծ կանգառման ճանապարհ։ Արգելակման ուղին դեռ կանգառման ուղու մի մասն է։ Եվ այդ չորս էլեմենտները բազմապատկած 16-ով, ստանում ենք 64։ Բնականաբար, դա սիմվոլիկ պատկերացում է, բայց հաստատվում է գործնական կյանքում։

Ի՞նչ է նշանակում բովացնել ուշադրությունը։ Ամբողջ գիտատեխնիկական և հանրամատչելի գրականության մեջ փորձված վարորդին վերագրվում է մշտական մտահավաքություն։ Ի՞նչ է նշանակում մտահավաք կամ «մտացրիվ» լինել. կռահել բավականին դժվար է։ Մեկ «մտացրիվ» երկու մտահավաքից հաճախ երկու անգամ ավելի արագ է ամեն ինչ կատարում։ 0,1 վայրկյանով ուշադրության թուլացումը հավասարագոր է 0,6—0,8 վրե ձեռքերով կամ ոտքերով մի որևէ շարժում շկատարելուն։

Φորձված վարորդները երբեք ուշադրության թուլացման գգացում չեն ունենում։ Նրանք միշտ լավ վիճակում են։ Բայց որոշ պայմաններում լինում են պահեր, որոնք վարորդին հնարավորություն են տալիս ուշադրությունը փոխադրել այլ բանի, իր գործադրական (օպերատիվ) հիշողությունում թողնելով մոտակա 2—3 վայրկյանում ավտոմեքենայի հետագա շարժման և վարման ամբողջ պլանը։ Փորձված վարորդները երբեմն ուշադրությունը 7—12 վայրկյան փոխադրում են այլ բանի վրա, գլուխը նույնիսկ չթեքելով ճանապարհի կողմը։ Դա կարելի է անել միայն իր ավտոմեքենան լավ գիտենալու, ձեռքերի ճիշտ գործողության դեպքում, որոնք «ղեկից» զգում են, թե ավտոմեքենան դուրս է գալիս ճանապարհից կամ ոչ։

Կարող են առարկել, թե չի կարող պատահել, որ ավտոմեքենան 10 վրկ շարժվի առանց զեկավարման։ Ոչ միայն 10, այլ 20 և 30 վրկ կարող է նման ձևով շկառավարվող ավտոմեքենան (թվում է թե ուշադրության լրիվ բացակայության դեպքում) ցանկացած արագությամբ անվտանգ շարժվել։ Միայն պետք է հիշել, որ անուշադրությունը և զեկավարման բացակայությունը տվյալ դեպքում հոմանիշներ չեն։ Ավտոմեքենայի զեկավարման բացակայությունը չի նշանակում, որ վարորդը այդպիսի դեպքերում անուշադիր է։ Պարզապես նա իր գիտակցության մեջ ծրագրավորել է ճանապարհի այդ հատվածը և այժմ հսկում է այն առանց նայելու (ոչ թե տեսողությամբ, այլ զգացողության այլ օրգաններով):

ՄԻ ՓՈՔՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոգեբանական խոշրնդությունը: Լինում են ակնթարթներ, երբ վարորդը գիտակցում է, որ կորցրել է ավտոմեքենայի ղեկավարումը, որ այն իրեն չի ենթարկվում, բայց կանգ չի առնում, թեպետ անիվները ուղեկապված են։ Առջևում կանգնած ավտոմեքենայի բուժերն անգթորեն մոտենում է և դուք ոչ մի կերպ չեք կարողանում կանգնեցնել ձեր ավտոմեքենան։ Կամ մեկ ուրիշ դեպք։ Ավտոմեքենան ոլորանից դուրս չի գալիս դեպի ուղղագիծ տեղամաս, այլ կողքով ցնցվելով, սլանում է դեպի բանուկ մասի եզրը, որին հաջորդում է զառիթափր։

Առաջին դեպքում մաշված ունիեքսին հակառակ անհրաժեշտ է արգելակել՝ անխվները և աշխատել շրջանցել արգելքը՝ Երկրորդ դեպքում նույնպես պետք է հաղթահարել արգելակեր ոտնակը սեղմելու անողոք ցանկությունը և կառավարման սովորական ալգորիթմը՝ ղեկանիվի պտտեցումը դեպի թեքման կողմը, Բնդհակառակը, անհրաժեշտ է ղեկանիվը պտտել թեքման հակառակ կողմը և երբեմն դրուելի կառավարման ոտնակը սեղմել մինչև վերջ:

Ծովորական դեպք: «Ինձ հետ դա չի պատահի», — մտածում են վարորդների մեծամասնությունը, լսելով ճանապարհատրանսպորտային պատահարների մասին պատմություններ կամ ճամփեղրին տեսնելով զարդված ավտոմեքենա: Առողջ լավատեսության այդ զգացումը նրանց թույլ է տալիս վստահորեն վարել ավտոմեքենան: Ճշմարիտ է, ոմանք անվերապահ հավատալով իրենց ռեակցիայի արագությանը, նոր ավտոմեքենայի հուսալիությանը, վերջապես, պարզապես հաջողությանը, կորցնում են ողջամտությունը, հաշվելով, որ կարող են բարեհաջող դուրս գալ ոչ միայն բարդ, այլև վտանգավոր դրությունից: Սակայն պետք չէ մոռանալ, որ լինում են դեպքեր, երբ նույնիսկ շատ լավ ռեակցիայի տիրապետող լավ մարդկած մարդիկ ի վիճակի շեն գլուխ հանել իրադրությունից: Ահա, օրինակ, թե մեկ անգամ ինչպիսի դեպք է պատահել, հայտնի բռնցքամարտիկ, ՍՍՀՄ բազմակի շեմպիոն և միջազգային մրցաշարերի մրցանակակիր Ալեքսանդր Շոցիկասի հետ, որի մասին գրվել է «Նեղելիա» շաբաթաթերթում: «Այդ օրը (միգուցե կյանքում առաջին անգամ) նա հասկացավ, թե ինչ է նշանակում զգալ սեփական անզորությունը: Նա շտապում էր օդանավակայան, ժամանելու էր ընկերը՝ նախկինում հայտնի բռնցկամարտիկը և «Նեղելիայի» թղթակիցը: Նրանք ուզում էին խոսել «Երկրի առաջին ձեռնոց» մրցախաղի մասին: Օրը տիպիկ մերձբալթյան էր, ամպամած, թաց ձյունով, անձրևով զուգակցված: Ճանապարհը սառցակարված էր և նրա «Մոսկվից» մի կողմ թեքվեց: Սեղմելով ղեկը, նա աշխատում էր մեքենան պահել խճուղու վրա. Նրան արդեն պտտում և նետում էր մի կողմից դեպի մյուս կողմը, ինչպես բաղնիքի հատակին ընկած մի կտոր օճառը: Բայց ղեկավարմանը սովոր խելացի և

ուժեղ բռնցքամարտիկի ձեռքերը ոչինչ չկարողացան անել։ Եվ նրանց այդ անզորությունը, ինչ որ մի բան փոխելու, իր հետ կատարվող դժբախտության միջամտելու անհնարինությունը ցնցեց և զարմացրեց նրան։ «Վերջ», — մտածեց Շոցիկասը, երբ խճուղում «Մուկվիչը» հերթական շրջանը գործեց և հանկարծ գառիվայրից նետվեց ներքեւ։

Ճշմարիտ է, Շոցիկասի բախտը բերեց։ Նրա ավտոմեքենան թաղվեց ձնակույտի մեջ և բռնցքամարտիկը հրաշքով մնաց ոչ միայն կենդանի, այլ նույնիսկ անվնաս։

Կանգ ա՛ն, ակնքարբ։ Տագնապալի իրադրություններում առաջանում է ժամանակի «կրկնակի» յուրօրինակ հաշվարկ։ Յուրաքանչյուր վայրկյանը ձեռք է բերում մոռական ունակություն։ Նման իրավիճակում մարդը որքան շատ բան է հասցնում կատարել։ Ժամանակը կարծես խթանում է նրան։ Եվ այստեղ հատկապես մեծանում է կամքի դերը, որի շնորհիվ մարդը բառացիորեն ընդունում է կայծակնային որոշումներ և ակնթարթորեն կատարում դրանք։

Սակայն որոշ վարորդներ զգալով ժամանակի պակաս, կորցնում են սառնասրությունը, շրջահայացությունը և վստահությունը։ Անել ինչ հնարավոր է և որքան կարելի է արագ՝ այդպիսի վիճակի մեջ ընկած վարորդի առաջին ցանկությունն է։ Ուղեղում առաջանում են մտքերի հեղեղ, վարորդը ձգտում է ընդունել որոշում, իսկ ժամանակը թույում է, իրադրությունը բարդանում, առաջանում շփոթվածություն, ինչ որ բան կատարելու սուր զգացողությունը չի լքում նրան և նա լավագույն տարբերակի փոխարեն այդ պահին կատարում է մտքով անցածը։ Իսկ հետո արդարանում, թե իբր քննել է բոլոր տարբերակները և լավագույնը չի կարողացել ընտրել, իսկ երբ հիշել է անհրաժեշտ տարբերակը կամ գտել լուծումը, այլևս ժամանակը չի բավականացրել։

Սովորական, թե՞ անսովոր։ Իրոք, տագնապալի իրադրությունում անսովոր ոչինչ չկա։ Տագնապալի իրադրությունը դա սովորական երեսույթ է անսովոր պայմաններում կամ սովորական երեսույթ՝ անսովոր հաջորդականությամբ։ Իսկ եթե դիտես, թե ինչպես կարելի է պայքարել դրա դեմ և առավել ես, եթե կարողանում ես դա կատարել, ապա այն ձեզ համար տագնապալի չէ և կարող է լինել նույնիսկ ոչ բարդ։

Այն պարզապես դժվարին է, քան սովորական իրադրությունը։ Հատկապես այդ սկզբունքի անսովոր պայմաններում գտնել սովորական տարրեր, որոնց վրա է հիմնված վարորդների ուսուցումը բարդ և վտանգավոր իրադրություններում։

Եթե դուք վտանգավոր իրադրությունում հաղթահարեք վլախի հոգեբանական արգելապատը, ապա վստահության և անվտանգ երթևեկության տեսանկյունից լավագույն ձեռվ կարող եք օգտագործել նրանում եղած հնարավորությունները։ Այն գայրկյանները, որոնք անցնում են սկսած անելանների վիճակի գիտակցման պահից մինչև ճանապարհատրանսպորտային պատահարի տեղի ունենալը կամ մահացու վտանգից խուսափելը, մարդու աշքի առջևով երբեմն անցնում է ամբողջ կյանքը։ Մարդու մոտ վախը առաջանում է, եթե ժամանակը չի բավականացնում ամբողջ ինֆորմացիայի մշակման և ընդունված որոշման իրագործման համար։

Ուղեղը մինչև մի որոշակի պահ շատ հստակ է գործում, աշխատելով հիշողության մեջ եղած բազմաթիվ տարբերակներից գտնել ամենաօգտակարը։ Այդ պահին ուշադրությունը կենտրոնացված է միայն վտանգավոր իրադրության վրա։ Բայց ահա վարորդն զգում է, որ բարոյապես ընկճվել է, իսկ դա շատ վտանգավոր է։ Ընդհանրապես դա պատահում է այն ժամանակ, եթե մարդը պատրաստված չէ կամ չի կարող ինչ-որ բան անել, կամ եթե անհրաժեշտ է կատարել որևէ սովորական գործողություն, բայց շատ կարճ, անսովոր կարճ ժամանակամիջոցում։

«Սովորական» վարորդը ցանկացած վտանգավոր իրադրությունում անպայման կաշխատեր մնալ ճանապարհին և բնազդաբար կսեղմեր արգելակի ոտնակին։ Նա այդպես կվարվեր ոչ թե դիտավորյալ, այլ մեքենայորեն։ Եվ այդպես կվարվի միշտ, չնայած դա երբեմն բացարձակապես սխալ է։ Այդպես չպետք է լինի։ Անհրաժեշտ է աստիճանաբար ոեակցիան վարժեցնել վտանգավոր իրադրության դեմ, իրեն բարոյապես պատրաստել վտանգավոր իրադրություն առաջանալիս գործելու և մեքենայաբար, և ճիշտ։

Փորձառու վարորդները ձեռք են բերում հմտություն և որոշակի փուլում նրանց գործողությունները դառնում են մե-

քենայաբար։ Նրանք դեն են նետում ճանապարհային պայմանների վերլուծության արդեն ստուգված հուսալի մեթոդները և դրանք փոխարինում նորով, նախօրոք ներքնապես պատրաստվելով այն բարդ իրադրություններին, որոնց մեջ կարող են ընկնել։ Ոչ թե վտանգավոր իրադրությունը պետք է վարորդին հանկարծակի ստիպի, այլ նա պետք է կարողանա փնտրել և գտնել երթևեկության պայմանները։ Հանգամանքները չպետք է մեզանից ուժեղ լինեն։

Նյարդային բջիջները չեն վերականգնվում։ Անցնում է 10—15 տարի և վարորդը ձեռք է բերում ցանկացած մանկը կատարելու վարպետություն և ճանապարհին բոլոր իրադրություններում վտանգի չափի ըմբռնման հասունություն, Սակայն վարորդների մեծամասնությանը, հատկապէ ։ Ի շանց, ովքեր գոնե մեկ անգամ ընկել են ծանր պատահարի մեջ, դա հեշտ չէ տրվում։

Շատ փորձառու վարորդներ իրենց և ուրիշների փոխարեն մտքում պատկերացնելով իրադրության զարգացման ընթացքը, ընտրում են ամենաանվտանգ երթևեկության հետագիծը և արագությունը։ Դա միշտ նրանց բավականություն է պատճառում։ Բայց երբեմն հանդիպում են իրադրություններ, երբ վարորդը երևակայության անվտանգությանը ամբողջովին վստահ չէ կամ վերջին պահին իրադրությունն այնպես է փոխվում, որ վարորդից արդեն կախված չէ։ Զեզնից յուրաքանչյուրը, անկասկած, կարող է հիշել շատ դեպքեր, երբ բարեհաջող դուրս գալով վտանգավոր գոտուց, դժվարությամբ շունչ է քաշել և սրբել սառը քրտինքը։

Նման դյուրազգաց վարվելաձեր (հոգեբանական ստրեսը) հաճախ լինում է փորձառու վարորդների մոտ (որոնք իրեք ամեն ինչ գիտեն), երբ նրանք շարժման ռեժիմն ընտրում են ոչ բավականաշափ հուսալի տեղով կամ վտանգավոր իրադրության պայմաններում, չիցեցնելով արագությունը։ Բնականաբար, այդ դեպքում մեծանում է համարձակության աստիճանը և վարորդը դրա համար վարձահատուց է լինում իր նյարդերով։

Շունչը պահելով, ամբողջովին զգաստ նա սրբնթաց անցնում է այդ տեղը և այնուհետև թեթևացած շունչ քաշում։ Եթե այդպիսի ռեժիմում ինչ-որ մեկը խանգարում է (նույ-

Նիսկ ակնարկով), ապա վարորդի շունչը կտրվում է, իսկ պակաս փորձառուները կարծես սկսում են բերանով օդ կլանել, կատարելով ներշնչման անհաջող փորձեր։

Նախ, պետք չէ վախենալ, թե դուք արդեն իրազործում եք ձեր կողմից ընտրած շարժման ռեժիմը։ Զէ՞ որ կարելի է ինչ-որ շտկում մտցնել։ Համենայնդեպս ձեր շարժման գոտում որևէ ուրիշ ավտոմեքենա հայտնվելու պատճառով շարժե խանգարել ձեր շնչառության ռիթմը։

Ծրկրորդ, այդպիսի ստրեսից հետո ներշնչել պետք չէ։ Դա մարդու համար հակաբնական է։ Առավել լավ և օգտակար է կատարել լրիվ արտաշնչում և միայն դրանից հետո անցնել ներշնչման։

Շնչառության ռիթմը այս դեպքում կարգավորվում է բավականին արագ։ Արագ կանցնի նաև ձեռքերի և ոտքերի թրմրածությունը, իսկ կարող է ընդհանրապես չլինել, դուք այն կկոտրեք ձեր հավասարաշափ շնչառությամբ։

Երրորդ, ավելի լավ է երթևեկության ռեժիմը այնպես ընտրել, որպեսզի ձեր մոտ չինի շնչառության ոչ մի արգելակում։ Միայն այդպիսի դեպքում վարորդի մասնագիտությունը ձեզ համար երջանկություն կլինի։

Եթե ցանկացած ամենափոքր իրադրությունը առաջ է բերում վարորդի շնչառական ուղիների կծկում, ապա դա նշանակում է, որ նրան անհրաժեշտ է կամ լրջորեն հանգստանալ, կամ ընդհանրապես թողնել վարորդական մասնագիտությունը։ Հիշենք, որ նյարդային բջիջները չեն վերականգնվում։

Վախի աշխերը խոշոր են։ Ենթադրենք, որ դուք ընկել եք վտանգավոր իրադրության մեջ։ Հարց է ծագում. ի՞նչ հերթականությամբ պետք է օգտվել ավտոմեքենայի դեկավարման միջոցներից։ Որոշ մարդկանց համար վտանգավոր իրադրությունից «դուքս» գալը նշանակում է սեղմել արգելակի ոտնակը, թեքել ղեկանիվը։

Դա դիլետանտի մոտեցում է։ Հաճախ ավելի լավ է թարթել լապտերի լույսը, քան թե սեղմել արգելակի ոտնակը։

Թրինակ, դուք տեսնում եք, որ առջեռում կանգնած ավտոմեքենայի վարորդը («կանգ» գծի մոտ) միացրել է ետքնթաց

փոխանցումը և համառորեն ուղում է դիպչել ձեր ավտոմեքենային (համառ վարորդի եք հանդիպել): Մի վախեցեք: Ինչ որ կարող է պատահել, դրանից ավելի վատը չի լինի: Դրա համար պետք է ձեզ պատշաճ պահեք: Զայնային աղդանշանի կոճակին սեղմելով և հարվածը այդ ձայնով ընդունելու փոխարեն, դուք պետք է միացնեք ետընթաց փոխանցումը, և եթե ետևում ոչ ոք չկա, հեռանաք ետ շարժվող ավտոմեքենայից: Եթե ետևում ավտոմեքենա է կանգնած և նրա ու ձեր ավտոմեքենայի մեջ տարածություն կա, պետք է աշխատել հեռանալ այնպես, որպեսզի շվնասեք ոչ ձեր և ոչ էլ ետևում կանգնած ավտոմեքենան: Եթե ետևում տեղ չկա և ձեր վրա շարժվող ավտոմեքենան դեռևս հեռու է (մոտ երեք մետր), ապա անհրաժեշտ է «սլանալ» առաջ և անմիշապես դեպի ետ, առջևում շարժվող ավտոմեքենայի արագությունից մի քիչ պակաս արագությամբ: Այդ դեպքով հարվածի հետևանքը կլինի նվազագույն: Եթե դուք կանգնած եք խաշմերուկում, երրորդ կամ չորրորդ հերթում, ապա մի սպասեք, թե երբ ավտոմեքենաների խումբը կհասնի ձեզ: Աշխատեք զգուշացնել ետևում կանգնած ավտոմեքենաների վարորդներին և նրանց հետ միասին ետ շարժվել:

Գլուխ 3

ՃԱՆԱՊԱՐՀԸ ՊԱՀԱՆՁՈՒՄ Է ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ

Ճանապարհների խաշմերուկում: Բոլոր փորձառու վարորդները նախքան ավտոտնակից դուրս գալը մտովի «անցնում են» ամբողջ երթուղին: Իսկ ձեզ համար միգուցե առաջին անգամն է սպասվում հրապուրիչ մի ուղեսորություն, օրինակ Մուկվայից դեպի Ռիգա: Դուք ներողամտաբար ժպտում եք. ունեք «ՍՍՀՄ ավտոմոբիլային ճանապարհների ատլասը»: Բայց ատլասի ոչ նախաբանում և ոչ էլ վերջաբանում չի նշված, թե վարորդն ինչպես պետք է ընտրի ճանապարհը:

Օրինակ, Մոսկվայից Ռիգա կարելի է գնալ տարբեր ճանապարհներով. Լենինգրադյան, Մինսկյան խճուղով և այլն: Ընտրելով երթուղին, անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն ճանապարհի երկարությունը, այլև տարվա եղանակը, ճանապարհի վիճակը տարբեր շրջաններում: Եվ եթե օդերևութափանական հաղորդագրությունը, օրինակ, տեղեկացնում է, որ Վիշնեով Վոլոչկայի կամ Նովգորոդի շրջաններում մերկասառուց կամ մառախուղ է, ապա ավելի լավ է գնալ երկար երթուղով, մասնավորապես Մինսկյան խճուղով, և շնասած Մինսկ թեքվել աշ, դեպի Ռիգա: Եվ քանի որ ավտոմոբիլիստի համար «Հարյուր կիլոմետրը շրջերթ չէ, իսկ երկուհազորը՝ տարածություն չէ» ապա ճանապարհային նյարդային խանգարման պատճառով կորցրած 3 ժամը շիփորխարինի պատոմեքենայի մեկամսյա վերանորոգման հետ կապված նյարդային քայլայմանը կամ հիվանդանոցում պառկած վիճակում կյանքի մասին մտորումներ անելում:

Երթուղու ընտրման գործում, հատկապես եթե ուղևորությունը տուրիստական է, պակաս դեր չի խաղում կեալինգների, ավտոլցման, տեխնիկական սպասարկման կայանների, ոեստորանների ու սրճարանների, ինչպես նաև շրջապատի լանդշաֆտի առկայությունը:

Ուղում ենք ձեզ ցույց տալ, թե երթևեկության ախվտանգության տեսանկյունից որքան տարբեր են ճանապարհները: Այսպես, օրինակ, բոլոր ճանապարհատրանսպորտային պատահարների 34 %-ը կատարվում է հանրապետական, երկրամասային և մարզային, 10 %-ը՝ համապետական նշանակության ճանապարհներին, 10 %-ը՝ շրջանային և գյուղական, 5 %-ը՝ տեղական ճանապարհներին և այլն:

Անհրաժեշտ է նաև իմանալ, որ ճանապարհներին տարվա ընթացքում՝ ճանապարհատրանսպորտային պատահարների մեծ մասը կատարվում է չորեքշաբթի և ուրբաթ, իսկ ամենաքիշը՝ շաբաթ և կիրակի օրերին: Ամենավտանգավոր ամիսը մայիսն է: Հետաքրքիր է, որ ճանապարհատրանսպորտային պատահարների մեծ մասը կատարվում է ճանապարհի ուղիղ հատվածներում: Եղանակը ճանապարհատրանսպորտային պատահարների քանակի վրա հետևյալ ձևով է աղդում. 50 %-ը տեղի է ունենում պարզ, 20 %-ը մառախլա-

պատ, 10 %-ը՝ անձրևոտ, 10 %-ը՝ ամպամած, 4 %-ը ձյուն եղանակին, 1 %-ը մշուշապատ և այլ բարդ եղանակային պայմաններում։ Այդպիսով ճանապարհատրանսպորտային պատահարների մեծամասնությունը տեղի է ունենում երթևեկաւթյան համար բարենպաստ պայմաններում։


Երեկոյան ճանապարհորդելիս, դուք պետք է գիտենաք, որ օրվա մութ ժամանակ տեղի է ունենում բոլոր ճանապարհատրանսպորտային պատահարների 20 %-ը և քանի որ մութ ժամանակ երթևեկության ինտենսիվությունը կտրուկ կրճատվում է, ապա այդ թվերը արժանի են ուշադրության։ Այս բոլորը մի ընդունեք որպես խորհուրդ, թե անհրաժեշտ է ավտոմեքենաների ամբողջ հոսքը փոխադրել մարզային ճանապարհների վրա, երթևեկել միայն շաբաթ և կիրակի օրերին և մայիս ամսին խուսափել ուղևորությունից։ Այս թվերը բերված են, որպեսզի դուք գիտենաք, թե ճանապարհի վրա որտե՞ղ և ե՞րբ է անհրաժեշտ բարձրացնել գգոնությունը։

Ճանապարհի նման է գրքի։ Ճանապարհային երթևեկությունը կարելի է համեմատել գրքի ընթերցանության, երկար պատմություն լսելու կամ նկարների հերթափոխման հետ։ Ճանապարհին պետք է կարողանալ դիտել և անհրաժեշտ առարկաները նկատել։ Ավելի լավ է երթևեկել լուռ և նայել միայն առաջ, շխոսել և ուշադրությունը շշեղել ու շերկատել։ Կարողանալ տեսնել ամեն ինչ առջևում, ետևում և կողքերին՝ մեծ արվեստ է։ Բայց մի լարեք ուշադրությունը, հայացքը փոխադրեք ճանապարհի մի հատվածից դեպի մյուար։

Նկ. 1-ում ցույց է տրված վարորդի տեսանկյան փոքրացումը առջևում ճանապարհատրանսպորտային իրադրության բարդացման աճման հետ միասին։ Յ ճյուղավորումում կարենոր է Գ գոտու միջին մասի տեսանելիությունը։ Բայց միաժամանակ պետք է տեսնել և Ա և Գ գոտիներում չկա՞ն, արդյոք I և II փողոցներով եկող ավտոմեքենաներ։ Այնուհետև վարորդը պետք է տեսնի Դ գոտին 4 ուղանցման հատման տեղում, և նախօրոք նայի հեռուն՝ Դ գոտին, այսինքն պետք է տեսնել ամենուրեք ամեն ինչ, աշքեր ունենալ և՛ կողքից, և՛ ետևի կողմից։ Անհրաժեշտ է կարողանալ տեսնել ավտոմեքենաները, հետիւտներին, վարորդների ազդանշանները, ճանապարհային նշանները և նշագծերը ծածկույթի տեսակը և

վիճակը, կողային ճանապարհները և ճանապարհի եզրի շենքերի կառուցապատման գծերը:

Կարողացեք ճիշտ գնահատել ճանապարհային իրադրությունը: Փողոցում, որտեղ կանգնած են ավտոմեքենաները,



Նկ. 1. Կարողային տեսանկյան
փոքրացումը:

հետևեք, որպեսզի նրանք անսպասելի շշարժվեն կամ նրանց ձախ կողմի դռները շրացվեն: Եթե ավտոմեքենայում նստած վարորդը հանգիստ զբաղված է ընթերցանությամբ, դա ուրիշ է, քայց եթե դուք նկատել եք ձայնամարիչից դուրս եկող ծուխը և ձեռքի շարժում դեպի փոխանցումների տուփի լծակը: Եզեք զգույշ, քանի որ նա կարող է արագ դուրս գալ դեպի ճանապարհ, չնայելով ձեր կողմը և հայելու մեջ: Այս բոլորը այլ մարդկանց մտադրությունների մանր, քայց կարևոր արտահայտություններն են և դրանք պետք է տեսնել:

Հետևեք ձեր տեսողությանը, նրա սրությունը ստուգեցեք ամեն տարի: Բացի դրանից, կարևոր է նաև տեսողության ընդարձակությունը: Որոշ մարդիկ ունեն «թունելային» տեսողություն, այսինքն տեսնում են իրենց առջևի նեղ գոտին և ոչ թե շրջագծով, և որպեսզի կարողանան տեսնել, թե կողքին ի՞նչ է կատարվում, պետք է շրջեն գլուխը: Պետք է զարգացնել կողային տեսողությունը և կարողանալ, առանց գլուխը շրջելու, փոխադրել հայացքը: Ամբողջապես տեսնելու կարողությունը երթևեկությունը դարձնում է անվը-

ունեն «թունելային» տեսողություն, այսինքն տեսնում են իրենց առջևի նեղ գոտին և ոչ թե շրջագծով, և որպեսզի կարողանան տեսնել, թե կողքին ի՞նչ է կատարվում, պետք է շրջեն գլուխը: Պետք է զարգացնել կողային տեսողությունը և կարողանալ, առանց գլուխը շրջելու, փոխադրել հայացքը: Ամբողջապես տեսնելու կարողությունը երթևեկությունը դարձնում է անվը-

տանգ և հետաքրքիր։ Այս դեպքում բարձրանում է վարորդի տրամադրությունը։

Ճանապարհը տեսնելու և հասկանալու կարևորությունը պակաս կարևոր չէ, քան ավտոմեքենան վարել կարողանալը։ Այն անհրաժեշտ է զարգացնել նախօրոք, նույնիսկ դեռևս ավտոմեքենայի կամ ավտոբուսի ուղեր լինելիս։

Զեր տեղը ճանապարհին։ Սովորաբար այդ տեղը աջում է, և ոչ թե խրամառվում, և ոչ էլ առանցքային գծի մոտ։ Բանուկ մասում ավտոմեքենայի դիրքը կախված է ճանապարհից և երթևեկությունից, կայանած ավտոմեքենաներից, հետիւտներից, վազող երեխաներից։ Ավտոմեքենան հեռու պահեք մայթից, անցորդների բազմությունից։ Եթե ձեզ վազանցում են նեղ փողոցում, սեղմվեք մայթի եզրազարդին։ Բայց ինքներդ էլ սկսելով վազանցը, մի շտապեք հատել առանցքային գիծը։ Ավտոմեքենան թողնելով կայանման տեղում, աշխատեք որքան հնարավոր է շփակել բանուկ մասը, որպեսզի շխանգարեք ուրիշ, հատկապես բեռնատար ավտոմեքենաներին և ավտոբուսներին։ Միակողմանի երթևեկության փողոցներում արագությունը կարող է լինել բարձր, այդ պատճառով այդպիսի փողոցում վազանց սկսելիս եղեք ուշադիր, որպեսզի անհրաժեշտ շրջադարձի տեղը չանցնեք։

Գոտիական կարգապահություն։ Գոտիների նշագծումը ունի երկու առավելություն։ բանուկ մասի լայնությունը լավագույն ձևով օգտագործելու և տրանսպորտային միջոցների հոսքին ուղղություն տալու հնարավորություն է ընձեռում։ Բայց դա միայն այն դեպքում, եթե վարորդները պահպանում են նշագծումը։ Նշագծերի բացակայության դեպքում մտքով բանուկ մասը բաժանեք մոտավոր գոտիների և շարժվեք ձեր գոտուց մյուսը, ավտոմեքենան տարեք երթևեկության գոտու առանցքով և մի շտապեք զբաղեցնել եզրային ձախ գոտին։ Ընդհանուր կարգը այսպիսին է. պահպանեցեք «ճանապարհային երթևեկության կանոնները» և այդ դեպքում անսպասելի ռիսկ չի լինի։

Հաճախ լինում են դեպքեր, երբ պետք է վայրկյանի սրոշ մասի ընթացքում ընտրեք ձեր ճիշտ տեղը ճանապարհում։ Օրինակ, գուշ շարժվում եք քաղաքամերձ ճանապարհով,

ավտոմեքենաների շարասյան մեջ, ավելի քան 80 կմ/ժամ արագությամբ։ Առջևից ընթացող ավտոմեքենան կտրուկ արգելակում է, տեսնելով մյուսների համար հազրվ նկատելի դեպի ձախ վայրէջքը։ Ըստ որում, բնականաբար, նա զբաղեցնում է եռագոտի ճանապարհի միջին մասը, բայց նախօրոք մանկրման ազդանշան չի տվել։ Երկրորդ ավտոմեքենան հարվածում է կանգնող ավտոմեքենային, ինքը հարվածի հետևանքով մի փոքր թեքվում է և ավելի փակում աջակողմյան բանուկ մասը։ Աջ կողմում անցնելու համար մնում է ճանապարհի մի մասը և ճամփեզրը, որը բավական է միայն ձեր ավտոմեքենայի անցման համար։ Ետևից եկող ավտոմեքենայի վարորդները չեն կարող տեսնել այդ բոլորը, քանի որ ձեր ֆուրգոն ավտոմեքենայի մեծ թափքը ծածկել է ճանապարհի նշանակալի մասը։ Ի՞նչ անել։

Բանուկ մասը զբաղված է։ Հայտնի չէ, իսկված ավտոմեքենաներից որ ակնթարթին և որ կողմից դուրս կթոշեն մարդիկ։ Արգելակել, ձեր գոտու վրա մնալու համար, չի կարելի. արգելակման ճանապարհը ավելի կարճ է, քան մինչև առջևում կանգնած ավտոմեքենան եղած տարածությունը։ Շրջանցել նրանց նույնիսկ չի կարելի, քանի որ այդ դեպքում ձախ անիվները կշարժվեն ասֆալտի, իսկ աջերը ճամփեզրային հողածածկույթի վրայով։ Դա շատ վտանգավոր է, որովհետև այդ դեպքում արգելակելիս առաջանում է թեքող մոմենտ, որը կարող է շուր տալ ավտոմեքենան։

Այնուհանդերձ ի՞նչ անել։

Պետք է գնալ աջ և մի քանի անգամ արգելակի ոտնակով կարճատև միացնել «կանգ» ազդանշանը, առանց գործի դնելու արգելակը։ Միաժամանակ միացնել աջ շրջադարձի ցուցիչը։ Այնուհետև սեղմել ձայնային ազդանշանեւ հրաժարական միացնել հեռահար լույսերը և մեծացնել արագությունը, աշխատելով որքան կարելի է արագ անցնել ճանապարհի ազատ մասով (կիսով չափ ասֆալտե ծածկույթով և կիսով չափ ճամփեզրով)։ Ինչո՞ւ արագ։ Միայն նրա համար, որպեսզի դուրս գալ վտանգավոր տագնապալի գոտուց և չդառնալ ճանապարհային պատահարի երրորդ մասնակիցը, ձայնային ազդանշանը և միացրած լույսը պետք է զգաստացնեն մարդկանց, որոնք հավանաբար պետք է աշխատեն դուրս թռչել

շարդված ավտոմեքենաներից և առանց ուշադրություն դարձնելու ընդհանուր ճանապարհային իրադրության վրա, նայեն, թե ավտոմեքենաների որ մասն է վնասվել։ Այդպիսի մաներով դուք կօգնեք նաև ետևից շարժվող ավտոմեքենաների վարորդներին տեսնելու անվտանգ անցնելու համար սողանցքը։

Արագընթաց հանապարհին։ Ավտոմայրուղիներով երթևեկելիս արագությունը անհամեմատ շատ բարձր է և անվտանգ արագ երթևեկելու համար պահանջվում է բացարձակ առողջ և լավ հանգստացած վարորդ, հուսալի դողերով հուսալի ավտոմեքենա և գիտելիքներ երթևեկության առանձնահատկությունների մասին։

Ավտոմայրուղիներում անվտանգ երթևեկության համար գլխավորը հոսանքի ընդհանուր արագության միատարրությունն և գոտիական խիմու կարգապահությունն է գումարած մաներման սահոնությունը և ժամանակի զգալի պաշարով արգելակումը։

Բարձր արագությամբ և մեծ հեռավորություն, գլխավորակես երկու քաղաքների միջև, ուղևորությունից առաջ, պետք է լրիվ լցավորել ավտոմեքենայի համապատասխան տարրողությունները, համապատասխան քանակի օդ ներմղել դողերի մեջ, որպեսզի այդ շանել ճանապարհին և բացառել ամեն տեսակի կանգառները և ավտոմեքենայից իջնելը։ Դուքս գալով ավտոմայրուղի, պետք է որոշ ժամանակ գնալ հոսանքի աջ կողմով, շվազանցել ոչ մի ավտոմեքենայի, մինչև երթևեկության մեծ արագության տեմպին հարմարվելը։

«Երթևեկության տեմպ» հասկացությունը շատ կարևոր է, քանի որ մեծ արագությունը պահանջում է արագ ռեակցիա, արագ փոխվող իրադրությունների ընկալման (գործողությունների հերթականություն) և ավտոմեքենայի վարման նոր ալգորիթմներ։

Եթե ճանապարհային իրադրությունը թույլ է տալիս, ապա ձայնային ազդանշանների փոխարեն ավելի լավ է թարթել լույսով, քանի որ մայրուղում շարժիչների աղմկոտ աշխատանքի հետևանքով ձայնը վատ է լսվում։ Մի գոտուց մյուսը անցնելուց առաջ նախօրոք միացրեք շրջադարձի ցուցիչը, որպեսզի ուրիշները այն տեսնեն հեռվից։

Ավտոմայրուղիներում վագանցիք դեպքում հաշվի առնելով մեծ արագությունը, ավտոմեքենաների միջև հեռավորությունը և ինտերվալը պետք է բավականին մեծ լինի քան սովորական ճանապարհներում։ Քաղաքներին մոտենալիս ճանապարհատրանսպորտային իրադրությունը և շարժման տեմպը այլ փողոցների և խոշնդոտների մոտիկության պատճառով՝ հատկապես երթևեկության լարված պահերին կարող են փոխվել։

Ավտոմայրուղուց դուրս գալուց առաջ մինչև ձեր որոշած տեղը հասնելը հետևեցեք ճանապարհային նշաններին և ցուցիչներին։ Ըստ որում հաշվի առեք շարժման տեմպի փոփոխությունը, նրա դանդաղեցումը, տեղական ճանապարհներով երթեւեկելիս մի հրապուրվեք արագությամբ։ Ավտոմայրուղով երթեւեկելուց հետո 60 կմ/ժամ արագությունը ձեզ թվում է երկու անգամ պակաս, այդ պատճառով տեղական ճանապարհ դուրս գալուց հետո առաջին մի քանի րոպեն անհրաժեշտ է հետեւել արագաշափի ցուցումներին։

Վատ եղանակին սայթաքուն ճանապարհի վրա ժամանակ առ ժամանակ ստուգեցեք, ինչպես է ավտոմեքենան հակագողում դեկանիվի պտույտին, արգելակմանը կամ արագացմանը։ Ուղեկամուրջների հենարանների մոտով և կամուրջներով անցնելիս, լիցքերի և փոսերի վրայով երթեւեկելիս։ Հիշեցեք նաև հիդրո և աէրոդինամիկական ազդեցությունների մասին (քամի, անձրև, ջրի կուտակում և այլն)։

Երկաթուղային գծանցեր։ Ճանապարհի բարդ մասերից մեկը երկաթուղային գծանցն է։ Երկաթուղային տրանսպորտի աշխատողները գտնում են, որ ավտոմոբիլավարները իրենց համար բավականին շատ տհաճություններ և տագնապալի իրադրություններ են ստեղծում։ Երկաթուղային ճանապարհների վրա կատարվող բոլոր պատահարների 20-ից 60 % -ը կազմում է գնացքների ընդհարումը ավտոմեքենաների հետ։ Երկաթուղային գծանցներում մահացող վարորդների թիվը ճանապարհատրանսպորտային պատահարներում, զոհվածների ընդհանուրը թվի համեմատությամբ, չի գերազանցում 3—5 %-ից։ Բայց այդ թիվն էլ շատ մեծ է։ Ո՞ր գծանցներն են ամենավտանգավորը։ Թվարկենք դրանք, սկսելով ամենավտանգավորից, որի պատճառը գծանցում

երթևեկության կազմակերպման և ինֆորմացիայի անբավարար հստակությունն է. միայն սովորական ճանապարհային նշաններով ցույց տրված գծանցներ արտացոլող նշաններով և 'ձայնային ազդանշաններով, թարթող լուսացույցներով, ձեռքի ուղեփակոցով, ավտոմատ ուղեփակոցով գծանցներ։ Համեմատելու համար անհրաժեշտ է ասել, որ ավտոմատ ուղեփակոցով գծանցը 5 անգամ պակաս վտանգավոր է, քան միայն նշանով ցույց տվածը։

ՎՏԱՆԴԱՎՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՃԱՆԱՊԱՐՀԻ ՊԱՏՃԱՌՈՎ -

Նենգ պտուտակը։ Ճանապարհներից մեկում ուղղագիծ հորիզոնական հատվածում շարունակ տեղի են ունեցել մի շարք ծանր ելքով ճանապարհատրանսպորտային պատահարներ։ Մանրակրկիտ հետազոտություններից պարզվեց, որ պատճառը մասնակիորեն բանուկ մասի ծածկույթն է։ 80—90 կմ/ժամ արագությամբ շարժվող մարդատար ավտոմեքենաները ընկնելով այդ ուղղագիծ և հորիզոնական հատվածը, իրականում հայտնվում էին պտուտակային մակերևույթի վրա։ Վարորդները նույնիսկ չեին հասկանում, թե ինչու իրենց ավտոմեքենաները կարծես օդ են բարձրանում և ինչպես պարսատիկից «կրակվում» երթևեկության հանդիպակաց գոտու վրա։

Տվյալ դեպքում հանդիպակաց գոտով շարժվել են բեռնատար ավտոմեքենաներ, այդ պատճառով էլ կատարվել է ավտոմեքենաների ճակատագրական ընդհարում՝ ճանապարհային բոլոր հնարավոր ընդհարումներից ամենավտանգավորը։

Ճանապարհն ինչո՞ւ է միևնույն տեղով անցնող ավտոմեքենաներից որոշ մասին մի կողմ շպրտում, իսկ մյուսներին՝ ոչ։ Դա կախված է ավտոմեքենայի տիպից (նրա երկարությունից և լայնությունից) և շարժման արագությունից։ Գիտնականները գտել են, որ ժամանակակից արագընթաց ավտոմեքենաները բանուկ մասի մակերևույթի վրա պահելու տեսանկյունից ամենավտանգավորը նրա վրա եղած 30—80 մ երկարությամբ ալիքներն են։ Ճշմարիտ է, այդպիսի դեպքերում դժվար է որևէ մեկին մեղադրել, նույնիսկ ճանապար-

հաշինարարներին, մխոսելով արդեն վարորդների մասին, քանի որ ճանապարհի թերությունները քողարկված են մարդու աշքից:

Այլ անակնկալներ: Բացի մարդու աշքի համար անտեսանելի ճանապարհային վտանգներից, լինում են նաև այլ՝ ավելի ակնհայտ կամ ավելի ճիշտ՝ «փոսային» վտանգներ: Հաճախ շինարարները փորում են ծածկույթը և մոռանում նախազգուշացնող նշան տեղադրել, հաշվի շառնելով, որ այդպիսի՝ փորվածքները մեծ արագության ժամանակ մինչև վերջին պահը վարորդի համար տեսանելի չեն: Մեկ անգամ Մոսկվա-Գորկի ավտոմոբիլային ճանապարհի վրա հանել են մի ամբողջ բետոնե սալիկ, շղնելով արգելապատ և մեկ վարորդ չէ, որ այդուեղ է թողել իր ավտոմեքենայի շարժական մասի դետալները և հանգույցները:

Տագնապալի իրադրություն կարող է առաջանալ նաև այն պատճառով, որ 10—20 կմ ուղղագիծ ճանապարհից անմիջապես հետո հանկարծ հայտնվում է միակ և առանց նախազգուշացնող նշանի կտրուկ շրջադարձ: Ուղղագիծ ճանապարհով երթևեկելու ռեժիմին վարժված վարորդը կարող է շրածագանքել իրադրության փոփխությանը և հայտնվել ճամփեղում կամ խրամառվում: Դա առանձնապես վտանգավոր է, եթե ճանապարհի շրջադարձին լինում է սայթաքուն տեղամաս: Դա այն դեպքն է, եթե մինուսը մինուսով բազմապատկելիս ստացվում է ոչ թե պլյուս, այլ մեծ մինուս՝ ճանապարհատրանսպորտային պատահար:

Տագնապալի իրադրություն է առաջանում այն ժամանակ, երբ 80 կմ/ժամ արագությամբ հիմնական ճանապարհով շարժվելուց հետո ձեր ավտոմեքենան արդեն թեքված անիվներով պակասեցնելով արագությունը սկսում է գնալ դեպի վայրէջքի հանգույցը: Եվ հենց անմիջապես վայրէջքում անիվի տակն է ընկնում մի փոքրիկ սառույցի «կտոր», որը, դժբախտաբար, բավական է առջեկի դեկավարվող անիվների մեկուսացման համար:

Դրա հետեւանքով ավտոմեքենան սահում է թեքության վրայով և այնուհետև, որպես կանոն, շուրջ է գալիս:

Դա տագնապալի իրադրություն է: Փորձառու վարորդները, զգալով, որ առջեկի անիվները սահում են, դադարեցնում

են արգելակի ոտնակը սեղմել մինչև անիվների ուղեկապման պահը։ Նրանք բաց են թողնում ոտնակը և փորձում դեկային կառավարման օգնությամբ ավտոմեքենան պահել բանուկ մասի վրա։

Տագնապալի իրադրության բույլ տեղերը։ Յուրաքանչյուր տագնապալի իրադրությունում կան թույլ տեղեր։ Օրինակ, ավտոմեքենան չի կառավարվում և սահում է սառչակալված կամ կավային ծածկույթ ունեցող սարալանջով դեպի հեղեղատ, շենթարկվելով ոչ զեկային կառավարմանը, ոչ էլ դրուսելի ոտնակին։ Բայց վայրէջքի ընթացքում, հավանաբար, կհանդիպեն «լերկ» կամ բավարար կցորդման գործակից ունեցող տեղեր։

Ահա դրանցից էլ անհրաժեշտ է օգտվել։ Օգտագործելով վայրկենական կցորդումը, աշխատեք ավտոմեքենային տալ ավելի անվտանգ ուղղություն։

Ճանապարհին տագնապալի իրադրությանը սանձահարելիս ձեզ կօգնի նաև վարման մի շարք ոչ ստանդարտային ձևերի իմացությունը, օրինակ ձեռքի արգելակի և ետևի անիվների ուղեկապման օգնությամբ թաց մակերեսույթին ավտոմեքենայի պտույտը հակառակ ուղղությամբ կատարելու մեթոդը։ Որպեսզի պտույտը կատարվի անհրաժեշտ ուղղությամբ, վարորդը սկզբում մի փոքր թեքում է առջևի անիվները, այնուհետև ուղեկապում է ետևի անիվները, որպեսզի պտույտից հետո անմիջապես շարժվի հակառակ ուղղությամբ։

Ճշմարիտ է, այդպիսի մաների ժամանակ կատարվում է ավտոմեքենայի առանձին դետալների ուժեղ մաշում, խախտվում են անիվների առանցքակալները, բանող մասի հանգույցները, թափքը, մաշվում է շարժիչը, կցորդիչը, դողերը։ Սակայն անհրաժեշտ է սովորել այդ հնարքի իրագործումը, քանի որ երբեմն այն թույլ կտա փրկել մարդկանց և ավտոմեքենան։ Եթե գիտականորեն մոտենանք, ապա յուրաքանչյուր փորձառու վարորդ պետք է պահեստում ունենանաև տվյալ դեպքի ալգորիթմը։ Բայց պետք է հիշել, որ բարձր արագության ժամանակ այդպիսի մաների կատարման դեպքում հնարավոր է նաև շուրջ տալ ավտոմեքենան։ Այդ

պատճառով մենք խորհուրդ ենք տալիս այդ հնարքից օգտվել 30 կմ/ժամից պակաս արագության դեպքում:

Եարժվող ավտոմեքենայի կտրուկ պտույտի տարբերակներից մեկը փոքր մակերեսի վրա «հոլապտույտն է»: Ըստ որում դեկավարվող անիվները պտտեցնում են անհրաժեշտ ուղղությամբ համարյա մինչև վերջ և մինչև վերջ սեղմում են կարբյուրատորի կարգավորիչի կառավարման ոտնակը: Դրա հետևանքով ավտոմեքենան առջևի առանցքի շուրջը պտույտ է կատարում տեղում: Այնպես, ինչպես նախորդ դեպքում շրջադարձի թեքությունը, արագությունը կարելի է կարգավորել ինչպես զեկային կառավարմամբ, այնպես էլ կարբյուրատորի դրոսելի զեկավարման ոտնակով:

Առաջին հայացքից վարման ճարպիկ հնարքը կարող է անգնահատելի ծառայություն մատուցել այն դեպքում, եթե նստած եք անշարժ ավտոմեքենայում և հանկարծ տեսնում եք, որ դեպի ձեր կողմն է գալիս ինչ-որ շղեկավարվող վիթխարի մի՞քան: Առվորական միջոցներով խուսափելու համար ժամանակը կարող է շրավականացնել: Ահա այստեղ էլ պետք կգա հոլածել շրջապտույտը:

Վտանգավոր է՝ առջևում շեղակի քենությամբ փոս է: Ժամանակակից ճանապարհներին դեռևս, դժբախտաբար, կան ինչպես ընդլայնական, այնպես էլ լայնական- ընդերկայնական անհարթություններ: Առաջիններն ավտոմեքենայի մոտ առաջ են բերում միայն ցնցումներ, իսկ երկրորդները՝ նաև օրորում: Երբ ավտոմեքենան կատարում է այդպիսի ինքնաբերական շարժում, վարորդը ձգտում է այն պահել ուղղագիծ հետագծում, ակնթարթորեն թեքելով անիվները: Դա վարորդի համար բարդ քննություն է: Ավտոմեքենայի կշռի բաղադրիչը նրան ձգում դեպի ճամփեղը, իսկ նրա զեկավարվող անիվները՝ հակառակ կողմը:

Մինչև որոշակի պահը, քանի դեռ ուժային միակցումը բավարար է, ավտոմեքենան թեքվում է վարորդի ընտրած հետագծով: Թեպես այս դեպքում ավտոմեքենան սկզբում ցնցվում է և դա կարող է ճանապարհից դուրս գալու պահճառ դառնալ:

Ինչո՞ւ է այդպես լինում: Ավտոմեքենայի կառուցվածքի մասին տեսությունը թույլ է տալիս այդ հարցին հստակ պա-

տասխանել: Ավտոմեքենան շարժվելիս նրա համար հենման մակերևս է ծառայում ճանապարհը: Եթե այն լիներ կատարյալ հարթ, ապա պետք չէին լինի ոչ զսպանակներ, ոչ դողեր, և ոչ էլ ամորտիվատորներ:

Վարորդից այդպիսի հարթ ճանապարհում ավտոմեքենայի շարժմանը հետևելու համար մեծ լարվածություն չէր պահանջվի:

Բայց քանի որ իրականում ճանապարհը հեռու է այդպիսի կատարելությունից, ապա ավտոմեքենայի բոլոր մասերը, ներառյալ նաև վարորդը, աշխատում են լրիվ ծանրաբեռնվածությամբ: Առաջին հարվածը ընդունում է դողը և հնարավերին շափով մեղմացնում այն: Այնուհետև սկսում է աշխատել անիվների կախոցը: Զսպանակները մեղմացնում են հարվածի այն մասը, ինչ չէին կարողացել անել դողերը, իսկ ամորտիվատորները մարում են ավտոմեքենայի ճոճումը իրար ետևից մի քանի անհարթություններ անցնելիս: Բայց այս համակարգը կայուն է աշխատում մինչև որոշակի սահմանը, մինչ այն ժամանակ, քանի դեռ անհարթությունների մեծությունը չի գերազանցում սահմանային արժեքը: Մենք դիտեցինք ընթացքի սահունությունը ուղղաձիգ հարթության մեջ: Նման ձևով այդ համակարգը աշխատում է նաև հորիզոնական ընդլայնական հարթության մեջ:

Բայց ամբողջ բեռնվածությունն ընկնում է դողի վրա, որը շնորհիվ իր կողային հարմարվողականության՝ առաձգականության, մարում է ավտոմեքենայի ընդլայնական տատանումները:

Ամենաանախորժ տարբերակը, որը ճանապարհը կարող է մատուցել և, դժբախտաբար, հաճախ մատուցում է ավտոմեքենային և վարորդին, դա ուղղաձիգ ընդերկայնական և ընդլայնական անհարթությունների՝ զուգակցումն է: Այդպիսի զուգակցումն անվանում են փոսերով և առանց փոսերի շեղակի թեքության: Անհրաժեշտ է նշել, որ այդ ստորաբաժանումը պայմանական է, քանի որ մեծ մասամբ կախված է ավտոմեքենայի շարժման արագությունից, այլ ոչ թե միայն ճանապարհային ծածկույթի երկրաշափությունից:

Կարելի է հիշել, երբ վարորդը չի կարողացել ավտոմեքենան պահել ծածկույթի վրա: Կամ արագությունն է սովորա-

կանից բարձր եղել, կամ էլ ծածկույթն է մի քիչ իջել, բայց, համենայնդեպս, շեղակի թեքությամբ փոսեր ունեցող գոտով անցնելիս առջևի անիվները օդ են բարձրացել և ավտոմեքենան դարձել է շկառավարվող։ Իսկ վարորդը սովորականի նման, թեքել է անիվները դեպի ձախ, ձգտելով ուղղել ավտոմեքենան։ Եվ ահա շարժման հետագիծը սահուն փոխելու փոխարեն, ինչպես դա պետք է տեղի ունենար զեկավարվող անիվների գլորման դեպքում, ավտոմեքենան իր ամբողջ արագությամբ վայրէջք է կատարել թեքված անիվների վրա։ Պարզվել է, որ իներցիայի ուժը ճանապարհի հետ ուժային միակցումից մեծ է և ավտոմեքենան գնացել՝ է նրա ուղղությամբ։ Վախեցած վարորդը հսկայական դժվարությամբ ավտոմեքենան պահել է ճամփեղրի վրա, թույլ շտալով այն խրամառվի մեջ ընկնել։

Վարորդի համար ամենավատը ավտոմեքենայի վեր թոշելու պահն է, այսինքն, երբ այն գտնվում է կախված վիճակում։ Ե՛վ տեսողությունը, և՛ ձեռքերը չեն զգում ավտոմեքենայի ակամա շարժման ուղղությունը և վարորդը շեկարող որոշել, թե որ կողմը պտտել զեկանիվը։ Եվ միայն վարորդի վարպետությունը և փորձի զուգակցումը նրան օգնում է ընտրելու ավտոմեքենայի ճիշտ դիրքը։ Ավտոմեքենայի շարժման կանոնավորումը անհրաժեշտ է կատարել այն պահին, երբ դողի և ճանապարհի շփման գոտում առաջանում է մասնակի ուժային միակցում։

Իսկ չէ՞ որ նման իրադրությունից մի փոքր ուրիշ ձևով գործելու դեպքում հեշտությամբ կարելի է խուսափել։ Զգալով, որ ավտոմեքենան մի կողմ է քաշվում, մի պահ նրան թույլ տվեք ազատ շարժվել։ Այդ դեպքում այն վայրէջք է կատարում շարժման ընթացքի ուղղություն ունեցող անիվների վրա և նորից ձեռք է բերում լրիվ ուժային միակցում։ Դրանից հետո զեկավարումը վերցրեք ձեր ձեռքը և ավտոմեքենան սահուն դուրս բերեք ձեզ անհրաժեշտ հետագի վրա։ Պետք է նշել, որ վերևում ամբողջ նկարագրվածը կատարվում է 1—2 վայրկյանի ընթացքում և անհրաժեշտ է որոշակի հմտություն, որպեսզի որսալ պահը և կատարել մաները։




ԻՆՉՊԻՍԻՆ ՊԵՏք Է ԼԻՆԻ ՎԱՐՈՐԴԸ

Գ լ ու ի ս 4


ՎԱՐՈՐԴԸ ԲԱՐԴ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՊԵՐԱՏՈՐ է

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ


Վարորդի աշխատանքի գիտական կազմակերպման պրոբլեմները չեն սահմանափակվում միայն ավտոմեքենայի ղեկի մոտ գտնվելով, այլ ընդգրկում է նաև նախքան երթևեկությունը սկսելու և ավտոտնակ կամ տուն վերադառնալուց հետո ընկած եղրափակիչ ժամանակը։ Այսպես, օրինակ, ինչպիսի հարցեր են ընդգրկում ավտորուսի վարորդի աշխատանքի կազմակերպման շուրջը կենինգրադի 1-ին ավտորուսային պարկի աշխատողների կարծիքով։ պարկից դուրս գալու նախապատրաստումը (վարորդին տանից պարկ փոխադրելը, ճանապարհային փաստաթղթերի ստանալը, ավտորուսի տեխնիկական վիճակի ստուգումը և գիծ դուրս գալը), աշխատանքը գծում (վարորդի աշխատանքային տեղում նորմալ պայմանների՝ ապահովումը, երթուղային գծի ուսումնասիրումը, վազքի ժամանակի նորմայի պահպանում, վարման տեխնիկան, աշխատանքի և հանգստի ուժիմը, յսպասարկման կուլտուրան և երթևեկության անվտանգությունը), վերադարձ դեպի պարկ։ Բնականաբար, մենք չենք կարող մանրամասը դիտարկել վարորդի աշխատանքի գիտական կազմակերպման բոլոր հարցերը։ Քննենք միայն մի քանիսը, մեր կարծիքով ամենակարևորները։



Նկ. 2. Վարորդի ձիշտ
նստելածելը:



Նկ. 3. Այսպիս նստելը
հարմար չէ:



Նկ. 4. Ավտոմեքենան՝ այսպիս
վարել դժվար է:

Նստերանք պարզապես նըստառեղ չէ: Ճիշտ նստելու դեպքում վարորդը պետք է նստի ուղիղ, իսկ նրա մեջքը ամբողջովին պետք է կպչի նըստարանի թիկնակին: Բացի դա, նրա ոտքերը պետք է հեշտությամբ հասնեն ոտնակներին, իսկ ղեկանիվը բռնած ձեռքերը արմունկում թեթևակի պետք է ծալված լինեն (Նկ. 2): Այսպիսի նստելածելը վարորդին հնարավորություն է տալիս ընդունելու ամենաբնական վիճակը, երկարատև ուղևորության ընթացքում հոգնածություն չզգալ, ինչպես նաև ապահովում է առավելագույն տեսադաշտ, ղեկանիվով, ունակներով և լծակներով աշխատելիս պահանջվում է ամենաքիշ ուժերի լարնամ:

Նստարանը ղեկանիվից շափից ավելի հեռու տեղադրելիս (Նկ. 3) վարորդի մեջքը հենարանից զրկվում է և նրա մկանները ամբողջ ժամանակ լարված են լինում: Բացի դրանից, ձեռքերը աշխատելիս հիմնական ծանրաբեռնվածությունը ընկնում է նախաբազուկի և դաստակի համեմատարար թույլ մկանների վրա, այն դեպքում, եթե բազուկի ավելի ուժեղ


մկանները բավարար չեն օգտագործվում, շարժման ամպլիտուդան կրճատվում է: Զեռքերի մկանների վրա ծանրաբեռնվածության աննպատակահարմար տեղաբաշխումը կարող է լինել նաև զեկանիվի շափից ավելի մեծ կամ անբավարար թեքության պատճառով:

Երբ նստարանը ոտնակներից շափից ավելի հեռու է գտնվում, վարորդը ստիպված է ձգվել՝ բըռնելով զեկանիվից, որը խանգարում է նրան, վերջինիս անհրաժեշտության դեպքում կտրուկ պտտել այն: Դրա հետ միասին, այդպիսի վիճակում վատանում է նաև տեսադաշտը:

Նման անհարմարություններից խուսափելու համար բավական է նստարանը տեղաշարժել առաջ: Եթե կոնստրուկտիվ պայմանների պատճառով դա հնարավոր չէ, պետք է պատրաստել նստարանի թիկնակի շափով պահանջվող հաստությամբ բարձիկ և դնել մեջքի տակ:

Վայու է նաև այն դեպքում, երբ նստարանը շատ առաջ է քաշված: Վարորդը ստիպված ծալում է ոտքերը, որը դժվարացնում է ոտնակներն աշխատեցնել: Այդպիսի դրության մեջ (նկ. 4) ձեռքերը հնարավորություն չունեն ազատ զեկավարել զեկանիվը:

Վարորդի մկանային ուժի աստիճանը ոտնակը սեղմելիս փոփոխվում է կախված մեջքի բարձիկի թեքության անկյունից, ինչպես նաև նստարանի բարձրությունից: Եթե այն ցածր է, վարորդը բարձրացնելով կզակը, լարում է մեջքի և վզի մկանները, շափազանց բարձր նստարանի դեպքում կորանում է, խոնարհում է գլուխը, որն առաջ է բերում ուսագոտու մկանների արագ հոգնածություն, դժվարացնում է շնչառությունը: ԱՇԳԻ-ի տվյալներով նստարանի բարձիկի ճիշտ ընտրության դեպքում ոտնակների վրա ներգործած ուժը կարող է պակասել 15—20 % -ով: Նստարանի ծայրից մինչև




Նկ. 5. Նստելածե, որը հարմար է ոչ թե աշխատանքի, այլ հանգստի համար:

վարորդի ոտքերի ծնկների ծալատեղը եղած հեռավորությունը պետք է լինի ազդրի երկարության 15% -ը։ Այդ տարածությունը փոքրացնելիս հնարավոր է ոտքերի ֆունկցիայի խախտում ազդրի շրջանում՝ անոթների և նյարդերի սեղման հետևանքով։ Որքան բարձր է նստարանը, այնքան պետք է փոքր թեքման անկյուն ունենա բարձիկը։ Եթեմն հարմարավետության ետևից ընկնելով մեծացնում են բարձիկի խռությունը, որի հետևանքով սահմանափակվում է վարորդի ոտքերի շարժման ազատությունը։


Նստարանի թիկնակը պետք է լինի ոչ թե ուղղաձիգ, այլ ունենա որոշ թեքություն, որի հետևանքով մարմնի կշիռը ավելի ճիշտ է տեղաբաշխվում նստարանի և թիկնակի վրա, իսկ ազդրի մկանները առավելագույն շափով թուլացված են։ Սակայն թիկնակի ավելորդ թեքության դեպքում վարորդը փովում է նստարանին (նկ. 5)։ Այս դեպքում, շնայած նրա մեջքը հենարան ունի, բայց ողնաշարի ներքեմի մասը, վզի և ձեռքերի մկանները անշափ լարվում են։ Ծանրաբեռնված են նաև ոտքերի մկանները, քանի որ նրանք շունեն բավարար հենարան։ Ահա թե ինչու, կարծես հարմար նստելաձեկի դեպքում վարորդը արագ հոգնում է, իսկ ուշադրությունը պակասում։

Թեռնատար ավտոմեքենաների նստարանի թիկնակի թեքությունը պետք է լինի $97 \pm 2^\circ$ սահմաններում, իսկ ավտոբուսներում՝ $95-107^\circ$ ։ Շահագործման մեջ գտնվող ավտոբուսների մի մասում այնպիսի մեխանիզմ է հարմարեցված, որը հնարավորություն՝ է տալիս նստարանը կարգավորել վարորդի ֆիզիկական առանձնահատկություններին համապատասխան։ Սակայն շատերը այդ հնարավորությունը չեն օգտագործում։

Նստարանի շափերի և դետալների դիրքի սխալ հարաբերության հետևանքով վարորդի մոտ ցանկություն է առաջանում, առանց նստարանի օգնության, աշխատանքային հարմար դիրք գրավել, որը հանգեցնում է վաղաժամ հոգնածության։ Այն ավտոմեքենաներում, որոնցում թիկնակի թեքության կարգավորումը բացակայում է, այն կարելի է փոփոխել, թիկնակի վերևի մասի վրա համապատասխան բարձիկի տեղադրումով։



Նկ. 6. Վարորդի տեսադաշտը միայն ետևի տեսքի հայելին օգտագործելիս:



Նկ. 7. Վարորդի տեսադաշտը ետևի տեսքի ներքին և արտաքին հայելիները օգտագործելիս:

Նստարանի հարմարեցման կարգը հետևյալն է. սկզբում անհրաժեշտ է այն առաջ քաշել, որպեսզի հեղտությամբ ոտքերը հասնեն ոտնակներին, իսկ ձեռքերը ղեկանիվին, այնուհետև փոխել թիկնակի թեքությունը:

Նստարանի կարգավորման սարքավորումներին առաջադրվում է վարորդի իրանի ինքնակամ թուլացմանը հակաղղող պահանջներ: Ի դեպ, նստարանը պետք է բավական հուսալի ամրացված լինի, որպեսզի կտրուկ կանգառների ժամանակ չտեղաշարժվի: Նստարանի պաստառը ընտրվում է, ելնելով բարձր օդա և խոնավաթափանցելիությունից, բավարար ջերմահաղորդականությունից, անողորկությունից: Հարթ պաստառի դնապում վարորդը նստարանի վրա սահում է: Մարմնի մշտական տեղաշարժումը պահանջում է լրացուցիչ ճիգեր այն անհրաժեշտ վիճակում պահելու համար և լրացուցիչ շափով հոգնեցնում է վարորդին:

Ավտոմեքենայի խցիկում կամ թափքում գտնվող նըստարանների պաստառը, որոնք ունեն անշափ մեծ հա-

րակցման գործակից, առաջ է թերում մեջքի մկանների հսկածություն:

Երբեք աշխատանք երթևեկության համար ետևի տեսքի հայելու (նկ. 6) նշանակությունը զատ մեծ է և որպեսզի դա օգտագործվի առավել արդյունավետությամբ, հարկավոր է տեղադրել այնպես, որպեսզի տեսնես այն ամենը, ինչ հնարավոր է դիտել ետևի պատուհանից: Սակայն փակ մեքենաների մեծ մասը թափքի ետևի մասը կանգնակների կողքերից ստեղծում են երկու անտեսանելի գոտիներ:

Դրանք կարելի է տեսնել անվածածկոցների կամ առջևի հենակների վրա ճիշտ տեղադրված ետևի տեսքի կողային հայելիներով (նկ. 7):

Ընդ որում գլուխը շարժելով, ձեր աշխատանքային տեղում նստած, դուք ետևում ամեն ինչ պետք է տեսնեք: Արտաքին հայելիներն ավելի հեշտ է կարգավորել որևէ մեկի օգնությամբ: Հաճախ դրանք ամրացվում են զսպանակավոր հողակապերում և դիպչելիս թեքվում են: Եթե դրանք շարժվել են, մի զլացեք նախքան շարժվելը անհրաժեշտ դիրքի բերել:

Ետևի տեսքի ներքին հայելիները սովորաբար հարթ են, նրանք գտնվում են աշքին մոտիկ և տալիս են ետևի ճանապարհի պարզ պատկերը: Արտաքին հայելիները սովորաբար գնդաձև են (ուռուցիկ), որը հնարավորություն է տալիս աշքից մեծ հեռավորության վրա գտնվելով հանդերձ մեծացնել տեսադաշտի անկյունը, բայց միաժամանակ մասնակիորեն աղավաղում են առարկաների ընկալումը: Անհրաժեշտ է ուռուցիկ հայելուն նայելով ճիշտ որոշել այլ ավտոմեքենայի արագությունը և դիրքը: Համեմատության համար կարելի է միաժամանակ նայել ետևից մոտեցող ավտոմեքենաներին երկու հայելիների մեջ, նախապես ավտոմեքենան դուրս հանելով ճամփեզր: Արտաքին ուռուցիկ հայելում երևացող ավտոմեքենան կթվա ավելի հեռու, քան ներքին հարթ հայելում, որովհետև ուռուցիկում պատկերը շափերով փոքր է: Ուրեմն իրականում արտաքին հայելում երևացող ավտոմեքենան կլինի մոտիկ, քան դուք կարծում եք, իսկ դա հիշելը կարևոր է ճանապարհի վրա տրամսպորտային միջոցների հոսքում դիստանցիան գնահատելիս:

Հայելին հաճախ համարում են վարորդի երրորդ աշքը, բայց դրա համար անհրաժեշտ է նրանում կարողանալ տեսնել պատկերները, այլ ոչ թե պարզապես նայել նրանց։ Հայելու մեջ պետք է նայել ժամանակին.և տեսածը նրբորեն արձագանքել նախքան ազդանշան տալը, շրջադարձերը, վագանցները, կանգառները և դռների բացելը։ Անհրաժեշտ է վարժվել հետևյալ հաջորդականությանը. հայացք հայելու մեջ, ազդանշան, մաներ։ Այսպիսով, յուրաքանչյուր մաներից առաջ պետք է նայել հայելու մեջ։ Բայց ոչ միայն մաներից առաջ։ Պետք է ընդհանրապես հայելու մեջ նայել կանոնավոր, որպեսզի ցանկացած պահին գիտենալ թե ինչ է կատարվում ձեր ետևում։

Շատ դժվար է գիշերը հայելու օգնությամբ որոշել ետևի ավտոմեքենաների արագությունը և հեռավորությունը։ Այդպիսի դեպքում անհրաժեշտ է վարժվել նրանց լապտերների լույսի տհաճ փայլքին։ Եթե դրանք կուրացնում են ձեզ, ապա ավելի լավ է գլուխը թեքել մի կողմ, բայց մի թեքեք հայելին, որովհետև դուք կարող եք մոռանալ այն նորից ուղղել։

Նույնիսկ բոլոր հայելիների առկայության դեպքում էլ, այնուամենայնիվ, մնում են անտեսանելի գոտիներ, այնպես, որ նախքան շարժումը սկսելը միշտ ետ նայեք ձախ ուսի վրայով, որպեսզի համոզվեք, որ հայելին չի խարում։

Իսկ այլ տրանսպորտային միջոցների վարորդները այս դեպքում կհասկանան, որ ձեր ավտոմեքենան պատրաստվում է շարժվելու։

ՎԱՐՈՐԴԻ ՄԱՍԻԳՈՒՅՑԱՏՈՐՆԵՐԸ

Ավտոմեքենան վարելու համար այն սարքավորում են համապատասխան բռնակներով և ոտնակներով։ Դրանք բաժանվում են երկու խմբի. ոտքի (դրոսելի կառավարման ոտնակ և արգելակի ու կցորդիչի ոտնակներ) ու ձեռքի (զեկանիվ, ձեռքի արգելակի և փոխանցման տուփի բռնակներ)։

Կառավարման ոտնակներ։ Դրոսելի ոտնակը դրված է աջ ոտքի տակ, և նրա միջոցով դեկավարում են ծնկաձև լիսեռի պատման հաճախականությունը և շարժիլի հզորությունը։ Դա

զեկավարման շատ զգայուն միջոց է, բայց վարորդից պահանջում է լավ հմտություն, որը սկսնակներին անմիջապես չի հաջողվում։ Արգելակի ոտնակը նույնպես դրված է աջ ոտքի տակ։ Սեղման աստիճանը (ուժը) համապատասխանում է նաև արգելակման աստիճանին։ Ուսուցման ժամանակ շատ կարենոր է սովորել առանց նայելու ոտքը տեղափոխել դրոսելի ոտնակից արգելակման ոտնակի վրա։

Կցորդիչի ոտնակը ծառայում է կցորդիչը միացնելու և անջատելու, այսինքն տրանսմիսիան շարժիչից անջատելու համար։ Շատ կարենոր է սովորել կցորդիչի տանող և հետեւղող սկավառակների հպմւն («կառշման») պահի որոշումը, որին անմիջապես դժվար է ընտելանալ։ Անհրաժեշտ է լսել աշխատող շարժիչի աղմուկը և այնպես նրբորեն կարգավորել վառելանյութի մատուցումը, որպեսզի այն կանգ չառնի։


Շատ վարորդներ հաճախ են օգտվում դրոսելի զեկավարման ոտնակից, չհասկանալով, որ բարդացնում են իրենց աշխատանքը, շխոսելով արդեն ավտոմեքենայի բոլոր հանգույցների լրացուցիչ մաշման մասին։ Ստարտերի օգնությամբ շարժիչի ծնկաձև լիսեռի մի քանի տասնյակ պոտուտից անմիջապես հետո վարորդների մեծամասնությունը ջղածրգորեն և ինչ-որ եռանդով սկսում են սեղմել դրոսելի զեկավարման ոտնակը։ Եվ չնայած այդպիսի սովորությունը կարծես թե երթևեկության անվտանգության հետ կապ չունի, իրականում այն պատճառ է դառնում մեծ թվով ճանապարհատրանսպորտային մանր պատահարների։ Նյարդային վարորդի վարած ավտոմեքենան ծովի ալիքի նման արագ մուտենում է առջևից ընթացող ավտոմեքենային, երբեմն էլ հանկարծակի դանդաղում է, ստիպելով ետևից եկող ավտոմեքենաներին կտրուկ արգելակել։ Ուրեմն ինչպես պետք է զեկավարել դրոսելի ոտնակով։ Այս հարցը կարող է ունենալ մեկ պատասխան՝ սահուն։ Միայն այդպիսի պայմանի դեպքում ավտոմեքենան ցնցումներ չի ունենա, այսինքն արագությունը բարձրացնելիս կամ իջեցնելիս ընթացքը սահուն կլինի, իսկ ճանապարհատրանսպորտային պատահարներ չեն լինում այնտեղ, որտեղ կամ ընդհանրապես չկա երթևեկություն, արագության փոփոխություն, կամ էլ եթե այն գոյություն ունի, ապա շատ փոքր է։ Բացառություն են կազ-

մում այն պահերը, երբ անհրաժեշտ է շտապ խույս տաք վթարային իրադրությունից (ավտոմեքենան շտապ հեռացնել ճանապարհների հատման տեղից կամ ավարտելով վազանցը, վերադասավորվել շարքում):


Ինչ վերաբերում են արգելակի և կցորդման մեխանիզմի ոտնակներին, ապա դրանց մանիպուլյացիան բավական մանրամասն դիտվում է «սահուն ճանապարհ» բաժնում։ Այս-տեղ միայն անհրաժեշտ է ասել, որ չի կարելի համաձայնվել անվտանգ երթևեկության մասին մի շարք գրքերի հեղինակների հետ, որոնք իրր կցորդման մեխանիզմի շարժաբերի մասերի և հատկապես լծակների ու կցորդման մեխանիզմի միացման մուֆտայի առանցքակալի ինտենսիվ մաշումից խուսափելու համար խորհուրդ շեն տալիս ձախ ոտքը պահել կցորդման մեխանիզմի ոտնակի վրա։ Երթևեկության ժամանակակից պայմանները վարորդից պահանջում են կցորդման մեխանիզմի նվազագույն ժամանակում անջտել։ Այդ պատճառով ձախ ոտքը պետք է կամ պահել կցորդման մեխանիզմի ոտնակի կողքին, կամ էլ կախված վիճակում՝ նրա վրա։ Ոտնակը սեղմել պետք չէ, բայց ցանկացած պահին, եթե դա անհրաժեշտ լինի, ձախ ոտքը պետք է գործի։

Իսկ գիշերը վատ լուսավորված ճանապարհով երթևեկելիս ձախ ոտքը պետք է գտնվի լուսի ոտքի անջատիչի կոճակի վրա, եթե անջատիչը ձեռքի չէ, որպեսզի կարողանալ ակնթարթային արագությամբ փոխել ավտոմեքենայի առջևի լուսավորվածության պարմանմերը։


Դեկանիվ: Վարորդն ավտոմեքենան վարելիս չպետք է գտնվի միենալուն, խիստ որոշակի դիրքում, այլապես նա կարող է շատ շուտ հոգնել և թուլացնել իր ուշադրությունը շըրջապատի նկատմամբ։ Այդ բոլորն ամբողջովին վերաբերում է նաև ղեկանիվի ղեկավարման ձևերին։ Ամենից առաջ սկըրբից շպետք է վարժվել երկու ձեռքով շատ ամուր ղեկանիվի շրջանակից բռնելուն և բոլոր տեսակի ամենափոքր վտանգի պահին անհրաժեշտ է մի ձեռքով փոխարկել փոխանցումը, բաց թողնել ձեռքի արգելակի բռնակը կամ փոխարկել լույսը։ Կարծ ասած, պետք է կարողանալ ավտոմեքենան կառավարել ինչպես երկու, այնպես էլ մեկ ձեռքով։ Ցանկացած իրադրությունում ամենաընդունված ձևը ձեռքերը՝ պահել «եր-



Նկ. 8. Ձեռքերի դիրքը «երկուսից» տասը պակասից դեպքում:



Նկ. 9. Ձեռքերի դիրքը «չորսից» տասը պակասից դեպքում:



Նկ. 10. Ձեռքերի դիրքը «երկուսից քսան պակասից դեպքում:

կուսից տասը պակաս» դիրքում (Նկ. 8), բայց ոչ մի դեպքում 5—10 րոպեից ոչ ավելի տևողությամբ։ Անհրաժեշտ է իրեն սովորեցնել յուրաքանչյուր 5—10 րոպե հետո անպայման ձեռքերը տեղաշրջել սկզբում «չորսին տասը պակաս» (Նկ. 9), իսկ այնուհետև կամ նախնական, կամ էլ «երկուսից քսան պակաս» դիրքը (Նկ. 10):


Դրա հետևանքով վարորդի իրանը (ողնաշարը) լինում է տարբեր դիրքերում, որը թույլ է տալիս մեղմացնել հոգնածությունը և խուսափել մասնագիտական մի շարք հիվանդություններից (ողնաշարի կորացումից և թութքից), որոնք առաջանում են անշարժ նստող վարորդների մոտ։ Բացի դա, առաջարկվող նստաձեռ թույլ է տալիս ձեռքերով արագ ընդունել «երկուսից տասը պակաս» դիրքը։

Եթե դուք շատ հոգնել եք, ձեռքերը կարելի է պահել «տասներկուսի» դիրքում։ Հստորում մարմինը պետք է կորացնել առաջ և կարծես թե ձեռքերի վրա հենվելով ձգվում եք վեր։ Անվտանգության տեսանկյունից ձեռքերի տեղափոխումը այդ դիրքից «մարտական պատրաստակամու-


Թյան» վիճակին դժվարություն չի ներկայացնում և շատ ժամանակ չի պահանջվում։ Զեռքերը «տասերկուսի» դիրքում պահելուց հետո պետք է դրանք տեղափոխել «հինգ անց կես» դիրքը, որպեսզի արյունը հոսի դեպի դաստակները։

Այնպիսի դեպքերում, երբ ավտոմեքենայի խցիկի կոնստրուկտիվ առանձնահատկությունների պատճառով չի կարելի ձեռքերը տեղափոխել «հինգանց կեսի» դիրքին (դեկանիվը հենվում է փորին, կըրծքին և այլն), հերթականությամբ իշեցրեք ձախ և աջ ձեռքերը և ափով կամ բըռունցքով հենվելով նըստարանին, աշխատեք բարձրացնել իրանը։ Այդպիսի վարժությունը թույլ է տալիս բավականին բարձրացնել աշխատունակությունը, հատկապես հերթափոխի երկրորդ կեսում։ Դա անհրաժեշտ է կատարել 20—30 րոպե ընդմիջումով, ընդ որում իրանը բարձրացնելիս ձեռքին կարող են օգնել մարմնի մկանները։


Մի քանի խռոք դեկանիվի ճաղերից բռնելու մասին։ Եթե ճանապարհային իրադրությունը բարդ չէ, դեկանիվը այդպես բռնել կարելի է, բայց 3—5 րոպեից ոչ ավելի։ Ավելի լավ է ձեռքի դաստակով բռնել




Նկ. 11. Ձեռքերի դիրքը մինչև դեկանիվի պտույտը։




Նկ. 12. Ձախ ձեռքը սահում է դեկանիվի շրջանակով։



Նկ. 13. Ձախ ձեռքը դեկանիվը պտտեցնում է դեպի ձախ, իսկ աջը սահում է նրա շրջանակի վրայով ներքև։



Նկ. 14. Ձախ ձեռքը ղեկանիվի շրջանակի վրայով սահում է վերև, աղը պտտում է այս:



Նկ. 15. Ձախ ձեռքը ղեկանիվը պտտում է դեպի ձախ, ինկ աղը նրա վրայով սահում է ներքեւ:

Քահանանելով անիվների հետ հետաղած փոփոխում, այլ տեղափոխեք հերթականությամբ, ղեկանիվը մի ձեռքից մյուսը հրելու միջոցով։ Նկ. 11—15-ում ցույց է տրվում ղեկանիվի պտույտի փուլերը դեպի ձախ։ Պտույտն ավարտելուց հետո ղեկանիվը անհրաժեշտ է վերադարձնել սկզբնական դիրքին, պահպանելով անիվների հետ հետաղարձ կազը, այսինքն, շարագացնելով նրա հետաղարձ շարժումը, բայց և ամբողջովին բաց շթողնելով այն, այլ սահունորեն կարգավորել ղեկանիվի ինքնաբերական վերադարձը նախկին դիրքին։

Հատուկ ուշադրություն է պահանջում վարորդների մարզումը հորիզոնական ղեկանիվներով, որոնցով սարքավորվում են ավտոբուսները և խցիկավոր վագոնանման թափքով

ղեկանիվի շրջանակը ճաղերի ամրացման տեղում, իսկ մատներից մեկը (ավելի հաճախ բութը) դրվի նրա վրա վրա։ Ընդորում բութ մասը ճանապարհի և դողերի շիման գոտում կառավարվող անիվների բեռնվածությունը որոշող զգայուն էլեմենտ է։ Այդ ժամանակ ափը նույնիսկ կարող է պինդ չհրավել շրջանակին։ Բայց որևէ արգելքի վրայով ավտոմեքենայի անիվը անցնելու ամենափոքր վտանգի կամ սրընթացքամու հանկարծակի ազդեցության դեպքում բութ մատը ձեռքի դաստակին կարծես հրաման է տալիս և վերջինս ակնթարթորեն ամուր բռնում է ղեկանիվը։

Մի կատարեք ձեռքերի խաշածե փոփոխում, այլ տեղափոխեք հերթականությամբ, ղեկանիվը մի ձեռքից մյուսը հրելու միջոցով։ Նկ. 11—15-ում ցույց է տրվում ղեկանիվի պտույտի փուլերը դեպի ձախ։ Պտույտն ավարտելուց հետո ղեկանիվը անհրաժեշտ է վերադարձնել սկզբնական դիրքին, պահպանելով անիվների հետ հետաղարձ կազը, այսինքն, շարագացնելով նրա հետաղարձ շարժումը, բայց և ամբողջովին բաց շթողնելով այն, այլ սահունորեն կարգավորել ղեկանիվի ինքնաբերական վերադարձը նախկին դիրքին։

այլ ավտոմեքենաները։ Այստեղ որոշ բարդությունն այն է, որ չնայած մարդու համար դյուրին է ձեռքերով մանկրել միայն հորիզոնական հարթության մեջ, բայց բարդ իրադրություններում հաճախ պետք է ղեկանիվը պտտեցնել բավական մեծ անկյունով, իսկ այն հորիզոնական վիճակում տեղադրելիս այդպիսի մանկրի կատարումը ավելի դժվարանում է։ Այդ պատճառով վարորդները պետք է սովորեն ղեկանիվը բռնել արագ և առանց ձգելու։

Անհարթ ճանապարհներով, երկաթուղագծի վրայով երթևեկելու, սառցակալումները հաղթահարելու և այլնի ժամանակ ղեկանիվով կառավարելիս եղեք շատ ուշադիր։ Այդպիսի իրադրություններում վարորդի հիմնական խնդիրն է ավտոմեքենան պահել նախատեսված շարժման գոտում, որը երբեմն կապված է հոգեբանական մեծ լարվածության՝ հետ։ Այդպիսի դեպքերում ղեկանիվը պետք է ամուր բռնել՝ հատկապես բարձր արագությամբ երթևեկելիս։ Հակառակ դեպքում ղեկավարվող անիվը որևէ խոշնդոտի վրայով անցնելիս կարող է կտրուկ շրջվել և ղեկային շարժաբերի միջոցով ուժեղ և արագ պտտել ղեկանիվը։ Վարորդը դրանից հանկարծակի գալով կարող է իրեն վտանգի ենթարկել և ստանալ մատների և ձեռքերի ուկորների վնասվածքներ և հողախախտումներ։ Ձեռքերի այդպիսի վնասվածքները երբեմն հանգեցնում են ճանապարհատրանսպորտային պատահարների։

Ավարտելով ղեկանիվով ղեկավարելու մասին զրուցը, կցանկանայի ասել, որ ղեկանիվի պտտման անկյունային արագությունը պետք է անպայման համեմատական լինի ավտոմեքենայի շարժման արագությանը։ Անհրաժեշտ է մշակել վարման այնպիսի եղանակ, որը թույլ տա շատ սահուն տեղաշարժվել բանուկ մասով։ Դրա համար ցանկացած պահմաններում պետք է ղեկանիվը պտտել այնպես, ինչպես սառցակալված կամ ցեխոտ ծածկույթի վրայով երթևեկելիս։ Ավտոմոբիլային ճանապարհով երթևեկության այդպիսի ոեժիմը վարորդների և ուղևորների մոտ չի առաջացնում տհաճ զգացում, ավտոմեքենայի դողերի և շատ հանգույցների մեծ մաշվածության և ամենագլխավորը ավտոմեքենայի ճանապարհներում փոխգործողության ժամանակ վարորդներին հնարավորություն է տալիս լավ հասկանալու միմյանց։

ՎԱՐՈՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԽՅԻԿԻ ՄԻԿՐՈԿԼԻՄԱՆ

Խցիկի միկրոկլիման օդերևութաբանական պայմանների ամբողջությունն է՝ օդի ջերմաստիճանը, նրա խոնավությունն ու ճնշումը:

Խցիկում օդի ջերմաստիճանը հիմնականում կախված է արտաքին օդի ջերմաստիճանից և շարժիչի անջատած ջերմությունից: Այն պետք է լինի $+15^{\circ}\text{C}$ մինչև 25°C սահմաններում: Ամենաբարենպաստ ջերմաստիճանը $+18 + 20^{\circ}\text{C}$ է: Խցիկում ջերմաստիճանի վրա ազդում է ևս մեկ գործոն՝ ավտոմեքենայի գույնը: Եթե թափքը, վահանակները, պաստառը, դեկավարման միջոցները բաց գույնի են, ապա ավտոմեքենան արևի տակ կայանելիս այդ մասերը $8 - 10^{\circ}\text{C}$ պակաս են տաքանում, քան մուգ գույնով ներկված նույնպիսի մասերը: Երթևեկության ժամանակ, սակայն, այդ տարրերությունը փոքրանում է մինչև $1,5 - 2^{\circ}\text{C}$: Թեթևակի մթնեցված ապակիները կասեցնում են ճառագայթների $40 - 60 \%$ -ի ջերմությունը, որոնք անցնում են թափանցիկ ապակու միջով:

25°C -ից բարձր օդի ջերմաստիճանի պայմաններում աշխատանքը արագ հոգնեցնում է, հանգեցնում է ուշադրության թուլացման և ռեակցիայի ժամանակի մեծացման: Ջերմաստիճանի մինչև 35°C հետագա բարձրացման դեպքում մտավոր գործունեությունը վատանում է, ի հայտ են գալիս սխալներ, ուշադրությունը պակասում է մոտավորապես 10% -ով:

Օդի ջերմաստիճանի իշեցումը նույնպես բաժանաբար է ազդում մկանների աշխատանքի, շարժումների արագության և ճշտության վրա, վարորդը շատ սխալներ է կատարում:

Հետազոտությունները հաստատել են, որ ավտոմեքենայի խցիկում օդի ջերմաստիճանի 13°C դեպքում կատարվում է ավելի շատ ճանապարհատրանսպորտային պատահարներ, քան ամենաբարենպաստ ջերմաստիճանի դեպքում:

Հեղինակների մեծամասնության տվյալներով ավտոմեքե-

նաների խցիկում օդի ջերմաստիճանը պետք է լինի հետևյալ սահմաններում. ձմռանը $+15 \div +25^{\circ}\text{C}$, ամռանը $+18 \div +27^{\circ}\text{C}$:

Սուր բարեկամ է, թե՞ թշնամի: Ավտոմեքենայի խցիկի օդը կարող է պարունակել բենզինի գոլորշիներ և թունավոր գազերի վնասակար խառնուրդներ, որոնցից ամենավտանգավորը ածխածնի օքսիդն է (CO) կամ շմոլ գազը: Ածխածնի օքսիդը բանեցրած գազերի կազմում ճեղքերի միջով թափանցում է ավտոմեքենայի խցիկը: Մեքենայի խցիկի օդում ածխածնի օքսիդի կոնցենտրացիան բավականին բարձրանում է, հատկապես ձմռանը, երբ խցիկի լուսամուտը սովորաբար փակ է: Ավտոմեքենայի 1ս0 հաղար կմ-ից ավելի վազքի դեպքում շարժիչի մխոցային խումբը բավականին մաշվում է: Դրա հետևանքով բանեցրած գազերը ընկնում են շարժիչի կարտերի մեջ և յուղի լցման բկանցքով թափանցում կապուտի տակի տարածությունը, իսկ այնտեղից մտնում խցիկ:

Աշխատած գազերի պարունակությունը օդում կապված է ավտոմեքենայի շարժման արագության հետ: Ավտոմոբիլային տրանսպորտի գիտահետազոտական ինստիտուտի (ԱՏԳՀԻ) տվյալներով ԶԻԼ-ՄՄՁ-555 ավտոմեքենան (վազքը՝ 130 հազ. կմ) բեռով 35 կմ/ժամ արագությամբ շարժվելիս CO-ի կոնցենտրացիան խցիկի օդում հասնում է 135 մգ/մ³: Աշխատանքային միջավայրի օդում CO-ի կոնցենտրացիայի թույլատրելի սահմանը ՄԾՀՄ Պետշինի որոշման համաձայն կազմում է 30 մգ/մ³, Մինչև 50—60 կմ/ժամ արագությունը բարձրացնելու հետ միասին CO-ի կոնցենտրացիան 10—15 րոպեի ընթացքում իջնում է մինչև 25 մգ/մ³-ի, որը բացատրվում է ավտոմեքենայի խցիկում օդափոխանակության մեծացմամբ և օդի հանդիպակաց հոսքի կողմից ձայնմարիչից դուրս գալու ժամանակ բանեցրած գազերի արագ արտածմամբ: Իսկ վնասակար խառնուրդների ամենամեծ քանակը, այդ թվում նաև CO-ի, գոյանում է շարժիչի պարապ ընթացքով աշխատելու ժամանակ:

Այդ դեպքում ավտոմեքենայի խցիկի օդային միջավայրում CO-ի կոնցենտրացիան ավելանում է մի քանի անգամ, երբեմն հասնելով մինչև 625 մգ/մ³-ի:

Ինչպես «շոշափել թունավորումը»: Մարդու թունավորման աստիճանը և նշանները շափազանց տարբեր են: Դրանք կախված են օդում CO գազի կոնցենտրացիայից և մարդու օրգանիզմի վրա ազդեցության տևողությունից: Սովորաբար թունավորվածությունը ուժեղանում է համեմատաբար դանդաղ: Թեթև թունավորվածության դեպքում սկզբում առաջանում է ընդհանուր թուլություն, գիշացավ, աշքերում մթագնություն, լսողության թուլացում, ֆիզիկական ծանրաբեռնվածության դեպքում գիշապտույտ:

Հետագայում աճում է ալկոհոլային արթեցում հիշեցնող գրգռվածությունը:

Մանր դեպքերում նկատվում է նաև մկանային կտրուկ թուլություն, գիտակցության թուլացում, քնկութություն, սըրտխառնոց և փսխում:

Բանեցրած գազերի նվազագույն շափը: Բանեցված գազերով օդի թունավորման դեմ պայքարի հիմնական ուղիներն են. շարժիչի մանրակրկիտ կարգավորումը (կարգավորված շարժիչը մոտավորապես 10 անգամ պակաս ածխածնի օքսիդ է անջատում, քան չկարգավորվածը), ներքին այրման շարժիչի բանվորական ընթացքի լավացումը, որի հետևանքով իջնում է բանեցված գազերի թունավորությունը, խցիկի հատակը փակող անցքերի ռետինե միջադիրների մանրակրկիտ տեղադրումը, խցիկի տաքացման և օդափոխման համակարգերի արդյունավետության բարձրացումը (օդափոխման համակարգը անհրաժեշտ է օգտագործել նույնիսկ օդի ցածր ջերմաստիճանի դեպքում):

Հիշեցեք, որ բանեցված գազերում ածխածնի օքսիդի պարունակությունը մեծանում է պարզ ընթացքի և հատկապես՝ կտրուկ ձեռվ է մեծանում անսարք շարժիչի դեպքում: Շատ վտանգավոր է լինել այնպիսի կառույցում, որտեղ՝ գտնվում է աշխատող շարժիչով ավտոմեքենայի խցիկում քնել կամ երկար ժամանակ հանգստանալ:


Նստարանի տակ բենզինով լի տարաներ մի փոխադրեք: Անման սիստեմի անսարքինության դեպքում ավտոմեքենայի խցիկ են թափանցում բենզինի գոլորշիներ, որոնք կարող են վարորդի մոտ առաջացնել սուր կամ խրո-

նիկական թունավորվածություն (նկ. 16): Սուր թունավորում տեղի է ունենում 5—10 մգ/լիտր կոնցենտրացիայով բենզինի գոլորշիներ պարունակող օդը շնչելիս: Խրոնիկական թունավորվածությունը հաճախ կատարվում է օրգանիզմի վրա բենզինի գոլորշիների փոքր կոնցենտրացիաների երկարատև ազդեցության դեպքում:

Այն արտահայտվում է բարձր դյուրագրգոռությամբ, գըլխապտույտով և սրտի աշխատանքի թուլացմամբ: Բենզինի գոլորշիների թույլատրելի սահմանային պարունակությունը օդում 0,3 մգ/լ է:

Որքան լավ..., այնքան վատ: Ընդհանրապես ցանկացած բենզինի գոլորշիների ներշնչումը առողջությանը վնաս է: Հատկապես վտանգավոր է էթիլացված բենզինի գոլորշիներով թունավորվածությունը, որն ավտոմեքենայի համար լավ է, իսկ մարդու առողջության համար վատ: Էթիլացված բենզինի գոլորշիների 0,03—0,07 % կոնցենտրացիայի դեպքում 15 րոպե հետո առաջանում է թեթև թունավորվածություն (ի դեպքում, մարդն ընդհանրապես բենզինի գոլորշիների հոտը սկըսում է զգալ, երբ նրա պարունակությունը օդում գերազանցում է 0,03 % -ից): Այդպիսի թեթև թունավորվածության դեպքում առաջանում է գլխացավ, քթարմպանի գրգռվածություն, հաղ և շարժման ժամանակ հավասարակշռության ինչ որ չափի կորուստ, քնի խանգարում, ախորժակի վատացոա, գերքրտնածություն և ընդհանուր թուլություն: Տուժողը սկըսում լրնկնում է գրգռված վիճակի մեջ և հեշտությամբ նյարդայնանում: Այդ երևույթները մաքուր օդում մի որոշ ժամանակ հետո անցնում են:

Եթե էթիլացված բենզինի գոլորշիների քանակը օդում կազմում է 1,1—2,2 %, ապա թունավորումը վրա է հասնում 3 րոպե հետո, իսկ ավելի բարձր կոնցենտրացիայի դեպքում կարող է կատարվել 10—12 անգամ ներշնչելուց հետո: Բեն-



Նկ. 16. Բենզինով լի տարաներ մի փոխադրեք նստարանի տակ:



Նկ. 17. Վտանգավոր ուղեկիցը:

զինի գոլորշիների թունավորումից խուսափելու համար պետք է հետևողականորեն ստուգել շարժիչի սնման համակարգի վիճակը:

Պե՞տք է, արդյոք, օդափոխիչը: Լավ օդափոխությունը ամենահասարակ միջոցներից է, որի օգնությամբ դուք կարող եք ապահովել բարձր աշխատումակություն և մեղմացնել հոգնածությունը: Դժբախտաբար որոշ վարորդներ դա չգիտեն, իսկ շատերը մոռանում են այդ: Արդյունավետ օդափոխությունը ոչ միայն ավտոմեքենայի խցիկից հեռացնում է վնասակար գազերը և բենզինի գոլորշիները, որոնց վարորդը արագ ընտելանում է և դադարում դրանք զգալ: Շատ կարևոր է և այն հանգամանքը, որ օդափոխումը խցիկի օվը թթվածնով հարստացնում է և հետևաբար երկարածում վարորդի մուտքան հոգնածության ի հայտ գալու պահը:

Վտանգավոր ուղեկիցը: Վարորդին ավտոմեքենայում մըշտական ուղեկցում է տեսած և նույնիսկ վտանգավոր մի ուղեկից՝ աղմուկը: Աղմուկը (նկ. 17) բացասական ազդեցություն է ունենում մարդու անմիջապես լսողական օրգանների վրա և առաջացնում բարձրագույն նյարդային գործունեության խանգարում: Աղմուկի ազդեցության տակ երկարում է խթանող ուեակցիայի գաղտնի շրջանը: Աղմուկի ազդեցությունը արտահայտվում է պարզ տեսնելու կայունության նվազմամբ, մթնշաղում տեսողության թուլացմամբ, շարժումների ներդաշնակության, վեստիբուլյար սարքի ֆունկցիայի խանգարմամբ, անժամանակ հոգնածությամբ: Աղմուկին արձագանքում է նաև սրտանոթային համակարգը, փոխվում է սրտի կծկման ռիթմը (տախիկարդիա), լայնանում կամ նեղանում են անոթները, որը հանգեցնում է հիպերտոնիայի: Աղմուկը ազդում է նաև շնչառության վրա (փոխվում է նրա ռիթմը), աղմուկի ազդեցությունից բավական հաճախ առաջանում է նաև մարսողության խանգարում:

Որքան բարձր է ձայնի հաճախականությունը, այնքան մեծ է նրա հոգնեցնող ազդեցությունը: 2—4 կիլոհերց հաճախականությամբ աղմուկը 80 դր դեպքում (մետրոյի կանգ առնող գնացքի աղմուկը) հոգնեցնող ազդեցություն է ունենում, իսկ երբ աղմուկի ուժգնությունը հասնում է 90 դր (մոտակայքում կանգնող ՄԱԶ ավտոմեքենայի շարժիչի դղրդյունը), հոգնածություն է առաջանում նաև բարձր հաճախականության բացակայության դեպքում: Գտնում են, որ ինտենսիվ աղմուկի ազդեցության տակ աշխատանքի արտադրողականությունը կարող է իջնել 17 %-ով, և աղմուկը կարող է աշխատանքում կատարված պայմանների, արագ հոգնածության և ընկավածության պատճառ դառնալ:

Կարելի՞ է, արդյոք, խցիկը վերածել խոլ կամերայի: Վարորդին չի կարելի ամբողջովին մեկուսացնել խցիկից դուրս առաջացած ձայներից, քանի որ նա պետք է ընկալի վազանցող ավտոմեքենայի ձայնային ազդանշաններն, իր ավտոմեքենայի շարժիչի աշխատանքից առաջացող ձայնը և այլ արտաքին աղմուկները, որոնք անհրաժեշտ են ճանապարհային իրադրությունում կողմնորոշչելու և այն գնահատելու համար:

Հետազոտողները ավտոմեքենայի վարման ժամանակ խորհուրդ են տալիս աղմուկի նվազեցման համար կատարել հետևյալ պաշտպանիչ միջոցառումները. շարժիչի կապոտի տակի մասում ձայնակլանիչ պաստառում (պետք է տեսնել, որ այն բացի շարժիչի աղմուկի կլանումից մեղմացնում է նաև կապոտի վիրացիան), ներքին պաստառում (հատկապես աղմուկը կլանում է արդյունավետ ձեռվ, երբ պաստառի տակ դրվում է տակդիր), թափքի առաստաղի պատումը ձայնակլանիչ նյութով (մեղմացնում է տանիքի վիրացիան և կլանում առաջացրած աղմուկը), մետաղական մակերևույթների ծածկվելը ձայնակլանիչ նյութերով (ուղեթեռային տեղի կափարիլը), հենոցի ռետինե միջադիրների օգտագործումը:

Անհարթ մակերևույթ ունեցող ճանապարհով շարժվող ավտոմեքենան ենթարկվում է տարբեր ամպլիտուդայի և հաճախականության տատանումների: 16—18 հերց հաճախականությամբ տատանումները մարդու կողմից ընկալվում են ոչ թե միմյանցից մեկուսացված, այլ միաձույլ, ինչպես վիր-

րացիան։ Ավտոմեքենայում վիրրացիայի աղբյուրները նույնն են, ինչ որ աղմուկինը։ Վիրրացիան աճում է ավտոմեքենայի շարժման արագության մեծացման, ճանապարհի վատացման, ինչպես նաև օգտակար բեռնվածության նվազման դեպքում։

Վիրրացիայի աղղեցությունը մարդու վրա որոշվում է նրա ամպլիտուդայով և հաճախականությամբ։ Վիրրացիայի աղղեցության տակ վատանում է տեսողական ընկալումը, նվազում է ուշադրությունը, դանդաղում է հոգեշարժային ռեակցիան, պակասում է գործողությունների ճշտությունը։ Մարդու վրա վիրրացիայի երկարատև աղղեցությունը արագ է բերում հոգնածություն, գլխացավ։ Վիրրացիայի աղղեցությանը ավելի հաճախ ենթարկվում են ծանր բեռնատար ավտոմեքենաների վարորդները։ Վիրրացիայի բացասական աղղեցությունը օրգանիզմի վրա բավականին ուժեղանում է, եթե այն զուգակցվում է աղմուկի հետ։

ՀԱԳՈՒԱԾԸ ԵՎ ԿՈՇԽԿՆԵՐԸ

Ոչ թե նորաձեռություն, այլ հարմարավետություն։ Ցուրաքանչյուրն ունի լողափի, տան, ռեստորանի համար նախատեսված հագուստի մասին իր կարծիքը, եվ, բնականաբար, ինչ հագուստով որ տնից դուրս եք գալիս, նույն հագուստով էլ մեքենան եք վարում։ Հետևեք ձեզ, թե ինչպես եք երրեմն նստարանի վրա «շուր ու մուռ գալիս» ամբողջ ուղևորության ընթացքում։ Անհրաժեշտ է, որ հագուստների գործվածքներն ունենան բավականաշափ օդաթափանցելիություն, լինեն փափուկ, առաձդական, շառաջացնեն մաշկի գրգովածություն և ապահովեն մարմնի և շրջապատի միջավայրի միջև խոնավության անհրաժեշտ փոխանակում։


Զմուանը խցիկում օդի ջերմաստիճանը կարող է փոխվել հերմետիկությունը խախտելիս և դռները բացելիս, Դուրս գալով խցիկից, դուք ենթարկվում եք օդի ջերմաստիճանի կտրուկ փոփոխությանը և սառը քամու կամ անձրևի աղղեցությանը։ Սակայն չափազանց տաք հագուստը այդպիսի դեպքերում ամենաին էլ պաշտպանիչ միջոց չէ (նկ. 18)։ Այդպիսի հագուստը ուժեղ քրտնեցնում է, որը կարող է պատ-

Ճառ դառնալ հիվանդության, երբ դուք տաքացած և քրտնած դուրս գաք ավտոմեքենայից: Ամռանը օդի ջերմաստիճանը խցիկում կարող է բարձրանալ մինչև $+30^{\circ}\text{C}$ և ավելի: Տարվա շուրջ եղանակին վարորդի բանվորական հագուստի նկատմամբ հիմնական պահանջներն են՝ օդաթափանցելիությունը և բաց գույնը, քանի որ գործվածքների կողմից արևի տեսանելի ճառագայթների կլանման հատկությունը այնքան կախված չէ նրա որակից, որքան գույնից:

Երկրի հարավային շրջաններում տարվա շուրջ ժամանակ նպատակահարմար չէ մերկանալ մինչև գոտկատեղը, ինչպես դա անում են շատ վարորդներ, փորձելով թուլացնել շոգի (հոգնեցնող) ազդեցությունը: Այդպիսի դեպքում քրտինքը հոսում է, չի մնում մարմնի վրա և վարորդը զրկվում է նրա գոլորշիացման հետևանքով առաջացած սառեցնող ազդեցությունից: Այդ պատճառով շուրջ ժամանակ նպատակահարմար է հագնել բամբակե ցանցաշապիկ, որը ներծծում է քրտինքը, նպաստում նրա գոլորշիացմանը և, հետևաբար, հովացնում մարմինը:

Վարորդական մոկասիններ: Վերջին ժամանակներում վարորդների կոշիկներին ավելի ու ավելի մեծ ուշադրություն են դարձնում: Որոշ հետազոտողներ գտել են, որ կոշիկի ձևը բավականին ազդում է երթևեկության անվտանգությանը: Համեմատաբար բարձր կրունկներով կանաց և տղամարդկանց կոշիկները թափքի հատակի փափուկ ռետինե գորգի առկայության դեպքում արգելակման հուսալիությունը իջեցնում են ավելի քան 2 անգամ:

Կոշիկներն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալը. կոշիկը պետք է լինի պինդ և չսահող ներբանով, լայն ու ցածր կրունկով ($2-3$ սմ-ից ոչ ավելի): Ամռանը, որպես բանվորական կոշիկ, բոլորովին պիտանի չեն հողաթափերը: Դրանք ոտքերը վատ են պաշտպանում մեխանիկական վնաս-



նկ. 18. Հագուստը և կոշիկները:

վածքներից, արագ լայնանում են, ամուր չեն գրկում ոտնաթաթերը, որը բացասաբար է անդրադառնում ղեկավարման ոտնակներով աշխատելուն և պատճառ դառնում սխալների Բացի դրանից, Հողաթափերն արագ հոգնեցնում են ներքանների մկանները։ Աշխատանքի համար պիտանի չեն նաև ոետինե կոշիկները (կեղիները և այլն), քանի որ նրանցում խախտվում է ոտնաթաթերի օդափոխությունը, ուժեղանում է քրտնոտությունը, իսկ երբեմն էլ ճաքում է մաշկը։

Զմունը նպատակահարմար չէ օգտագործել պոլիվինիլ-քլորիդային նյութերից պատրաստված կոշիկները, քանի որ խցիկից դուրս ցածր ջերմաստիճանի դեպքում այդպիսի կոշիկներն արագ դառնում են կոպիտ՝ ու կոշտ, որից հետո որոշ ժամանակ դժվարացնում են աշխատանքը։ Տարվա ցանկացած եղանակին անհրաժեշտ է օգտագործել գուլպաներ, ավելի լավ է բամբակե, քանի որ առածգական գուլպաները պակաս հիդրոսկոպիկ լինելու պատճառով չեն ներծծում քրտինքը և ցուրտ ժամանակ վատ են պաշտպանում ոտքերը սառչելուց, Անվտանգության համար ամենակարևորը կոշիկների ներքաններն ու լեզվակներն են, որոնք չպետք է կառչեն ոտնակներից և այլ առարկաներից։ Կոշիկների կամ կիսակոշիկների լայնությունը պետք է լինի այնպես, որ ոտքերը հատակից ոտնակի վրա և ոտնակից ոտնակ կայծակնային արագությամբ փոխադրելիս, ունատով կամ շափազանց նեղ ու երկար լեզվակով, շկառչեն ոտնակներին, ավտոմեքենայի թափքում կամ խցիկում եղած ելուստներին և գորգին։

Վարորդների համար ձեռքի տակ, ավելի ճիշտ «ոտնատակում» եղածից ամենից լավը «տանկետկա» (առանց կրունկի) տիպի ներքաններով սպորտային կիսակոշիկներն են։

Այդպիսի կիսակոշիկների ներքանները պատրաստվում են մանրանցքավոր ոետինից։

Վարորդ կանայք ցանկալի է, որ կրեն տղամարդու կոշիկի ձևի տուֆլիներ կամ էլ խնայելով իրենց նորածե կոշիկները, ոտքը երբեք չդնեն փափուկ գորգով պատված խցիկի հատակին։

Այժմ թողարկվում են ավտոմեքենաներում օգտագործվող մոկասիններ, որոնք շատ թեթև են և հարմար։ Ներքանը պատ-

բաստված է այնպես, որպեսզի ոտքը զգա ոտնակը և միաժամանակ շցավիւ Այդպիսի կոշիկի «պահպանաշերտը» ունի «ոտնակին չկառչելու» և «ոտնակին չկպչելու» հատկություն, որոնք, ինչպես էլ ոտքը դնելու լինեք, հնարավորություն չեն տալիս ոտնակից դուրս ընկնել։ Բայց այդ կոշիկների ամենաառաջադրավը կրունկներն են։ Այն վարորդին չի խանգարում ոտքը տեղափոխել ցանկացած փափուկ գորգի վրա։ Այդպիսի կրունկը հենարանային մակերեսութիւն հետ հպման տեղում շունի կտրուկ ընդգծված եզրեր, որը հնարավորություն է տալիս ոտքը դնել շատ հարմար, իսկ ներբանը՝ ոտնակի վրա դնել ցանկացած անկյան տակ։ Ըստ որում ոտքի համար ապահովվում է մեծ կայունություն, իսկ դա պակաս կարեւը գործոն չէ անվտանգ երթևեկության համար։

ՍՆՈՒՆԴԸ

Ոչ միայն հացիվ։ Վարորդի համար սննդի ճիշտ կազմակերպումն հատկապես կարեւը նշանակություն ունի (նկ. 19), քանի որ սննդի ռեժիմը խախտելիս խանգարվում է մարդու հոգեկան գործունեությունը և արագանում հոգնածությունը։ Սննդի կազմակերպումը կախված է վարորդի աշխատանքի առանձնահատկություններից, որը սովորաբար զրկված է իր ձեռնարկության ճաշարանում սնվելու հնարավորությունից և ստիպման է օգտվել ճանապահութեան մուան առաջաններից, հաճախ շպանպանելով սննդի ընդունման սովորական ժամանակը։

Վարորդի աշխատանքային գործունեության առանձնահատկությունները շպետք է ազդեն սննդի ընդունման միջև եղած ժամանակամիջոցների ճիշտ պահպանման վրա։ Պետք է ձգտել, որպեսզի նախաճաշի, ճաշի և ընթրիքի միջև եղած ընդմիջումները շգերազանցեն 4—5 ժամից։ Երկարատև ընդմիջումը (7 ժամից ավելի) մարսողության ապարատի անհավասարաշափ ծանրաբեռնման հետևանքով մարսողության համար ստեղծում է անբարենպաստ պայմաններ, իսկ առատ կերակուրը նպաստում է քննկոտության առաջացմանը, որը վտանգավոր է վարորդի համար։


Մեկ օրվա «հաբը»: Վարորդի օրաբաժին սննդի կալորիականությունը (միջինը 3500 կալորիա) 3 անգամ կերակրվելու դեպքում մոտավորապես պետք է բաժանվի հետևյալ ձևով. նախաճաշին՝ օրվա կալորիականության 30 % -ը, ճաշին՝ 45—50 % -ը և ընթրիքին՝ 20—25 % -ը: Ամռանը, շուտ կլիմայի պայմաններում, երբ ախորժակ չի լինում, ճաշի կալորիականությունը պետք է պակասեցվի մինչև 30—40 %, իսկ ընթրիքինը՝ մինչև 30 %: Ցուրտ կլիմա ունեցող վայրերում օթարաժնի բաժանումը սովորականից շի տարրերվում: Չորս անգամ սնվելու դեպքում կերակուր ընդունելու միջև ընկածժամանակամիջոցը պակասում է, որի հետևանքով մարսման համար ավելի բարենպաստ պայմաններ է ստեղծվում: Վարորդի սնման ռեժիմում նպատակահարմար է մտցնել թեթև նախաճաշ (առաջին նախաճաշի և ճաշի կալորիականությունը պակասեցնելու հաշվին), որը պետք է համատեղել 3—4 ժամ աշխատանքից հետո կատարվող հանգստի հետ: Մսեղենը խորհուրդ է տրվում օգտագործել ճաշին և նախաճաշին: Բուսական սնունդը և կաթնամթերքները նախընտրելի են ընթրիքի ժամանակ, որը պետք է անել քնից 1,5—2 ժամ առաջ:

- Զուր խմելու ռեժիմը: Վարորդի աշխատունակության բարձր մակարդակը պահպանելու համար մեծ նշանակություն ունի զուր խմելու ռեժիմի պահպանումը: Մարդու օրական ջրի պահանջը (մոտ 1,5—2 լիտր) տարբեր պայմաններից կախված կարող է փոփոխվել (տարվա եղանակից, խցիկում օդի ջերմաստիճանից, աշխատանքի բնույթից և այլն): Ուզեկորության ժամանակ ջրի ավելորդ օգտագործումը տանում է օրգանիզմը հեղուկով ծանրաբեռնման, դժվարացնեամ է սրտի աշխատանքը, իցեցնում է աշխատունակությունը: Վարորդը ճանապարհին յուրաքանչյուր հնարավորության դեպքում շպետք է զուր խմի, առավել ևս պատահական աղբյուրներից: Մարավը լավ է հագեցնում տաք թեյը: Կարելի է խորհուրդ տալ նաև սուրճ, որպես որոշակի շափով օրգանիզմի տոնուսը բարձրացնել և հոգնածությունը թեթևացնող միջոց:

Վարորդը պետք է գիտենա, որ ժարավի զգացումը կարող է առաջանալ ոչ միայն կապված օրգանիզմում շրի անբավա-

բարության հետ, այլև բերանի և քթաղմականի լորձաթաղանթի շորացման հետեւանքով (խարուսիկ ծարավ): Այդպիսի դեպքերում բավական է թերմոսից ջրի մի քանի կում խմել, աշխատելով այն երկար պահել բերանում: Վերջին ժամանակներում մասնագետները եկել են այն եզրակացության, որ Ծ վիտամինը ակտիվորեն է ազդում ռեակցիայի արագության վրա, դրա համար անհրաժեշտ է օգտագործել այդ վիտամինի մեծ դոզա՝ 1-ից 2 գ (կարելի է ուտել 25—50 գ կիտրոն կամ ընդունել ասկորբինային թթվի մեկ հար): Գծում աշխատելու պայմաններում կամ ճանապարհորդելիս ցանկալի է որքան կարելի է շատ թարմ մրգեր օգտագործել: Այդ դեպքում օրգանիզմը կստանա ոչ միայն Ծ վիտամին, այլև մրգաշաքար: Հատկապես օգտակար է խնձորը:

Սնունդն ընդունելու միջև ընկած ժամանակը երկարաձգելիս, որ երբեմն երկար ուղեմասեր անցնելիս անխուսափելի է, արյան մեջ շաքարի պարունակությունը կտրուկ իջնում է: Դա կարող է առաջացնել նյարդայնության, հոգնածության նշաններ, գլխացավ, իսկ դրանց հետեւանքով՝ ողբերգական գեպքեր, որոնց բացատրումը վթարներով զբաղվող փորձագետներին կանգնեցնում է փակուղու առջեւ:



Նկ. 19. Սնունդը ճանապարհին:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԵԺԻՄԸ

Երբեք կության ստրատեգիան և տակտիկան: Տարեցտարի ավտոմեքենաներն ավելի հաճախ են ուղեռուվում հեռավոր երթերի: Որոշ ընթերցողներ կասեն՝ «Դա լավ է»:— Զե՞ս որ քաղաքամերձ ճանապարհներով ավտոմեքենան վարելը անհամեմատ ավելի հեշտ ու հասարակ է, քան ժամանակակից քաղաքներում, իր եռուղեռներով, ուշադրությունը շեղող ռեկլամներով, յուսացուցների մոտ անվերջ կանգառներով և այլն: Եվ ընթերցողը չի կուհում, որ հատկապես այդպիսի

պարզության մեջ է թաքնված հեռավոր երթ կատարող վարորդի աշխատանքի բարդությունը, որը մեկնարկ վերցնելով, ենթադրենք Մոսկվայից, որոշակի ժամանակ հետո պետք է լինի Սիմֆերապոլում կամ Քիչնեռում, Վարչավայով կամ Բուխարեստում։ Զէ՞ որ մի բան է մեկ կամ ժամուկես ավտոմոբիլային ճանապարհով հասնել մինչև սեփական ամառանողը և բոլորովին այլ բան՝ բազմաթիվ օրերի ընթացքում անիվներին «փաթաթել» ճանապարհի անվերջ ժապավենը։

Հեռավոր երթի ժամանակ վարորդը հաճախ միայնակ է մնում։ Նման մենակությունը առաջ է բերում աշխատանքի և հանգստի ոեժիմի խախտում, առաջացնում է լրացուցիչ հոգնածություն։ Երբ վարորդը միայնակ գնում է միօրինակ ճանապարհով, նրա մոտ առաջանում է թուլություն, ճանապարհային իրադրության ընկալումը թուլանում է, մտքերը ցրվում են կամ ակամա անդրադառնում է երթնեկության հետ ոչ մի կապ չունեցող ինչ-որ մի խնդրի կամ իրադարձության։ Վերացական մտապատկերները (երբեմն այսպես կոչված ցերեկային քունը) վարորդի ուշադրությունը բոլորովին կլանում են և նրան շեղում շրջապատի պայմաններից։ Այդ պատճառով նրանք, ովքեր 3 ժամից ավելի ավտոմեքենան վարում են, պետք է կազմեն ուղևորության ծրագիր, այսինքն ընտրեն բանվորական օրվա ստրատեգիան և տակտիկան։

Տվյալ դեպքում ստրատեգիա ասելով պետք է հասկանալ ճանապարհի տեսողության, ցերեկը և գիշերը անցնելիք ուղեմասի երկարության, ամբողջ ուղեմասում առանց կանգառի շարժվելու ժամանակի, սնվելու միջև ընկած ժամանակամիջոցների որոշումը և այլն։ Ստրատեգիա ասելով հասկացվում է նաև մեկնման և ժամանման կետերի միջև շարժման առավել անվտանգ և շահավետ երթուղու ընտրությունը։ Օրինակ, բարդ ճանապարհային պայմաններով տեղամասը ավելի լավ է անցնել ցերեկը՝ երթնեկության ամենապակաս ինտենսիվության ժամերին։ Եթե երթուղում հանդիպում է շրջանցում շունեցող քաղաքներ, ապա դրանք պետք է անցնել կամ մինչև ավտոմեքենաների մասսայական ձևով աշխատանքի դուրս գալը, կամ երբ դրանք ապակենտրոնանում են քաղաքում, կամ էլ երբ մեծ մասը ավարտում են իրենց աշխատանքը։

Վարման տակտիկա ասելով հասկացվում է որոշակի տեղամասում երթևեկության անվտանգ և շահավետ ռեժիմի ընտրումը, կախված ճանապարհային պայմանների զուգակցումից։ Այլ կերպ ասած դա ավտոմոբիլային ճանապարհին տեղական պայմաններից կախված երթևեկության ռեժիմի ընտրումն է։

Անվտանգ երթևեկության կազմակերպման կարևորագույն հարցը վարորդի աշխատաժամանակի նորմայավորումն ու բաշխումն է, քանի որ բացահայտ հոգնած վիճակում ավտոմեքենան վարելը վտանգավոր է։

Ուժասպառությունը վարորդի քշնամին է։ Ճանապարհային երթևեկության կանոնները վարորդին արգելում են տրանսպորտային միջոցները վարել ուժասպառության այնպիսի աստիճանում, որը կարող է ազդել անվտանգ երթևեկության վրա։ Սակայն ձեզ համար դժվար է որոշել ուժասպառության աստիճանը, որի դեպքում դուք չպետք է ավտոմեքենա վարեք, քանի որ հոգնածության և ուժասպառության արտահայտման աստիճանները կարող են չհամընկնել։ Հոգնածությունը կարող է քողարկվել հուղական գոգովածությամբ և այլ գործոններով։ Այդ դեպքում դուք չեք զգում ուժասպառությունը, բայց այն կարող է արտահայտվել հանկարծակի աշխատունակության կտրուկ իշեցմամբ կամ քընկուաթյամբ։ Իհարկե հոգնածությունը որպես ուժասպառության սուբյեկտիվ արտացոլում, կարող է վարորդին օգնել իր աշխատունակությունը գնահատելու համար։ Բայց հոգնածության աստիճանը չպետք է լինի աշխատունակության գնահատման մշտական շափանիշ։

ՍՍՀՄ ՆԳՄ համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի տվյալներով, վարորդը ավտոմեքենան երկարժամանակ վարելու դեպքում (7-ից մինչև 12 ժամ) քնելու հետևանքով ճանապարհատրանսպորտային պատահար է կատարում մոտավորապես 2 անգամ ավելի հաճախ, քան մինչև 7 ժամ աշխատանքի տևողության դեպքում։ 12 ժամից ավելի աշխատելու դեպքում այդ պատահարները նույն պատճառով մեծանում են 9 անգամ, 12 ժամյա աշխատանքից հետո մահացությամբ ճանապարհատրանսպորտային պատահարները առաջանում են 1,5 անգամ ավելի հաճախ, քան 8-ժամյա

աշխատանքային օրվա դեպքում։ Դրանից հետեւմ է, թե որքանով հրատապ է վարորդի աշխատաժամանակի կարգավորումը։

Հատկապես ծանր է երթուղային ավտոբուսների վարորդների աշխատանքը, երբ նրանք աշխատում են հերթափոխում 12-ական ժամ։ Սովորական հոգնածության հետ միասին, նրանց համար բնութագրական է բարձր նյարդահուզական լարվածությունը։ Ամբողջ 12 ժամ աշխատանքի ընթացքում նրանք պարտավոր են ավտոբուսը վարել, խստորեն պահպանելով ամփոփոխ չվացուցակը (2 րոպեից ոչ ավելի շեղումով), հետևել ճանապարհին, լուսացույցին, անցորդներին, պահպանել շարժվող մեքենաների միջև անհրաժեշտ հեռավորությունը և այլն։ Բացի դրանից, նրանց պարտականությունների մեջ է մտնում ուղևորների նստելուն և իջնելուն հետևելը, կանոնավոր կերպով կանգառները հայտարարելը, ուղևորներին երթևեկության և ուղեթեռի տեղափոխման համար անհրաժեշտ վարձի վճարման մասին հիշեցնելը, աբոնենտային գրքույկներ, ամսական ուղետումսեր վաճառելը, ավտոբուսում կարգուկանոնին հետևելը և այլն։

Մի շարք ավտոտրանսպորտային ծեռնարկությունների գործերի վիճակի հետ ծանոթացումը ցույց է տվել, որ վարորդները շեն դիմանում նման լարվածությանը և սովորաբար 40—45 տարեկան հասակում 12 ժամյա աշխատանքային օրից անցնում են 8—9 ժամյա աշխատանքի, թեև աշխատանքի կազմակերպման այդ համակարգն էլ աշխատանքային օրվա վաղ սկսելու պատճառով ունի իր բացասական կողմերը։

Լենինգրադի Ժդանովի անվան պետական համալսարանի աշխատանքի Փիզիոլոգիայի լաբորատորիայի կատարած հետազոտությունները տալիս են այդ երևութիւնիմնավորումը։ Օրումեջ 12-ժամյա աշխատանքը մարդկանց մեծամասնության մոտ առաջ է բերում Փիզիոլոգիական համակարգի կտրուկ փոփոխություններ։ Աշխատանքի Փիզիոլոգիայից հայտնի է, որ ուժասպառության և գերուժասպառության դեմ պայքարի ամենալավ մեթոդը աշխատանքային գործունեության և հանգստի ճիշտ զուգակցումն է։ Սովորական աշխատանքային հերթափոխի ընթացքում փորձված վարորդների

շրջանում հոգեֆիզիոլոգիական փոփոխությունները մեծ չեն։ Պակաս փորձ ունեցողների շրջանում (մինչև երեք տարի ստաժով) այդ փոփոխությունները նշանակալի են։ Այն սկզբում է ի հայտ գալ արդեն շորսժամյա աշխատանքից հետո և ուժեղանում է հերթափոխի վերջում։

Աշխատաժամանակը 8 ժամից ավելի երկարացնելու դեպքում, այդ թվում նաև փորձառու վարորդների մոտ, օրգանիզմում մեծանում են փոփոխությունները։ Այդ է վկայում նաև դժբախտ դեպքերի վիճակագրությունը։

Դժբախտ դեպքերի թիվը հատկապես կտրուկ աճում է 10-ժամյա անընդհատ աշխատանքից հետո։ Ուժասպառությունը խիստ մեծանում է քնատության պայմաններում։ Ինչպես ցույց են տվել հետազոտությունները, այդ պայմաններում վարորդների 60 %-ը սկսում են քնել արդեն 3,5-ժամյա աշխատանքից հետո։ Եթե վարորդը հերթափոխի նախօրյակին բավականաշափ չի հանգստացել, ապա աշխատանքի տևողության կրճատումը նրան չի փրկի վաղաժամ ուժասպառությունից։

Ուժասպառության աստիճանի պակասեցման կարևոր գործոնը աշխատանքի ժամանակ կարճատե ընդմիջումների կատարումն է։ Հաստատված է, որ ավելի նպատակահարմար է կարճատե ընդմիջումները համեմատաբար կարճատե աշխատանքից հետո, քան երկարատե ընդմիջումները տևական աշխատանքից հետո։ Հիշեցեք, որ ավտոմեքենան երեք ժամ անընդհատ վարելուց հետո ամեն րոպե դուք դառնում եք ձեզ և շրջապատին վրանգի ենթարկող ավելի ու ավելի թերարժեք վարորդ։ Ավտոմեքենայով ուղևորության ամեն մեկ ժամից հետո անհրաժեշտ է կատարել հինգ րոպեանոց կանգառ։ 5 ժամից ավելի տևողությամբ վարելու դեպքում անհրաժեշտ է 30 րոպե տևողությամբ հանգիստ։ 8 ժամից ավելի առանց հանգստի ավտոմեքենայի վարումը բոլորովին աններելի է։

Զեխոսլովակյան աշխատանքի և մասնագիտական հիվանդությունների ինստիտուտը ու տրանսպորտի հետազոտական ինստիտուտը խորհուրդ են տալիս, օրինակ, 4 ժամ վարելուց հետո հինգ րոպեանոց, 5 ժամից հետո՝ 10 րոպեանոց, 6 ժամից հետո 15 րոպեանոց ընդմիջում կատարել։ Ցյուրի-

խի հիգիենայի և աշխատանքի՝ ֆիզիոլոգիայի ինստիտուտով մշակված է վարորդների աշխատանքի ժամանակ կատարվող ընդմիջումների հետևյալ կարգը. 3 ժամից պակաս տևողությամբ երթևեկության դեպքում՝ ոչ մի ընդմիջում, 3—5 ժամի դեպքում՝ ժամը մեկ անգամ 5-րոպեանոց ընդմիջում, 5 ժամից ավելի դեպքում՝ ժամը մեկ անգամ 5 րոպեանոց ընդմիջում, կանգառ, իսկ երկրորդ ժամից հետո՝ ավելի երկարատև կանգառ թարմացումով (թեյ, սուրճ), իսկ շորորդ ժամից հետո 30 րոպեից ոչ պակաս երկարատև ընդմիջում։ Ցանկալի է այդ ցիկլից հետո (6 ժամյա երթևեկությամբ) անել ավելի երկարատև ընդմիջում։ Երկու ինստիտուտներն էլ խորհուրդ են տալիս ընդմիջումները բաշխել հետևյալ կերպ. եթե ուղեղորությունը ծրագրված է 4 ժամ, ապա յուրաքանչյուր ժամից հետո կատարել 5 րոպեանոց, եթե 5 ժամ՝ 10 րոպեանոց, եթե 6 ժամ՝ 15 րոպեանոց ընդմիջում։

Երկու բանվորական հերթափոխների միջև պետք է պլանավորել ամենապակասը 10-ժամյա հանգիստ։ Հանգստի ժամը պետք է ընտրել այն հաշվով, որ հարմար լինի քնի համար, այդ պատճառով, որպես կանոն, պետք է հանգստանալ գիշերը և միայն բացառության՝ դեպքում՝ ցերեկը։ Եթե բանվորական հերթափոխը սահմանված ժամանակից ավելի է տևում, հանգիստը այդպիսի հերթափոխից հետո պետք է լինի 12 ժամից ոչ պակաս։ Երկու ոչ լրիվ հերթափոխների միջև հանգստի տևողությունը առանձին դեպքերում կարող է կրճատվել մինչև 8 ժամվա։

Հեռավոր երթերի ժամանակ ավտոմեքենան սովորաբար վարում է երկու վարորդ։ Այդպիսի դեպքերի համար ամերիկյան մասնագետները մշակել են հերթափոխության հետևյալ օրինակելի գրաֆիկը։

Այս գրաֆիկը կարելի է փոփոխել հետևյալ պահանջներին համապատասխան։ Վարորդն առանց հանգստի ավտոմեքենան վարի 5,5-ից կամ օրը 11 ժամից ոչ ավելի, յուրաքանչյուր վարորդ օրվա ընթացքում մինչև աշխատանքի սկիզբը պետք է հանգստանա 10 ժամ։

Լեհական հոգեբանները և բժիշկները հետաքրքիր տվյալներ են ստացել, որոնք հետազոտել են ավտորուսների և ծանր

	Ա վարորդ	Բ. վարորդ
Աշխատանքի սկիզբը	7.00	7.00
Հանգիստ	7.00—10.00	—
Ավտոմեքենայի վարում	10.00—13.00	7.00—10.00
Հանգիստ	13.00—15.00	10.00—13.00
Ավտոմեքենայի վարում	15.30—17.30	13.00—15.30
Հանգիստ	17.30—19.00	15.30—17.30
Ավտոմեքենայի վարում	19.00—21.00	17.30—19.00
Հանգիստ	—	19.00—21.00
Աշխատանքի ավարտը	21.00	21.00

բեռնատար ավտոմեքենաների 200 վարորդների աշխատանքը մի քանի օրվա ընթացքում։ Հետազոտումը կատարվել է նախքան աշխատանքը, իսկ այնուհետև յուրաքանչյուր 4, 6, 8 և 12 ժամը մեկ։ Եթե այդ ընթացքում վարորդների ֆիզիկական վիճակը լուրջ փոփոխությունների չի ենթարկվել, ապա հոգեկան վիճակը զգալի փոփոխվել է։ 6 ժամ անընդմեջ վարելուց հետո դիտողականությունը և ուշադրությունը 30%-ով նվազել են։ Բացի դրանից, հետազոտման ժամանակ հաստատվել է, որ 55 տարեկանից բարձր վարորդները 8 ժամից ավելի ավտոմեքենա չպետք է վարեն։

Աշխատանքից առաջ եկած ծանրաբեռնվածությունը և անբավարար քունը նախքան ուղևորությունը ավելի մեծ ազդեցություն է ունենում հոգնածության վրա, քան երկարատև ուղևորությունը։ Հաստատված է նաև, որ եթե վարորդն իր աշխատանքի ընթացքում ավտոմեքենայի վարումը համատեղում է նրա տեխնիկական սպասարկման և վերանորոգման հետ, ապա դժբախտ դեպքերի կողը ավելի կտրուկ տեսք ունի քան վարումը բեռնման-բեռնաթափման աշխատանքների մասնակցման հետ համեմատելիս։

Ուժասպառությունը բնութագրող ախտանիշը՝ քնկոտությունն է։ Այսպես, օրինակ, վիճակագրության տվյալներով ԱՄՆ-ում ճանապարհատրանսպորտային պատահարների մեջ ընկած բոլոր վարորդների 3,8 %-ը քնել են կամ ուժեղ ուժասպառվել։ ՍՍՀՄ մի շարք ավտոմոբիլային մայրուղիներում ռովետական հեղինակների տվյալներով, բոլոր ճանապարհատրանսպորտային պատահարների 1,5-ից մինչ 3 %-ը առաջացել են երկար և ուղղագիծ ճանապարհատվածներում վարորդների քնելու պատճառով։ Ավտոմեքենան վա-

բելիս գիշերը քունը ավելի արագ է վրա հասնում, իսկ ավելի հաճախ (դեպքերի 58 %-ը) կեսդիշերի և առավատյան ժամը 5-ի միջև ընկած ժամանակամիջոցում, ընդ որում գիշերային աշխատանքից առաջ ժամը 18-ից մինչև 20-ը չընած վարորդների մոտ ամենաշատ դժբախտ դեպքերն են կատարվում: Գիշերվա ժամերին ավտոմեքենա վարելը նյարդային համակարգի համար ամենալարված աշխատանքներից է: Քնելու մեծագույն վտանգը նկատվում է ժամը 12-ի և 15-ի միջև (դեպքերի 25 %-ը): Դրան նպաստող գործոններից մեկը ուղևորությունից առաջ կամ երթևեկության ընթացքում ընդունած ժանր և կոշտ սնունդն է:

Պարզվել է, որ վարորդի վրա բացասաբար է ազդում նրա կողքին քնած ուղևորը: Այդպիսի հոգեբանական ազդեցությունը նման է մարդկանց միջև հորանջը առանց պատճառի փխանցվելուն:

Հանրագումարի բերելով, կարելի է նշել, որ աշխատանքի ժամանակ վարորդի մոտ ուժասպառություն առաջացնող գլխավոր գործոնները հանգում են հետևյալ հիմնական խըմբերի. ավտոմեքենայի անընդեց վարման տևողությունը, ավտոմեքենան վարելուց առաջ վարորդի ծանրաբեռնվածությունը և հոգեկան՝ վիճակը. գիշերը ավտոմեքենա վարելը, երթեվեկության միապաղպությունը և միօրինակությունը, վարորդի բանվորական տեղի ամենաբարենպաստ հիգիենիկ պայմանները և տեխնիկական վիճակը:

Ուժասպառության նպաստիշները: Ճանապարհային տրանսպորտի հետազոտման բժշկական կենտրոնի (ԱՄՆ) գիտնականները գտնում են, որ ավտոտրանսպորտում գըժբախտ դեպքերի հիմնական պատճառներից մեկը համահիպնոսային վիճակն է, որի մեջ ընկնում են ավտոմեքենաների վարորդները: Այսպես կոչված արհեստական քնկոտության այդ վիճակը մինչև այժմ դեռևս քիչ է ուսումնասիրված: Սակայն, ինչպես ցույց են տվել դիտումները, ճանապարհային համահիպնոսը ամբողջովին համապատասխանում է հիպնոսային քնի դասական գաղափարին:

Եթե վարորդը երկար ժամանակ ընթանում է, օրինակ, 100 կմ/ժամ հաստատուն արագությամբ, ապա սյուների, լուսային աղդանշանների, ճանապարհի նշագծումների հավա-

սարաշափի հերթափոխումը առաջացնում է հիպնոսային քուն
հիշեցնող թմրություն:

Մի շարք հետազոտություններ ցույց են տվել, որ վարոր-
դը այդպիսի վիճակում կարող է գտնվել ավտոմայրուղով եր-
թևեկելիս՝ մինչև 20 կմ տարածության վրա: Զնայած վարոր-
դը այդ ժամանակ ինքնաբերաբար հսկում է ավտոմեքենայի
զեկավարումը և արձագանքում արտաքին ազդակներին, բայց
նրա մոտ խիստ նվազում է ռեակցիայի արագությունը: Այդ-
պիսի աննկատ քնկոտությունն է, որ համարվում է ճանա-
պարհային համահիպնոսի հիմնական վտանգը:

Ժամանակակից ավտոռուղիները և ավտոմատ կառավա-
րումով ու անաղմուկ շարժիչով հարմարավետ ավտոմեքենա-
ները, այդ տեսակետից, նոր լուրջ վտանգ են ներկայացնում:
Վերջին տարիներին մեքենա վարելը շատ է հեշտացել,
բարելավվել-են ճանապարհային պայմանները: Այժմ վա-
րորդը 6—7 ժամ աշխատանքից հետո սուբյեկտիվորեն այն-
քան ուժասպառված չէ, որքան նախկինում, չնայած ուժա-
սպառության ազդեցության տակ օբյեկտիվորեն հոգեբանա-
խոսական ֆունկցիաները փոփոխվում են: Իսկ վարորդները
վարում են այնքան ժամանակ, մինչև ուժասպառվեն: Այդ-
պիսի դեպքերում նրանք սահմանային ֆիզիկիկան հոգնա-
ծովության հաշվին հասնում են իրենց նպատակին, բայց այս
դեպքում մեծացնում են ճանապարհատրանսպորտային պա-
տահարների հավանականությունը:

Մի կարծեք, որ եթե դուք նստել եք «Ժիգուլի» ավտոմե-
քենայի դեկին և քիչ եք հոգնում քան հին «Մոսկվիչը» վա-
րելիս, ապա այժմ կարող եք լրիվ անվտանգ 20 ժամում Սիմ-
ֆերոպոլից Մոսկվա սլանալ: Դա պարզապես ինքնախաբեռու-
թյուն է և տվյալ դեպքում ոչ մի ինքնահսկում (այնպես, ինչ-
պես և՝ ուրիշների կողմից հսկում) չի օգնի: Արդյունքը կա-
րող է շատ ցավալի լինել:


Վտանգը կրկնապատկվում է նրանով, որ ժամանակակից
աշխատուղիները վարորդի ուշադրության նկատմամբ՝ շատ քիչ
պահանջներ են ներկայացնում: Ավտոմեքենան կանոնավոր
օրորող տատանումներով միալար շարժվելիս վարորդի վրա
հիպնոսային ազդեցություն է ունենում նաև ճանապարհի և
լուսաւորմեքենայի կառուտի փայլը, որոնք ամբողջ ժամանակ

գտնվում են տեսադաշտում և՝ մշտական նոր ազդակներ են:

Վարորդը, որն ավտոմեքենան վարում է և ցերեկը, և գիշերը այնպիսի ճանապարհով, որտեղ չկան կանգառներ, ճանապարհային շրջադարձեր, ոեկլամային պլակատներ, ոչինչ չկա, որը կարողանա իր վրա ուշադրություն գրավել, սկսում է ննջել: Նման վիճակում նա սկսում է կորցնել արագության, ճայնի, դիստանցիայի զգացողությունը և չի կարող զգալ վտանգի մոտեցումը: Հոգնած աշքերը և ուղեղը երկու պատկերը (առջևից շարժվող նույնընթաց ու հանդիպակաց ավտոմեքենաները) ընկալում է որպես մեկ: Մայրահեղ հոգնածությունը հաճախ դեռևս ոչ բավականաշափ հասկանալի պատճառով հանգեցնում է շարժման արագության բարձրացմանը և դրա հետևանքով առաջացնում վթարային իրադրություն:

Ամերիկյան անվտանգ երթևեկության ազգային ընկերությունը նշում է, որ համահիպնոսի պատճառով առաջացած պատահարների թիվը կազմում է բոլոր ճանապարհային դեպքերի 1—2 %-ը, ըստ որում դրանք ամենածանր պատահարներն են: Ամենից հաճախ արգելակված վիճակը և դրա հետ կապված հետևանքները առաջանում են ճանապարհի ուղիղ տեղամասերում: Այդ փաստը թույլ է տալիս մասամբ հասկանալ պարագորսային այնպիսի մի երևույթ, որ լավ տեսանելիությամբ հարթ տեղամասերում կատարվում է առավելագույն շափով ծանր դժբախտ դեպքեր, ի տարբերություն շրջադարձերում և խաչմերուկներում կատարվող ավելի թեթև դժբախտ դեպքերի:

Ավտոմեքենան վարելիս վարորդի արգելակված վիճակը կարող է սկսվել նյարդային հյուծման ու ուժապառության, շատ երկարատև երթևեկության դեպքում (հատկապես 400 կմ-ից ավելի հեռընթաց երթուղիներում, 8 ժամից ավելի աշխատանքի դեպքում) ուղևորությանը նախորդած հոգնեցուցիչ աշխատանքի, (օրինակ՝ բեռնատար ավտոմեքենայում վարորդի կողմից ծանր բեռ բարձելուց հետո), ուղևորությունից առաջ անբավարար հանգստի հետևանքով: Արգելակված վիճակի առաջացմանը ամենից հաճախ նպաստում է այնպիսի մի շարք բացասական գործոնների համակցությունը, ինչ-



**Նկ. 20. Ինչպես նվազեցնել
հոգնածությունը:**

Ամենից առաջ խորհուրդ է տրվում ուշադրություն դարձնել աշխատանքի և հանգստի ճիշտ ռեժիմի, աշխատաժամանակի տևողության վրա: Մկանային հոգնածությունից խուսափելու ամենալավագույն միջոցը աշխատանքի ընթացքում ընդմիջում և մկանային լարվածության թուլացում կատարելն է: Խորհուրդ է տրվում դուրս գալ ավտոմեքենայից և մի քանի անգամ ինտենսիվորեն վեր ձգվել: Կարճատես, բայց հաճախակի ընդմիջումներն ավելի արդյունավետ են, քան երկարատես, բայց հազվադեպ:

Մասնագետները գտնում են, որ բոլոր ճանապարհատրանսպորտային պատահարների 5 %-ից կարելի է խուսափել, եթե ժամանակին պահպանվի վարորդի նորմալ ֆիզիկական վիճակը: Եթե վարորդը ավտոմեքենայում միայնակ է, առանց ուղևորների, կարող է երգել, բարձրածայն ինքն իրեն խցուել կամ երաժշտություն լսել, գերադասելի է, որ լինի աշխույժ, եռանդուն: Երբեմն առույգության համար խցիկում պետք է ստեղծել միջանցիկ քամի կամ սառը ջրով լվացվել:

Արգելակված վիճակը կանխող միջոցներից մեկը՝ ժամելն է: Դա ապացուցված է հոգեբանների և ֆիզիոլոգների բազմաթիվ փորձերով: Քնի նոպան կարելի է հաղթահարել նաև բավականին քնկոտության դեպքում, բայց այդ հատկությունը չի կարելի դերագնահատել, հատկապես այն ժամանակ, երբ մարդը ընտելացել է քնելուն: Քունը նվազում է կամ բոլորովին անհետանում և նորից երկար ժամանակից հետո ինքնաբերաբար հայտնվում:

պիսին են հոգեկան լարվածությունը, կոնֆլիկտային նյարդացնող պայմանները, ինչպես նաև շարժման միալարությունը և միօրինակությունը:

Ինչպես նվազեցնել հոգնածությունը: Այժմ կիրառվում է հոգնածությունը նվազեցնող մի շարք միջոցներ (Նկ. 20):

Վարորդի վաղ հոգնածության և արգելակված վիճակը կանխելու համար մեծ դեր կարող են խաղալ ակտիվ հանգըստի համար նախատեսված կարճատև ընդմիջումները։ Հայրենական ֆիզիոլոգներն ապացուցել են, որ հոգնածության դեպքում հանգստի լավագույն ձևը ոչ թե պասսիվ նընշելն է, պառկելը (բացառությամբ գիշերային լիարժեք քնի), այլ ակտիվ, այսինքն՝ շարժումներով ուղեկցվող հանգիստն է։ Հետազոտությունները ցույց են տվել, որ սահմանափակ շարժումակության պայմաններում աշխատումակության պահպանման համար մեծ արդյունք են տալիս կարճատև ֆիզիկական վարժությունները (շնչառական, մեջքի մկանների, ձեռքերի, ոտքերի և այլն)։

Իսկ ինչպես վարվել, եթե դրսում հորդում է անձրել կամ մեքենաներով լեփի լեցուն ճանապարհը կանգառը անհնար է դարձնում։ Ընթացքի ժամանակ խցիկում կօգնեն առանց աշխատանքային դիրքը փոխելու կատարած մի քանի հասարակ շարժումները և վարժությունները։ Լենինգրադի Լեսգաֆտի անվան ֆիզկուլտուրայի ինստիտուտի հետազոտությունները ցույց են տվել, որ այդպիսի դեպքում ամենաարդյունավետը հետևյալ վարժություններն են։ Խոր շնչառության հետ միասին ազատ ձգել և թուլացնել մկանային առանձին խմբերը, գլխավորապես մեջքը, որովայնային ճնշամկանները, ոտքերն ու վիզը։ Մակայն, հենց որ ճանապարհային իրադրությունը թույլ տա, անհրաժեշտ է կանգնել, դուրս գալ խցիկից և շծուլանալ մի քանի րոպե ծախսել լիարժեք մարզալիցք կատարելու համար։ Դա վարորդի աշխատանքը բավականին թեթևացնում է։

Երբեմն այդ միջոցները բավարար չեն և քունն անհրաժեշտ է։ Կարճատև ընդմիջումը խախտում է երթևեկության միալարությունը։ Այսպիսով, 15—20 րոպե հանգիստը կարող է երբեմն պահպանել վարորդի կյանքը։ Զպետք է թերագնահատել այն վտանգը, որ կարող է առաջանալ հարթ, լավ տեսանելի ճանապարհով երթևեկելիս, քանի որ ամենից շատ վթարներ այդտեղ են լինում։

Խորհուրդ շի տրվում ճանապարհին նայել անշարժ վիճակով։ Անհրաժեշտ է լուրաքանչյուր 2 րոպեն մեկ անգամ հայացքը փոխել։ Բացի դրանից, հայացքը փոխելով հեշտ է

Հետևել իրադրության փոփոխությանը, որոնց վարորդը պետք է իսկույն արձագանքի: Եաւ կարեռ է մշակել այսպիսի կանոն. մոտավորապես յուրաքանչյուր 5 վայրկյանը մեկ անգամ նայել ետքի տեսքի հայելուն:

Հատկապես արագ է հոգնում տեսողությունը և կորչում է նոր իրադրությունները տարբերելու ունակությունը, եթե վարորդը լրիվ չի օգտագործում իր աշքերի տեսադաշտը, այլ նայում է ուղիղ ռադիատորի առջևի ճանապարհին: Նույնիսկ 15—20 կմ/ժամ արագության դեպքում ավելի ճիշտ կլինի հայցքի այնպիսի ուղղությունը, որի դեպքում երկու աշքերի տեսողական առանցքները հատվում են ճանապարհի կենտրոնում, ավտոմեքենայից 50 մետրից ոչ պակաս հեռավորության վրա, իսկ բարձր արագության դեպքում՝ ավելի հեռու: 30 մետր տեսածրի դեպքում հստակ տեսադաշտն ունի ընդամենը 1,5 մետր լայնություն, 100-ի դեպքում՝ 5, 500-ի դեպքում՝ 16 մետր, այսինքն, որքան հեռու է տարածվում հայցքը, այնքան լայն է ընկալման տեղամասը:

Վարորդի հոգնածությանը բավականաչափ ազդում են նաև հանդիպակաց ավտոմեքենաների կուրացնող լապտերները, ապա նաև տեսողության հարմարվելը մթությանը: Առաջարկվում է բավականին սրամիտ լուծում. կկոցել մեկ աշքը, և ուժին լույսի անհետացումից հետո բացել այդ շղացած աշքը:

Գերհոգնածությունը կանխելու համար հիմնական միջոցը գիշերային լիարժեք քունն ու սննդի ռացիոնալ ռեժիմն է: Այդ տեսակետից հատուկ ուշադրություն պետք է դարձնել միջազգային ուղեգծերի վրա աշխատող բեռնատար ավտոմեքենաների վարորդների աշխատանքին և հանգստի ռեժիմին, քանի որ նրանք մեծ մասամբ զրկված են նորմալ հանգստի համար անհրաժեշտ պայմաններից:

Վարորդի աշխատունակության պահպանմանը նպաստում է ավտոմոբիլային ճանապարհը, եթե այն գեղեցիկ է, ուցիոնալ է ներգործվում լանդշաֆտի մեջ և ապահովում է տպավորությունների հաջորդական հերթափոխումը: Ճանապարհային պայմանների բարենպաստ ազդեցությունը և մերձանապարհային տեսարաններն ակտիվացնում են վարորդի ուշադրությունը, հետաձգում հոգնածության սկիզբը և կանխում արգելակային վիճակի առաջացումը:

Ինչպես արդեն նշել ենք, հոգնածությունը հաճախ ան-նկատելիքնեն է վրա հասնում։ Մարդուն՝ թվում է, որ նա դեռևս ի վիճակի է հստակորեն վարել ավտոմեքենան և ժամանակին արձագանքել շրջապատի իրադրության փոփոխությանը։ Սակայն, օբյեկտիվորեն, դա բոլորովին էլ այդպես չէ։ Դժվար է ասել, որտեղ է այդպիսի դրությունը ավելի վտանգավոր։ Քաղաքում, թե՛ քաղաքից դուրս։ Առաջին դեպքում՝ քաղաքային լարված երթևեկության պայմաններում գերհոգնած վարորդը կարող է վրաերթի ենթարկել հետիոտներին կամ այլ ավտոմեքենայի, իսկ քաղաքից դուրս՝ հանգիստ, միալար երթևեկության պայմաններում կարող է քնել։ Հետեւանքը և՛ մեկ, և՛ մյուս դեպքում կարող է շատ ցավալի լինել։

Գիտնականներն ու կոնստրուկտորներն աշխատում են նման իրադրություններում օգնել՝ վարորդներին։ Այդ խնդիրը նոր չէ։ Մասնավորապես, երկաթգծային տրանսպորտում դրանով զբաղվում են արդեն վաղուց, այդտեղ մշակվել են մեքենավարի զգոնությունը հսկող մի շարք սարքավորումներ։ Այժմ նման սարքավորումներ ստեղծվում են նաև ավտովարորդների համար։ Այսպես, Ճապոնիայում նախագծվել է ազդանշանային սարք, որը հայտնաբերելով վարորդի բթացած ռեակցիան, բարձր ձայնային ազդանշան է արձակում։ Սարքի աշխատանքի սկզբունքը հիմնված է այն երեվույթի վրա, որ ղեկանիվի դարձի հաճախականության փոփոխումը համարյա ուղիղ համեմատական է շարժման արագության փոփոխմանը և այդ հաճախականությունը զգոն հոգնած վարորդների մոտ տարբեր է։ Այսպես, քաղաքային պայմաններում 50 կմ/ժամ արագության դեպքում ուշադիր վարորդը ղեկանիվի դիրքը մեկ րոպեում փոխում է 30—45 անգամ, իսկ հոգնածը՝ միայն 15—20 անգամ։

Էլեկտրոնային սարքը կազմված է երկու ազդակային սխեմայից, ավտոմեքենայի անիվի և ղեկանիվի համար, ինչպես նաև հաշվիչ և ազդանշանային սարքերից։ Առաջին սխեմայում էլեկտրական ազդակը գոյանում է այն պահին, երբ ավտոմեքենայի անիվին ամրացրած մագնիսը անցնում է անշարժ կոճի մոտով։ Երկրորդ սխեմայում այն ստացվում է՝ սահմանած ձևով ղեկանիվի պտտման դեպքում։ Երկու

սխեմաներից ազդակները ընկալվում են հաշվիչ սարքի կռումից և նրանց քանակները համեմատվում են: Եթե ավտոմեքենայի անիվի պտույտի որոշակի ժամանակի ընթացքում գրանցվի ղեկանիվի թեքումների տրված նորմալ թիվը, ապա հաշվարկային համակարգում հաշվարկը նորից սկսվում է զրոյից: Եթե հոգնածության կամ քնի պատճառով ղեկանիվի թեքումների թիվը սահմանվածից պակաս լինի, ապա անընդհատ գրանցվող ազդակների ինչ-որ որոշակի արժեքի հանելուց հետո (օրինակ, ավտոմեքենայի անիվների 50 պտույտից հետո) միանում է նախազգուշացնող ազդանշանը:

Մի այլ սկզբունքով է պատրաստվում գգոնությունը հրակող ևս մեկ սարք, որին անվանել են քնկոտության ցուցիչ: Ֆրանսիական ֆիրմաներից մեկն առաջարկել է ղեկանիվի վրա մոնտաժել երկու հոսանքատար ժապավեններից կազմված տվիչ, որոնցից մեկը միացվում է մասսային, իսկ մյուսը ակռումուլյատորային մարտկոցին (համապատասխան էլեկտրոնային համակարգի և վառոցքային բանալու միջոցով): Ոչ մեծ տուփի մեջ տեղավորված էլեկտրոնային համակարգը գտնվում է սարքերի վահանիկի վրա: Եթե վարորդը ղեկանիվը բռնել է նորմալ վիճակով, հոսանքատար թիթեղների միջոցով հոսում է շատ փոքր հոսանք (թիթեղների հետ ձեռքի հպման շնորհիվ), Սարքը այդ ղեպքում տագնապի ազդանշան չի տալիս: Վարորդի քունը տանելու ղեպքում ձեռքերի հպոմը ղեկանիվի և հոսանքատար թիթեղների հետ թուլանում է: Այդ ղեպքում փոքրանում է սարքով անցնող հոսանքը, որի հետևանքով գործում է տագնապի ազդանշանը:

Հաջորդաբար կարող են միացվել երկու ազդանշան: Առաջինը՝ լուսային: Սարքի կորպուսի աջ մասում բռնկվում է կարմիր լույսը: Եթե վարորդը այդ ազդանշանին չի արձագանքում, ապա ավտոմատ ձեռվ միանում է ցածր ձայնային ազդանշանը: Միաժամանակ անջատվում է վառոցքը և ավտոմեքենան կանգ է առնում, եթե վարորդը այն ղեկավարելու համար ուշքի չի գալիս: Հնարավոր է այնպիսի տարրերակ, երբ ցածր ձայնային ազդանշանը և վառոցքային համակարգի անջատումը ուղեկցվում են լրացուցիչ ուժեղ ձայնային ազդանշանով: Եթե վարորդի ձեռքերի նորմալ հպու-

մը ղեկանիվի վրայի հոսանքատար թիթեղների հետ վերականգնվում է, ապա ազդանշանային համակարգը անջատվում է, իսկ շարժիչը առանց որևէ դժվարության ավտոմեքենայի շարժման իներցիայի շնորհիվ գործարկվում է:

Վերևու խոսվեց վարորդի վիճակը հսկող սարքերի մասին, իսկ այժմ կպատմենք մի քանի սարքավորումների մասին, որոնք կոնստրուկտորները մշակել են, որպեսզի վարորդի համար թեթևանա ավտոմեքենայի տեխնիկական վիճակի հսկումը:

Ամերիկյան ավտոմոբիլային ընկերության կատարած լերլուծությունը ցույց է տվել, որ ԱՄՆ-ում ավտոմեքենաների 15 %-ը շահագործվում են լուսավորման համակարգի անսարքինությամբ: Այդ պատճառով որոշվել է ավտոմեքենաներում տեղադրել սարք, որը ազդանշան է տալիս էլեկտրասարքավորումում ցանկացած լապտերի խափանման դեպքում: Այդ խնդիրը հնարավոր է լուծել հասարակ սխեմայով: Ավտոմեքենայի ղեկավարման վահանի վրա դրվում է լամպ: Էլեկտրասարքավորման շղթան սարքին լինելու դեպքում այն չի վառվում: Էլեկտրական լամպի շիկացման որևէ շղթայում խզումը հանգեցնում է տրամաբանական սխեմայի գործարկման և լամպի այրման, որը և վարորդին ազդանշան է տալիս անսարքինության մասին:

Վարորդի կողմից շարժիչի անսարքինությունը արագ հայտնարերելու համար առաջարկվում է երկու համակարգ: Առաջինը հաշվիլ սարքն է, որը անընդհատ հսկում է շարժիչի աշխատանքը: Եթե շարժիչի աշխատանքում առաջացել է ոիթմի որևէ իրանգարում, կամ խախտվել է շարժիչի բնութագրերից մեկը (օրինակ վերջացել է յուղի օգտագործման ժամկետը, կարտերի անբավարար օդափոխությունը և այլն), ապա հաշվիլ սարքավորումը համապատասխան ազդանշան է ուղարկում դեպի ստուգիչ-շափիչ սարքերի վահանին:

Համանման ձևով է գործում նաև մյուս համակարգը: Այն կապված է ստուգիչ-շափիչ սարքերի վահանի վրա գտնվող թմբկային տիպի ներսից ինդիկատորով թեթևակի լուսավորման հետ: Եթե շարժիչի աշխատանքում հանդես է գալիս ինչոր թերություն, ապա թմբուկի վրա վառվում է լամպը, իսկ

ինքը պտտվում է և կանգ է առնում 16 դիրքերից մեկում, վարորդին հայտնելով անսարքինության մասին։

Այսպիսով, կոնստրուկտորները ստեղծում են վարորդավորմեքենա-ճանապարհ կոմպլեքսի առաջին երկու էլեմենտների հսկման համար սարքեր։ Դե, ինչպես վարվել երրորդ էլեմենտի՝ ճանապարհի հետ։ Պարզվում է, որ այդ սապարեզում էլ աշխատանքներ են տարվում, որոնք ուղղված են ճանապարհի ժամկույթի վիճակի մասին վարորդին տրվող ինֆորմացիայի լավացման հետ, մասնավորապես սառցակեղեկի առաջացման հնարավորության մասին։

Այդ նպատակով ստեղծված սարքում օգտագործվում է երկու տվիչ, որոնցից մեկը արձագանքում է խոնավության բարձրացմանը, իսկ երկրորդը՝ ջերմաստիճանի իջեցմանը։ Տվիչների հարմար տեղադրման շնորհիվ ապահովվում է նրանց դգայուն լարի վրա հանդիպակաց օդի ազատ հոսքը։ Ավտոմեքենայի դեկավարման վահանի վրա դրված են երկու ազդանշանային լամպեր, որոնցից մեկը վառվում է, եթե խոնավությունը՝ հասնում է 98—100 %, իսկ երկրորդը, եթե օդի ջերմաստիճանը իջնում է մինչև ջրի սառչելու ջերմաստիճանին։ Նման սարքի կիրառումը, ինչպես ենթադրվում է, թույլ կտա փոքրացնել ճանապարհային պատահարների թիվը հատկապես աշնանը և գարնանը։ Վարորդը այդ ժամանակ ճանապարհի վրա սառույցի առկայությունը հաճախ զգում է միայն այն դեպքում, եթե ավտոմեքենան սկսում է շնթարկվել։

Արենեստական դեկապետ։ Որպեսզի վարորդի աշխատանքը հեշտացվի, արտասահմանում ավտոմեքենայի վարման տակտիկայի և ստրատեգիայի ավելի հստակ համաձայնեցման համար մշակում են սարքեր։ Այդպիսի սարքերը փոքր էլեկտրոնային հաշվիչ մեքենաներ են (էՀՄ) կամ այսպես կոչված անհատական կոմպյուտորներ։

Ավտոմեքենաների վրա էՀՄ-ի տեղադրումը հնարավորություն է տալիս հեռավոր ուղևորությունը պլանավորել այնպիսի ճշտությամբ, ինչպիսիք ապահովում են փոքր ինքնաթիռների նավարկության սարքերը։ Ավտոմեքենային էՀՄ-ը հնարավորություն է տալիս նախօրոք պլանավորել հեռավոր ուղևորությունը, տալով ամբողջ օրվա անվտանգ ու խելա-

միտ արագությունը և վազքի ընդհանուր հեռավորությունը, անցնել 1200 կամ 1400 կմ և նշանակված տեղը հասնել հաշվարկային ժամանակի համեմատությամբ 20 րոպե ճշտության սահմաններում, որոշել երթուղուց շպլանավորված շեղումների և հանգստանալու նպատակով կատարված երկարատև կանգառների ազդեցությունը, որոշել այն ժամանակը, որը առանց երթևեկության գրաֆիկը խախտելու կարելի է ծախսեց զվարճությունների և հանգստանալու համար կանգառների լրա. եթե երթևեկության գրաֆիկը խախտված է, ապա որոշ նշ՝ որքա՞նով. հաշվարկել երկաթուղային գծանցի ուղեփակոցի մոտ խցանումների և անձրեային եղանակի պատճառը և կատարված ուղացումները:

Ժ ժմանակի, տարածության և արագության հաշվարկման մի շարք օպերացիաների կատարումից բացի ավտոմոբիլացին ԷՀՄ-ը ավտոմատ կերպով հետեւմ է երթևեկության գրաֆիկի կատարմանը, շարժման նախօրոք հաշված միջին հաստատուն արագության պահպանմանը: Այսպես, եթե դուք նախատեսել եք անցնել 700 կմ, օրինակի համար Մոսկվայից մինչև Խարկով 10 ժամում, ապա միջին արագությունը պետք է լինի մոտավորապես 70 կմ/ժամ: ԷՀՄ-ն կօգնի ձեզ հաշվի առնելու հանգստի, լվացվելու, սնունդ ընդունելու համար անհրաժեշտ կանգառները, ինչ արագություն է պետք պահպանել ուղեկորության մնացած փուլերում, որպեսզի նպատակադրված վայրը հասնել ժամանակին:

Վարորդի ֆիզիկական նախապատրաստությունը: Սպորտի ցանկացած ձևով զբաղվելը դրական ազդեցություն է ունենում մարդու օրգանիզմի վրա, բայց վարորդի համար արժեքավոր ձևերն են՝ գիմնաստիկան, սպորտային խաղերը, դահլիճավագքը, լողը, թեթև ատլետիկան: Սպորտը նպաստում է վարորդի մասնագիտական գործունեությունում օգտակար հիմնական հատկությունների զարգացմանը (նկ. 21): Ապացուցված է, օրինակ, որ սպորտով զբաղվելու դեպքում ուղակցիայի ժամանակը կրճատվում է 10%-ով:


Վարորդը հիմնական ինֆորմացիան ստանում է տեսողական օբյանների միջոցով: Այդ պատճառով տեսողական զգայարանների կատարելագործումն ունի շափազանց մեծ նշանակություն: Այստեղ ևս սպորտը կարող է օգնել վարորդին լա-

վացնելու շրջագծային և
կենտրոնացած տեսողու-
թյունը, բարձրացնելու
նրա սրությունը։ Այդ տե-
սակետից հատկապես օգ-
տակար են սպորտային
խաղերը, պինգպոնգը և
թենիսը, ինչպես նաև
հրաձգությունը։


Ավտոմեքենայի եր-
կարատև վարումը, ճա-
նապարհային պայման-
ների բարդությունը վարորդից պահանջում են հա-
տուկ տոկունություն, որի հիմքը կարող է ծառայել ընդհա-
նուր դիմացկունությունը։ Վերջինս լավ կոփիվում է դահու-
կավազքի, վազքի, թիավարման, հեծանվավազքի, լողի, տու-
րիստական արշավների ժամանակ։ Նույնիսկ օրական 1, 1,5
ժամ ուժով ման գալը օդոտակար ազդեցություն է ունենում
օրգանիզմի վրա։

Ավտոմեքենա վարելիս առանձնահատուկ նշանակություն
ունի ստամիկ տոկունությունը։ Այն ծառայում է որպես ֆոն,
որի վրա կատարվում է ամբողջ հիմնական աշխատանքը։ Այդ
պատճառվ բոլոր տեսակի միենալին դիրքում երկար մնալու
վարժությունները (կիսանստելը, առաջ թեքվելը, հենված
պառկելը, ձեռքերի վրա կանգնելը և այլն) օգտակար են,
դաստիարակում են տոկունություն և հոգեբանորեն վարոր-
դին կոփում։ Ստամիկ տոկունության զարգացման համար օգ-
տակար է նաև սպորտի այնպիսի ձևը, ինչպիսին է հրաձգու-
թյունը։

Վարորդի համար ոչ պակաս կարևոր հատկություն է նաև
լավ վեստիրուլյար սարքի առկայությունը։ Բարձր հավասա-
րակշռության զգացումը մի կողմից օգնում է վարման բազ-
մատեսակ ձևերի լավ կիրառմանը, իսկ մյուս կողմից՝ կար-
ծես ստեղծում է դիմացկունության պաշար, որը վարորդը
կարող է օգտագործել տագնապալի իրադրություններում։ Հա-
վասարակշռությունը մեծացնելու համար խորհուրդ է տրվում
գրաղվել լեռնային դահուկավազքով, հեծանվային և մոտո-



Նկ. 21. Վարորդի ֆիզիկական
նախաֆատրաստությունը։



Նկ. 22. Խմած վիճակում մի վարիր
մեքենան:

Ալկոհոլն անվտանգ երթևեկովիշյան ամենամեծ թշնամին և մարդկանց անհմաստ կործանման պատճառն է (նկ. 22):

Հարբած վարորդի համար կարծես ճանապարհը անմիջապես նեղանում է, ինչպես շահ վզիկը, որից քիչ առաջ խմել է:

Գոյություն ունի այն սխալ կարծիքը, որ ալկոհոլային խմիչքներ օգտագործելիս հոգնածությունը պակասում է: Փաստորեն ալկոհոլը վատացնում է զգայական, հոգեբանական և հոգեշարժային ֆունկցիաները, նրա կործանարար ազդեցությունը վարորդի աշխատունակության վրա շափազանց մեծ է: Ալկոհոլի և թմրադեղերի ազդեցության տակ վարորդի ռեակցիան շրջապատի պայմանների փոփոխության նկատմամբ խիստ դանդաղում է, նա արգելքը տեսնում է միայն այնպիսի հեռավորության վրա, երբ արդեն անհնար է ավտոմեքենան կանգնեցնել:

Հարբած վարորդը խսկական պատուհաս է: Ալկոհոլը գրխուղեղի կեղեռամ խանգարելով արգելակման պրոցեսները, վարորդի մոտ առաջ է բերում անհոգություն: Վարորդը չի կարողանում ճիշտ գնահատել ճանապարհային իրադրությունը և իր հնարավորությունները: Դրա համար էլ այդքան վտանգավոր է խումհարի վիճակում վարել ավտոմեքենան կամ մոտոցիկլը, չնայած արտաքինից վարորդը լուրջ է երեսում:

Որոշ վարորդներ ճիշտ հարց են տալիս, թե խմելուց քանի՞ո ժամ հետո կարելի է անվախ նստել ավտոմեքենայի ղեկին, որ պատահարի տեղիք չտրվի: Ամենակոպիտ ցուցանիշը

ցիկլետային սպորտով՝ մարմնամարզական ձողի (բում), ոելսի վրայով, նեղ տախտակի վրայով և այլ տեղերով քայլելով: Հավասարակշռության միջոցներից՝ է բատուտի վրա վարժություններ կատարելը:

Հարբածի նամար ցանկացած նանապարհն նեղ է:

Քերանից փշող ալկոհոլի հոտն է: Եթե քթը պանից թեկուզ մի փոքր հոտ է գալիս, ապա դա նշանակում է, որ ուղեղը դեռևս մթագնած է ալկոհոլով։ Վարորդի վիճակի ավելի ճիշտ գնահատականը տալիս է արյան անալիզը։ արյունը ուղեղին մատակարարում է ոչ միայն սննդանյութեր, այլև իր հետ բերում է ալկոհոլ։

Գոյություն ունեն որոշակի հանձնարարականներ, թե սպիրտային խմիչքներ օգտագործած վարորդը որքան ժամանակ հետո իրավունք ունի վստահ նստել ավտոմեքենայի ղեկին, առանց վախճնալու ալկոհոլային աղղեցովթյան հետեւանքներից։ Մոտավորապես կարելի է ընդունել, որ 6—8 գ ժաքուր սպիրտը մարդու օրգանիզմից դուրս է գալիս մոտ մեկ ժամ հետո, իսկ մի շաբթ ալկոհոլային խմիչքների 100 գրամում պարունակող սպիրտի քանակը այսպիսին է։ սպիրտակ ու կարմիր գինու մեջ 9 գ, շամպայնի մեջ՝ 7 գ, մալագա, տոկայ գինիներում 13 գ, աղանդերային գինու մեջ՝ 16 գ, լիկյորներում՝ ($30-35^{\circ}$) 24—28 գ, ոռմում, օղու և կոնյակի մեջ՝ (40°) 32 գ։

Եթե վարորդը սպիրտային խմիչք է օգտագործել և հաջորդ օրը ցանկանում է ճանապարհվել, ապա նա կարող է մոտավորապես հաշվել մեկնելու ժամանակը։ ԳԴՀ-ի մասնագետները առաջարկում են հետևյալ մոտավոր բանաձեռ։ յուրաքանչյուր 20 գ օղի կամ 300 գ գարեջուր օգտագործելու դեպքում չի կարելի ավտոմեքենա կամ մոտոցիկլ վարել 1 ժամ։ Եթե, ասենք, օգտագործվել է 200 գ օղի, ապա ավտոմեքենայի ղեկին կարելի է նստել 10 ժամից ոչ շուտ։

Արտասահմանում թմրադեղերի հետ միասին ալկոհոլի օգտագործումը առիպել է երթևեկության կազմակերպիչներին նինտրելու այնպիսի միջոցներ, որպեսզի թմրամոլին կամ հարբածին ավտոմեքենայի ղեկին նստելուց հետո թույլ շտրվի այն վարել։ Այսպես, ԱՄՆ-ում մշակվել է ավտոմատ հարմարանք, որը հայտնաբերում է վարորդի ոեակցիայի դանդաղումը՝ ալիսհոլի կամ այլ ղեղամիջոցների աղղեցության հետևանքով։

Այդ հոգեբանական թեսթերը տեղադրվում են ավտոմեքենայի հսկիչ-շափիչ սարքերի վահանի վրա և միացվում վա-

ոոցքի հետ։ Երբ վարորդը պտտում է վառոցքի բանալին, սարքի ցուցատախտակի վրա հայտնվում է 3—4 վրկ լուսավորվող թվերի մի շարք։ Այդ թվերից ներքեւ գտնվում են համապատասխան սեղմակներ, որոնք վարորդը պետք է սեղմի ճիշտ հերթականությամբ, ենթադրենք, 4 վայրկյանը մեկ։ Նա եթե այդ չի կարողանուած կատարել, ապա նրան տրվում է ևս երկու անգամ փորձելու իրավունք, ընդ որում թվերի հերթականությունը ամեն անգամ փոխվում է։ Եթե վարորդը երեք՝ փորձի ընթացքում չի կատարուած առաջադրանքը, ապա ստարտերը չի միանում այնքան ժամանակ, քանի դեռ չի անցել հարբածությունը։

Դուք կարող եք բոլորովին սպիրտալին խմիչք չօգտագործել, բայց դառնալ արկոհոլի, ավելի ճիշտ հարբեցողի զոհ, որը վարում է մի այլ ավտոմեքենա։ Որպեսզի դա տեղի չունենա, աշխատեք հարբած վարորդներին հեռվից որոշելու ունակություն ձեռք բերել։ Նշանները բավականին հասարակ։ Են՝ լուսացույցի մոտից ուշացած շարժվելը, վերջին պահին կտրուկ արգելակելը, արգելող ազդանշանների առկայությամբ։ Երթևեկելը, անշափ արագընթաց և կտրուկ կամ ընդհակառակը՝ շատ զգույշ (զաղտագողի մայթի երկարությամբ վարելը)։ Ճանապարհի վրա ավտոմեքենայի մաներման դեպքում՝ հարբած վարորդին ճանաշելու նշաններից է նաև շարժման հետագծի անբնական տատանումը և կտրուկ ձեռք շրջադարձ կատարելը։ Այդ նշաններից յուրաքանչյուրի, առանձին վերցրած, առկայությունն դեռևս չի նշանակում, որ վարորդը հարբած է։ Դա կարող է լինել և սկսնակ, և երթևեկության տեղական պայմաններին անծանոթ կամ պարզապես քյալագյող վարորդի հետ։ Բայց թվարկված նշանները, ամբողջությամբ վերցրած, որոշակի պատկեր, է ստեղծուած այնպիսի վարորդի մասին, որին չի կարելի լուրջ անվանել։

Եթե դուք լրիվ համոզվեք, որ վարորդը իսկապես խմած է, բայց հնարավորություն չունեք նրան կանգնեցնելու, որքան կարելի է շուտ այն հայտնեք Պետակտուեսչության աջխատակցին։ Հիշեք, որ հարբած վարորդը պոտենցիալ հանցագործ է, որը մի քանի րոպե հետո կարող է լինել անցորդների, ուղևորների և վարորդների կործանման պատճառ, որտեղ կարող են լինել մեր հարագատները։

**ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ


Դասակարգումը բազմակողմանի և շատ ծավալային հասկացություն է: Այն ընդգրկում է սոցիալական, տնտեսական, տեխնիկական և հոգեբանական «ծսի» տարրեր:

Ի՞նչն է դաստիարակում վարորդին: Վարորդը փորձն ու վարպետությունը ձեռք է բերում ժամանակի ընթացքում, բայց մնացած հատկությունները պետք է ունենա ի սկզբանեւ Մարդկանց անվտանգության համար պատասխանատվության զգացումը, ավտոմեքենայի վարման ժամանակ կենտրոնանալու հատկությունը, տոկունությունը և ինֆորմացիայի նկատմամբ դյուրընկալությունը պատկանում են բնավորության տարրերի թվին: Ոչ բոլորն են ի ժնե համեմատաբար տոկուն կամ երկար ժամանակ կենտրոնանալու ընդունակ (նկ. 23): Բայց յուրաքանչյուր վարորդ պետք է իրեն ստիպի որբան կարելի է շատ կոփել այդ հատկությունները: Դա բոլորին միևնույն ձեռվ չի հաջողվում: Բայց բոլորը՝ և սկսնակները, և ասերը, պետք է իրենց մեջ դաստիարակեն վարորդական բնավորություն:

Նշենք ժամանակակից վարորդի բնավորության գծերը:

Ալշադրության կենարօնացումը (մտահավաքությունը)* ավտոմեքենա վարելու ժամանակ, ըստ նշանակության, գրխավոր հատկություններից է: Լարված երթևեկության պայմաններում արագության և վտանգավորության հետ միասին դուք պետք է միշտ կենտրոնացած լինեք: Բավական է մի պահ շեղվել և սխալի հետ կապված հնարավոր վտանգը բազմակողմանիորեն մեծանում է, իսկ սխալը հանգեցնում է ճանապարհատրանսպորտային պատահարի:

Եթե դուք հոգնել եք, հիվանդ եք կամ ինչ-որ բանի մասին եք մտածում, ապա ձեր ռեակցիան դանդաղում է: Այդպիսի դեպքում ավելի լավ է չնստել ղեկին, իսկ եթե այնուհանդերձ անհրաժեշտ է մեկնել, ապա հատկապես հաշվի առեք, որ ձեր ռեակցիայի ժամանակը մեծացել է:



Նկ. 23. Մի ճախրիր ամպերի մեջ:

Կանխատեսությունն
(պատրաստակամություն): Ուշադրության կենտրոնացումը վարորդին օգնում է զգաստ լինել, այսինքն վարել այնպես, ինչպես այլ վարորդներ և հարկ եղած դեպքում պատրաստ լինել փոխելու շարժման ուղղությունը և ընթացքը:

Դա կարելի է կապել յուրաքանչյուր մարդու մոտ շարժումների ավտոմատիզմի հետ։ Փորձը և գործողությունների ավտոմատիզմը թույլ են տալիս լրնկնել տագնապալի իրադրության մեջ։

Տօկունություն։ Վարորդը, ընկնելով խաթարված շարժման մեջ կամ տեսնելով, թե ինչպես մի ուրիշ վարորդ սխալ է վարվում, կարող է հեշտությամբ կորցնել ինքնատիրապետումը։ Բայց այդպիսի դեպքում հեշտությամբ կընկնեք ճանապարհատրանսպորտային պատահարի մեջ։ Երբեք մի ենթարկվեք տաքարյունությանը և մրցարշավի ոգուն։ Տեսնելով երթևեկության այլ մասնակիցների ոչ խելացի վարմունքը, երբեք ինքներդ մի կորցրեք ողջամտությունը։ Մի ձգտեք այլ մարդկանց խրատել։ Լավագույն խրատը կլինի ձեր լավ օրինակը։

Վստահությունը, իհարկե, վարորդի բնավորության գիծ է։ Սկսնակ վարորդը, հասկանալի է, սկզբնական շրջանում ինքնավստահ չէ, որն աստիճանաբար անցնում է։ Բայց լավ վարորդը չպետք է ինքնավստահ լինի։ Դա հանգեցնում է անփութության, համարձակության, իսկ դրանց հետևանքը ճանապարհատրանսպորտային պատահարն է։

Արագության իներցիան։ Եթե խորամուխ լինենք ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառների մեջ, ապա դրանցում ամենաընդհանուրը ավտոմեքենան արագ կանգնեցնելու դժվարությունն է, շարժման վիճակից անշարժին անցնելը։ Դժվարին հակասություն է առաջանում շարժման իներցիայի և անսովոր հանգստի վիճակի (անշարժու-

թյան) միջև։ Արդեն ապացուցված է, որ գոյություն ունի ավտոռուղու հիպնոս, որտեղ արագ և ազատ երթևեկությունը ծնում է արագության հոգեբանական իներցիա, երբ վարորդին ստիպում է սլանալ ավելի ու ավելի արագ։ Այդպիսի դեպքերում կտրուկ կանգառը վերածվում է չափից ավելի դժվար խնդրի և ավտոմեքենայի ու մարդու ուժից վեր է։ Այդ է ասում ավտոռուղիներում բազմաթիվ խմբային (շարասյունային) վթարների փորձը։ Այնինչ քաղաքներում խաշմերուկին մոտենալիս դեղին լույսի վառվելու պահին ամեն անգամ ծագում է հենց այդպիսի գերխնդիր։

Զարգացնելով այն գաղափարը, որ առավել վտանգավոր է արագության կտրուկ անկումը հարեան տեղամասերում, կարելի է հանգել ամբողջ հոսանքի լավագույն ձևով սահուն երթևեկության (հատկապես քաղաքներում և մերձքաղաքյա շրջաններում) ընդհանուր գաղափարին, որի ժամանակ արգելակումը կլինի կամ նվազագույն չափով, կամ էլ ընդհանրապես կրացառվի։ Այս գաղափարի էությունը այն է, որ վարորդի հիմնական խնդիրը հաստատուն համաշափ շարժումն է, այլ ոչ թե թափընթացը և արգելակումը։ Վարման իներցիան վարորդի մոտ ամենաուժեղ զգացումն է։ Ել պարզապես անիրավացի է մարդուց պահանջել արագ կանգառ, երբ նա ամբողջովին հափշտակված է առաջ սլանալու ցանկությամբ։ Սահուն, հավասարաշափ շարժումն էլ հենց երթևեկության ընդհանուր լավացման, նրա անվտանգության բարձրացման գլխավոր պայմանն է։

Հստ արագության և ուղղության երթևեկության բարելավումը վարորդին թույլ կտա յուրացնել բոլոր ազդանշանները, նշանները և այլ ինֆորմացիաները, հարստացնել իր փորձը, սովորել քաղաքային երթևեկության բարդ, բարձրագույն «ստրատեգիան»։ Վարման՝ սահունության հասկացությունը արդեն ընդունված է մի շարք երկրներում և կիրառվում են նույնիսկ սահուն վարման նորմեր (ըստ թափընթացի և արգելակման արագացման, զեկանիվի պտտման և այլն), այսինքն կարեորը ոչ թե պարզապես ավտոմեքենա վարել կարողանալն է, այլ արդյունավետ և անվտանգ վարելու կարողությունը։ Մեզ համար դա նույնպես ունի մեծ նշանակություն։ Հետագոտությունները ցույց են տալիս, որ

մեղ մոտ նույնիսկ ավտոբուսների և տրոլեյբուսների վարորդները հաճախ արգելակում են շափաղանց կտրուկ, դրանով անհանգստացնելով ուղևորներին։ Իսկ տաքսի-ավտոմեքենաների վարորդների համար արգելակների կտրուկ ճոխնչը այնքան սովորական է, որն, ի դեպ, ձմռանը հանգեցնում է կողասահքերի և վթարների։ Հավանաբար սահունակության նոր հասկացողությունը խիստ օգտակար է և պետք է շուտափույթ մտնի վարորդական դասագրքերի և երթևեկության կանոնների մեջ։ Ընդհանրապես հենց սահուն վարելը պետք է տարբերի յավ վարորդներին վատ վարորդներից։

Վարորդների որակավորման գնահատումը։ Ավտոմեքենա վարելու վարպետությունը բնութագրություն ամենաճիշտ գնահատման պարամետրը այն ցուցանիշն է, թե յուրաքանչյուր վարորդ որոշակի վազքի ընթացքում քանի ճանապարհատրանսպորտային պատահարի է ենթարկվում։ Բայց առայժմ այդպիսի ցուցանիշի սահմանումը գործնականորեն անհնար է, քանի որ գոյություն չունեն հասարակ մեթոդիկա, վարորդի ենթադրյալ վթարայնությունը որոշելու սարքավորումներ։ Այդ պատճառով կարող է հարց ծագել՝ իսկ պե՞տք է, արդյոք, վարորդին որակավորման գնահատական տալ։ Զե՞՞ս որ վարորդների բազմամիլիոնանոց բանակից յուրաքանչյուրն ունի իր անհատականությունը և այդ պատճառով շարժե յուրաքանչյուրի մասին գրել։ Սակայն կարելի է առանձնացնել վարորդների որոշ խումբ, գլխավորապես ըստ ավտոմեքենայի վարման մեթոդի և սովորության, և փորձել պարզել, թե դուք որ խմբին եք պատկանում։ Առաջարկվող որակավորումը բոլոր վարորդներին մականուն տրվի։ Գլխավորն այն է, որ այդ խմբերում ճանաչեք ձեզ, հետո վերլուծեք վարման ձեր մեթոդները և բարձրացնեք ձեր վարպետությունը։


Վարորդների խմբերը։ Վարորդներին կարելի է բաժանել երկու խմբի, ըստ երթևեկությանը մասնակիցների հետ ունեցած հարաբերության (մոտավորապես որոշեք, թե դուք որ խմբին եք պատկանում)։ Առաջին խումբը, հետևելով իր ուղեվորության ստրատեգիական նպատակին, երթևեկության տակտիկան ընդունում է, ելնելով տրանսպորտային իրադրության ընդհանուր օրինաշափությունից, հարմարվելով

նրան և շխախտելով տրանսպորտային հոսանքի ամբողջականությունը։ Երկրորդ խումբը՝ ավտոմեքենան, ճանապարհային պայմանները և ճանապարհատրանսպորտային իրադրությունները օգտագործում է իր անձնական նպատակների համար (ինչպես ինձ հարմար է, այնպես էլ վարում եմ)։ Կարելի է վստահ ասել, որ վարորդների առաջին խումբը «Ճանապարհային երթևեկության կանոնների» իմաստը հասկանալու տեսակետից ավելի բարձր է կանգնած, քան երկրորդը։ Բացի դրանից, վերջիններս համարյա միշտ ավտոմեքենան վարում են ֆիզիկական, իսկ երբեմն էլ հոգեբանական հնարավորությունների սահմանագծում։ Վարորդներին կարելի է դասակարգել նաև ըստ ավտոմեքենայի վարման մեթոդների և ուղևորներին տեղափոխելու մեթոդների հարմարավետության։

Ինչպես տեսնում եք, վարորդի բնութագրերը բազմաթիվ են, բայց վերջին հաշվով նա կարող է և պետք է գնահատի իրեն ըստ երթևեկության արդյունքների։ Որպեսզի ձեզանից յուրաքանչյուրի համար հեշտ լինի իրեն գտնել բազմադեմ վարորդների մեջ, մենք մտածել ենք մի քանի անվանումներ, որոնք զուգորդորեն կապված են վարման հնարանքների և մեթոդների հետ։ Միայն թափանձագին խնդրում ենք ձեզ, որ ոչ մի դեպքում պիտակներ չկպցնեք վարորդներին։ Այդպիսի անվանումները միայն նրա համար են, որպեսզի ձեր գործողություններում գտնեք այս կամ այն վատ հատկությունը և այն ուղղեք։

ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՆՏԱԿԱՆԱՑԻ ՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ

«Հանգստություն վրդավողը»: Միայնակ ավտոմեքենային կամ նույնիսկ ավտոմեքենաների շարասյանը վազանցելուց հետո վերադասավորվում է առջեռում և սկսում արգելակել ու կասեցնել ընդհանուր երթևեկությունը։ Ամբողջ շարասյունը «Հավասարակշությունից հանում է» և «տեղափախախտում», որը հանգեցնում է ճանապարհատրանսպորտային պատահարի։ Այդպիսի դեպքերում ավելի լավ է դուրս գալ այդպիսի «Հավասարակշությունից դուրս եկած» շարասյունից և վտանգազերծել իրեն ու ուրիշներին։



Նկ. 24 «Սեղմողը»:

«Սեղմողը»: Զեր առցկից ընթացող ավտոմեքենան (նկ. 24) սեղմում է դեպի ձախ, մինչև առանցքային գիծը, իսկ երբ դուք ուզում եք աջ շարքով շարժվել նրա կողքով, նա միացնում է աջ շրջադարձի ազդանշանը և միաժամանակ


այդ կողմ էլ ուղղում իր ավտոմեքենան։ Այդպիսի դեպքերում կոնֆլիկտից խուսափելու համար, տրվում են մի շարք խորհուրդներ. պակասեցնել արագությունը և մեծացնել դիստանցիան, աշխատելով հասկանալ նրա նկատառումը, արգելակել, եթե իրադրությունը դառնում է վտանգավոր, հնարավորության դեպքում նրան շրջանցել ձախից։

«Մայրահեղը» վարորդ է, որը սահմանափակ տեսանելիության դեպքում չի իշեցնում արագությունը։ «Եիլը» վազանց է կատարում կտրուկ աջ շրջադարձի վրա, «կույրը» (նկ. 25) վաղանց է կատարում ընդերկայնական պրոֆիլի վերին շրջման կետում։ Այդպիսի վարորդներից պետք է զգուշանալ նույնիսկ իր գոտում գտնվելու ժամանակ։

Փրկվել կարելի է միայն արագությունը պակասեցնելու և ճամփեղը դուրս գալու միջոցով։


«Անվճականը» վտանգավոր տեսակի վարորդ է։ Այդպիսի վարորդի հիմնական հատկանիշն է՝ խաշմերուկից կամ

շրջանցումից առաջ սկըսում է «գաղտագողի» շարժվել, արագությունն իշեցնելով համարյա մինչև հետիոտների արագությանը։ Բնականաբար, դուք մտածում եք, որ նա շրջադարձ է կատարում, և հատման գոտում պատրաստվում եք անցնել նրա անցած տե-




Նկ. 25. «Մայրահեղը»:

դով, բայց... վերջին պահին «անվճռականը» սրբնթաց գնում է հիմնական ուղղությամբ, խանգարելով բոլոր հանդիպակաց և ընդլայնած, կան ուղղությամբ ընթացող ավտոմեքենաներին։ Այդպիսի վարումը (նկ. 26) բնութագրական է այնպիսի վարորդների համար, որոնք միանգամից չեն կողմնորոշվում, ճանապարհների ցուցիչները և նշանները, ինչպես նաև նրանց համար, որոնք չունեն ուղևորության ստրատեգիայի և տակտիկայի հատուկ պլան։ Եվ այդ բոլորը նյարդայնացնում է ուղիղ վարորդների։ Ինչպես վարվել այդպիսի վարորդների հանդիպելիս։ Անմիջապես նրան հասկանալ հնարավոր չէ, բայց այդպիսի վարորդի նույնիսկ ամենափոքր նշանի դեպքում աշխատեք առանց ետևից եկողներին խանգարելու ետ ընկնել, կամ, հարմար պահին շըրջանցել նրան։



Նկ. 26. «Անվճռականը»։

«Կցասայլը» վարորդի այնպիսի տեսակ է, որին կարելի է հանդիպել մերձքաղաքային ճանապարհներով երթևեկելիս (նկ. 27)։ Այդպիսի վարորդը հիպնոսացված հետևում է իր առջևից շարժվող ավտոմեքենային։ Զպահանելով դիստանցիան, նա սեղմ վում է առջևից գնացող ավտոմեքենայի ետևի բուֆերին և պատժվում։ Դժբախտաբար ոչ միայն ինքը։ Հաճախ այդպիսի վարորդների ավտոմեքենաների առջևի մասն ունենում է վնասվածքներ։ Նման միջադեպերից խուսափելու համար գոյու-



Նկ. 27. «Կցասայլը»։

թյուն ունեն մի շարք մեթոդներ. մի փոքր պակասեցնել արագությունը և պահել հաստատում. «կցասայլը» չի համբերում և վազանց է կատարում։ Կտրուկ անցնել առաջ, իսկ այնուհետև արգելակել, պահելով անվտանգ դիստանցիան, հայելիով հետեւելով նրա կատարած գործողություններին։

Ճանապարհի վրա վերջին մաները թույլատրվում է, եթե դեռևս 50 կմ-ից ոչ պակաս տարածություն ունեք անցնելու եթե ուղևորությունը երկար չէ, ապա աշխատեք կտրուկ պոկվել «կցասայլից», որպեսզի նշված մաները կատարեք ազատ պայմաններում (առանց «հենարանի»)։

«Կպչողը» («կցասայլի» տարբերակ) վարորդի մի տեսակ է, որին կարելի է հանդիպել քաղաքում եղթևեկելիս (նկ. 28): Նրա վարքագիծը բացատրվում է երկու տեսակի հիպնոսով՝ ավտոմեքենաների միջև եղած հեռավորությամբ, որը եղել է խաշմերուկից առաջ կատարված կանգառի դեպքում և երթևեկության արագության աննկատ փոփոխմամբ, կանաչ լույսի դեպքում ավտոմեքենաների ամբողջ խմբի շարժման ժամանակ։ Այդ տեսակի վարորդները խաշմերուկից առաջ կատարած կանգառից հետո շարժվելով և մեծացնելով արագությունը, լգիտես ինչու ավտոմեքենաների միջև դիստանցիան չեն մեծացնում։ Այդպիսի վարքագիծը մինչև 50 կմ/ժամ արագության դեպքում դեռևս վտանգավոր չէ և նույնիսկ ունի իր դրական կողմը, քանի որ այդպիսի դեպքում խաշմերուկը բավականաշափ արագ ազատվում է ընդլայնական ուղղությամբ ավտոմեքենաների անցումը ապահովելու համար։ Բայց արագության հետագա մեծացման և հաջորդ խաշմերուկին մոտենալիս շատ մոտիկ երթևեկելով, հաճախ հանգեցնում են դժբախտ հետեւանքների։


Այդ երևույթից խոսափել դժվար է, բայց կարելի է, եթե ավելացնենք արագությունը և միևնույն ժամանակ մեծացնենք առջևից գնացող ավտոմեքենայի միջև ընկած դիստանցիան։ Դա անհրաժեշտ է նրա համար, որպեսզի «կպչողը» շհարվածի ձեզ, եթե առջևի ավտոմեքենան կտրուկ արգելակի։ Դուք կունենաք բավարար դիստանցիա, որպեսզի ավելի սահուն արգելակեք և «կպչողի» ավտոմեքենան կանգնեցնեք անվնաս կապոտով։

Ծտեկի հարվածից խուսափելու մյուս միջոցն էլ, (եթե դուք ձեր ետևում նկատել եք «կպչողին») այն է, որ թափավազք կատարելով զսպեք «կըպշողին», ուշադրություն շղարձնելով նրա ագրեսիվությանը։ Այդ դեպքում նա չի ունենա հարվածի համար անհրաժեշտ շարժման արագությունների բավականաշափ տարբերություն։ Բացի դրանից, նա ամբողջ ժամանակ զգույշ կլինի։ Այդ մեթոդը ազդում է նաև «կպչողի» դաստիարակության վրա։


«Ռետինագործը» «կպչողին» հակառակ վարորդի տեսակ է։ Ավտոմեքենաները տեղից շարժվելիս «ռետինագործը» անմիջապես սկսում է իրենից առաջ բաց թողնել առջևի ավտոմեքենան, «ձգելով» դիստանցիան, ինչպես ձգում են պարսատիկի ռետինը։ Այն բանից հետո, եթե առաջին ավտոմեքենան հաստատուն արագություն է հավաքել, երկրորդը դեռևս ընթանում է թափավազքի ռեժիմում, որպեսզի հասնի առաջինի արագությանը։ Եվ ահա, եթե երկրորդը ձեռք է բերում առաջինի ռեժիմը, վերջինս հանկարծ սկսում է կրորուկ արգելակել։ Դրանում մեղավորը, իհարկե, նաև առաջին ավտոմեքենայի վարորդն է, բայց ծանր հետևանքները միայն նրա համար չեն։

Երկրորդ ավտոմեքենայի վարորդը չի կարող թափավազքի ռեժիմից արագ անցնել արգելակման ռեժիմին և դրա հետևանքով կատարվում է ճանապարհատրանսպորտային պատահը։ Երկրորդ ավտոմեքենայի վարորդի համար այդպիսի վիճակը կարելի է բնութագրել որպես ընդհատված շարժում, որ նման է ավիացիոն ընդհատված թռիչքին, եթե ինքնաթիռը դեռևս երկնքում չէ, բայց ոչ էլ թռիչքային գոտու վրա է։ Ընթացքի այդպիսի ընդհատումը միշտ լի է աղետով։


Այդպիսի միջադեպերից խուսափել կարելի է տեղից միա-




Նկ. 28. «Կպչողը»։



Նկ. 29. «Առանցքայինը»:



Նկ. 30. «Կայծակը»:



Նկ. 31. «Ֆիգարո»:

ժամանակ շարժվելու միջոցով և հետագայում շատ սահուն երթևեկությամբ, թույլ շտալով «ոետինագործին» մեծացնել դիստանցիան (հարավոր հատվածի համար «ձգել ոետինը»):

Ճիշտ հակառակ միայլ միջոց է «ոետինագործից» ակնթարթային ձևով պոկվելը, իր համար աղահովել անվտանգ դիստանցիա։ Այս դեպքում վատ չի լինի փոխել երթևեկության դոտին։

«Առանցքայինը»—կանքեռնատար և մարդատար ավտոմեքենաների վարորդներ, որոնք ձրգում են որքան կարելի է մոտ երթևեկել առանցքային գծին (Նկ. 29), հաշվելով, որ բոլոր հանդիպակաց ավտոմեքենաները պետք է միկողմ քաշվեն, նրանց համար երթևեկության նման պայմաններ ստեղծելով։ Դա վարորդի շատ վտանգավոր տեսակ է, քանի որ նահիպնուված է ճանապարհի առանցքով։ Այդպիսի վարորդների հետ ճանապարհի վրա շարժե «զրուցել», պարզապես


անհրաժեշտ է նրանից, ինչպես ժանտախտից, խուսափել: Նա այդպես երկար չի կարող գնալ. շէ որ ճանապարհին հանդիպում են այլ «առանցքայիններ»:

«Կայծակը» ակնթարթորեն փոխում է ավտոմեքենայի դիրքը և իր ճանապարհը հարթում անըմբոնելի օրենքով (նկ. 30):


Դիտողներից ոչ ոք չի կարող որոշել այդպիսի վարորդի ավտոմեքենան ո՞ւր է շարժվում տվյալ պահին և ո՞ւմ կհարվածի: Եթե «կայծակ» տեսակի վարորդը ավտոմեքենան վարում է թաց կամ ձյունածածկ ճանապարհով, ապա նրա շարժման հետագիծը զիգզագաձև է: Եթե այդպիսի վարորդը ձեզ չի խանգարում, ապա նրա վրա ուշադրություն մի դարձրեք: Դա կանի պետականության աշխատակիցը: Եթե դա կատարվում է քաղաքից դուրս, ապա տվեք երեք կարճ ազդանշան, որպեսզի «հողակցեք կայծակը»: Եթե ազդանշաններից հետո չի հանդարտվում, ապա դա խրոնիկ հիվանդություն է, որը պետք է բուժել պետականությունում կիրակնօրյա դասախոսությունների ժամանակ կամ ավտորազայում հավաքարարի՝ աշխատանք հանձնարարելով:

«Ֆիգարո»: Ամբողջ երթուղու երկարությամբ փոխում է շարժման՝ գոտիները, նապաստակի նման հանգույցներ գծելով (նկ. 31): Երբեմն դա նույնիսկ օգտակար և անվտանգ «Ֆիգարո» է, քանի որ օգտագործում է ամենափոքր ազատ տարածությունը և արագ հեռանում ավտոմեքենաների հիմնական խմբից, տեղ ազատելով ուրիշների համար: Բայց հաճախ նա վարորդների քմծիծաղն է առաջ բերում, որ իբր «Ֆիգարոն» ինչ արագությամբ էլ սլանա, միևնույն է յուրաքանչյուր խաշմերուկի մոտ միևնույն ստարտային գծի վրա կանգնած է մեզ հետ:


«Սլալոմիստը»: Նրա համար նշանաձողեր են կանգնած և շարժվող ավտոմեքենաները, մոտոցիկլները, ինչպես նաև հետիոտները: Այդպիսի վարորդը ցուցադրում է ձեւավոր վերադասավորում, ինքնատիպ ավտոմոբիլային սլալոմ (նկ. 32): Կարող է պատահաբար նաև ճզմել կամ հարվածել: Այդպիսի վարորդը համարյա միշտ անվտանգ է, եթե մոտակայքում խաշմերուկ չկա: Հակառակ դեպքում կարող է իր



Նկ. 32. «Սլալոմիստը»:



Նկ. 33. «Բազմագոտայինը»



Նկ. 34. «Շտապկուք»:

Հանկարծակի հայտնվելով բոլորին «խաչակընքել»։ Սովորաբար «սլալոմիստը» ուրիշների համեմատությամբ գնում է ավելի բարձր արագությամբ և դրանով մնացածներին տհաճություն չի պատճառում, եթե վերջիններս իրենք մի կողմ խույս չտան։

«Բազմագոտայինը»: Իտարբերություն բազմահաստցայինի, ոչ մի օգուտ չի բերում։ Թերևս, ճիշտ կլիներ նրան անվանել միջգոտային։ Այդպիսի վարորդի ավտոմեքենան միշտ շարժվում է գոտիների միջև (Նկ. 33) և այդ պատճառով նրա ետևից եկողները չեն կարող իրենց գոտիով անհրաժեշտ արագությամբ նորմալ երթևեկել։ Նրանց խանգարում է երրորդ ավելորդը։ Այդ կարգին են պատկանում նաև այն վարորդները, որոնք շարժվում են սովորաբար իրենց գոտիով, բայց խաչմերուկի «կանգ» գծի մոտ հնար են գտնում այնպես կանգնել, որ առաջին էշելոնում, ենթադրենք, հինգ-վեց ավտոմեքենայի փոխարեն


տեղավորվում է միայն
երեքը: Մեծ խաշմերուկ-
ներում նման վարորդնե-
րի վազքաթափի զսպմա-
նը օգնում է նշագծումը:

«Սուղակ զցողը»: Կան
վարորդներ, որոնք բա-
վականին արագորեն կո-
ղային նրբափողացից
հիմնական ճանապարհ
դուրս գալով, մի քանի

տասնյակ մետր հետո նույն ճարպկությամբ այնտեղից թեք-
վում են մի ուրիշ նրբափողոց: Ընդ որում նրանք առանձնա-
պես ուշադրություն չեն դարձնում երթևեկության մյուս մաս-
նակիցների վրա և հաճախ կարծես ծուղակ են գցում կամ հո-
կելի տերմինաբանությամբ ասած «իր իրանի վրա է
ընդունում» իրեն վազանց կատարել ցանկացող հիմնական
ճանապարհով շարժվող անզգույշ վարորդին, որ մտածել է,
թե քանի որ ավտոմեքենան դուրս է եկել մայրուղի, ապա
հազիվ թե անմիջապես հեռանա այնտեղից: Մուղակ ընկ-
նողին տրվող խորհուրդը կարող է լինել մեկը՝ (եթե չե-
կարելի արգելակել կամ արագ անցնել) «ծուղակողին»
«թեանցուկ» արած մտնել կողային նրբափողոցը: Զայ-
նային ազդանշան տալ պետք է միայն այն ժամանակ, երբ
դուք երկուսով լրիվ կմտնեք ձեզ ոչ անհրաժեշտ փողոց: Այդ
դեպքում արագությունը անհրաժեշտ է ընտրել այնպես, ինչ-
պիսին ունի ձեր «թեանցուկ» արածը: Ոչ մի դեպքում չի-
կարելի արգելակել:

«Շտապկոտը»: Դուրս գալով դարբասից կամ նրբանցքից
դեպի հիմնական մայրուղի, առաջ է բերում մեծագույն վտանգ
(նկ. 34): Նա չի սպասում: Նա թեքվում է դեպի փողոց:
առանց պատրաստվելու իսկ հետո, երբեմն, նաև չի շտա-
պում:

«Ցրվածը»: Եթե միացրել է շրջադարձի ցուցիչը կամ թու-
նելում ենթալապտերները, ապա շարժվում է այնքան ժամա-



Նկ. 35. Դժվար է գնալ
ցրվածի ետևից:

նակ, քանի դեռ հանկարծակի չի սթափվում կամ չի ընկնում ճանապարհատրանսպորտային պատահարի մեջ։ Վտանգավոր է նրանով, որ ապակողմնորոշում է ուրիշ վարորդների, ստեղծելով անհասկանալի իրադրություններ (նկ. 35)։

Ճշմարիտ է, ենթալապտերների միացումով շեն ստեղծվում այդպիսի իրադրություններ, բայց դա առաջին նշանն է, որ ձեր առջևում «ցրված» վարորդ է գտնվում։ Եվ տվյալ դեպքում դա հոգնածության կամ ուժասպառության արդյունք չէ։ Եթե հոգնել եք, անհրաժեշտ է հանգստանալ, իսկ ստիպել տասնյակ, իսկ երբեմն էլ հարյուրավոր մարդկանց մտածելու, թե ինչու ինչ-որ մեկը աջ ազդանշանով թեքվում է ձախ, դա շափազանց մեծ կորուստ է բոլորի համար։ Ճանապարհի վրա այդպիսի մաները խաբեություն է, որի համար պետք է պատժի։ Եվ որքան մեծ արագությամբ է ցուցադրված այդ խաբեությունը, այնքան խիստ պետք է պատժել։


Նույնպես վատ է, երբ վարորդը մաներներ է կատարում, առանց այդ մասին նախօրոք ազդանշան տալու։ Այդպիսի խախտումներ հաճախ են նկատվում։ Հատկապես բեռնատար և ավելի հաճախ ֆուրգոն ավտոմեքենաների վարորդների մոտ։ Առջևում իր գոտու կենտրոնով շարժվում է ավտոմեքենան։ Ահա նա սկսեց քիշ-քիշ դանդաղեցնել ընթացքը և բավականին հեռացավ դեպի աջ, համարյա ընդհուպ ճամփեղը մոտ։ Ոչ մի ազդանշան չկա։ Ետևից եկող ավտոմեքենայի վարորդը լրիվ բանականորեն ենթադրում է, որ հիմա այն ճամփեղը կանգ կառնի կամ կգնա դեպի աջ։ Եվ նա սկսում է վազանցը։ Այդ ժամանակ առաջին ավտոմեքենան կտրուկ թեքվում է ձախ։ Սովորաբար դա ավարտվում է առանց ղոհերի, բայց լինում է և այնպես, որ այրվում են երկու ավտոմեքենան էլ, քանի որ ետևի ավտոմեքենան հարվածում է առաջինի խցիկի ետևի մասին և թափքի տակ գտնվող բենզինի բաքին։

Իսկ ի՞նչ է կատարվում։ Գյուղական ճանապարհներով երթևեկելու սռվոր և ետևի ավտոմեքենաների վարորդներին տեղեկացնելու ալգորիթմը չյուրացրած առջևի ավտոմեքենա-

յի վարորդը տեղական ճանապարհից հիմնականը դուրս գալով տեսնում է, որ ճանապարհը ձախից և աջից ազատ է, Եվ դա էլ տպավորվել է նրա ուղեղում։ Ամբողջովին վստահ, որ ճանապարհը առաջվա նման ազատ է, նա շարժվում է, մինչև այն տեղը, որտեղից պետք է թեքվի։ Քանի որ տեղական ճանապարհները բավականին նեղ են և դուրս գալ կարելի է միայն հիմնական ճանապարհի նկատմամբ մեծ անկյան տակ, ապա վարորդը սկզբում աջ է ընդունում, որպեսզի այնուհետև առանց արագությունը իշեցնելու մուտք գործի իր համար ծանոթ, իսկ ուրիշների համար անտեսանելի ճանապարհը, որը տանում է երբեմն... դեպի հիվանդանոց, իսկ երբեմն էլ... հավիտենական հանգստի։ Եվ այդ բոլորը այն պատճառով, որ մտքով չի անցել հաջորդ պատկերին, ինչպես կալեյդոսկոպում։

«Կուրացնողը»։ Այդ տեսակին են պատկանում այն վարորդները, որոնք ուրիշ ավտոմեքենաների հետ հանդիպելիս համառորեն լույսը շեն փոխարկում հեռավորից մոտակայի (նկ. 36)։ Դրանք ամենից հաճախ մեծ բեռնատարողություն ունեցող ավտոմեքենաների վարորդներն են, որոնց իրենց «նստատեղում» բոլորովին չի անհանգստացնում հանդիպակաց լույսը։ Նրանք մոռանում են, որ մարդատար ավտոմեքենաների վարորդները նստած են անհամեմատ ներքեւ և իրականում նրանց աշքերը համարյա գտնվում են բեռնատար ավտոմեքենաների լապտերների մակարդակի վրա։

Պատահում են նաև «ետևից կուրացնող» վարորդներ։ Դրանք այն վարորդներն են, որոնք ընթանալով շարասյունով, շեն անջատում հեռավոր լույսը և ետևի տեսքի հայելու միջոցով կուրացնում են առջևի ավտոմեքենաների վարորդներին։ Թեպետ հայրենական վերջին մակնիշի մարդատար ավտոմեքենաների ետևի տեսքի հայելին այնպես են տեղադրում, որպեսզի թուղարվի նման կուրացումը (հայելին կարելի է ցերեկային դիրքից շուրջ տալ գիշերայինի)։ Այնուհետեւ նկարագրված դեպքում ավելի լավ է լապտերները հեռավոր լույսից փոխարկել մոտակայի։




Նկ. 36. «Կուրացնող»:

նում, հինգական վայրկյանով հերթականությամբ միացրեք շրջադարձի մեկ ձախ, մեկ աջ ցուցիչը։ Հերթական հաջորդ մեթոդը մի քանի անգում թեթևակի արգելակելն է, ամեն անգամ միացնելով, աջ շրջադարձի ցուցիչը և դրանով «կուրացնողին» հրավիրելով, որ վազանցման մաներ կատարի։ Եթե դա էլ չի օգնում, ապա կանգնեք և թողեք ձեզանից առաջ անցնի երկշոտ վարորդը, որը վախենում է մթության մեջ առաջինը գնալ, բայց չի հասկանում իր կոլեգայի անբարեհարմար վիճակը, որին նա կուրացնում է ետևի տեսքի հայեցիով։ Փորձառու վարորդները երթևեկում են իրար հերթափխելով, այսինքն որպես միմյանց առաջնորդող։ Այս դեպքում ետևից եկողները չեն միացնում լապտերների հեռավոր լույսը, հուսալով, որ առաջնորդողը վտանգի դեպքում կզգուշացնի իրենց կամ կիշեցնի արագությունը մինչև անվտանգ սահմանը,

«Եսասերը»: Ավտոմեքենան կարող է կանգնեցնել և երբեմն էլ կանգնեցնում է այնպիսի տեղում և այնպիսի դիրքով (նկ. 37), որ այն հնարավոր չէ շրջանցել: Նման վարորդի ավտոմեքենային առանձնապես վտանգավոր է հանդիպել մութ փողոցում: Սակայն ցերեկն էլ այդպիսի վարորդի հետ դժվար է: Դեռևս լավ է, եթե նա նստած է ավտոմեքենայի մեջ և նիրհում է: Ազդանշանի դեպքում կարող է հեռանալ այդտեղից: Իսկ կան այնպիսի վարորդներ, որոնք իրենց ավտոմեքենան թողնում են ճանապարհի նկատմամբ շեղ վհճակում, իսկ իրենք գնաւմ են ճաշարան կամ տուն: Հետո

նույնիսկ կշտամբում են, թե
իր ավտոմեքենան կամ
քերծել են, կամ էլ տեղա-
փոխել մի ուրիշ տեղ:

Երբեմն վարորդն իր
ավտոմեքենան կանգնեց-
նում է նաև այսպես. անիվ-
ներից մեկը մայթի, երկ-
րորդը՝ գազոնի, իսկ մյուս
երկուսը դեպի տան մուտքը
տանող շատ նեղ քանով




Նկ. 37. «Եսասերը»:

մասի վրա. Եթե անհրաժեշտ է ինչ-որ բեռնաթափում կատարել, խնդրեմ, իսկ այնուհետև պետք է ուրիշների համար ազատել ճանապարհը: Նման դեպքերում փորձառու վարորդները միշտ հետևում են «Հեռուն դնես՝ մոտիկից կվեցնես» առակին: Եթե կայանման համար հարմար տեղը գտնվում է ձեզ անհրաժեշտ տեղից 50—100 մ հեռավորության վրա, ապա, իհարկե, ավելի լավ է ավտոմեքենան թողնել այնտեղ:

«Օրինապահը»: Այդպիսի վարորդները «ճանապարհային երթևեկության կանոնները» պահպանում են «նախազգուշացնելով» ինչպես, օրինակ, շարժվող թիրախին կրակող որոտրդը: «Օրինապահ» վարորդները (և դա նրանք համարում են ճիշտ) սկսում են կտրուկ արգելակել լուսացույցի ոչ միայն կարմիր, այլև դեղին ազդանշանի լուսավորման սկըզբից շատ առաջ, կասեցնելով ավտոմեքենաների մի ամբողջ խմբի, որն անվտանգ կանոնների համաձայն կհասցներ անցնել ճանապարհների հատման տեղը (Նկ. 38): Դրա հետևանքով ավտոմոբիլային ճանապարհում կատարվում է ճանապարհատրանսպորտային պատահար:

Այդպիսի վարորդները ճանձրացնում, խանգարում, նյարդայնացնում են մոտավորապես այնպես, ինչպես դանդաղնթաց ավտոմեքենան ավտոմայրուղու վրա, ջավալին այն է, որ «օրինապահներին» դժվար է համոզել, թե նման վարվելաձեռ սխալ է: Կապվել այդպիսի վարորդների հետ պետք չէ, դրանք սովորաբար դյուրաբորբոք, սահմանափակ մարդիկ են, որոնք դրան ավելացրած նաև՝ հումոր շեն հասկանում: «Օրինապահների» տարատեսակներից մեկն էլ այն վարորդ-



Նկ. 38. «Օրինապահը»:

ներն են, որոնք ամեն ինչ լավ գիտեն (և ավտոմեքենայի թեորիան, և, իհարկե, «ճանապարհային երթևեկության կանոնները» և բոլոր օրենքները), բայց վատ են կողմնորոշվում, թե ճանապարհին ինչ են անում ուրիշները: Նրանք մտածում են, որ օրենքը միայն իրենց

համար է և եթե նրանք այն խստորեն պահպանեն, նույնիսկ ուշադրություն չդարձնելով ուրիշներին, ապա իրենց համար երթևեկության անվտանգությունն ապահովված է: Այդպիսի «օրինապահի» աշքերին կարծես ծածկոցներ կան, որոնք խանգարում են նկատել նույնիսկ հետիոտնային անցման մոտ կանգնած երեք քայլի վրա գտնվող իր լավ ծանոթներին:

Վարորդների այդ տեսակին բնութագրական է ապակե աշքերը, որ նա միայն առաջ և երբեմն էլ հավաքելով ամբողջ ուժերը և հաղթահարելով «առաջ նայելը», դեմքի դրժգոհ արտահայտությամբ նայում է ետևի տեսքի հայելու մեջ: Չնայած կանոնների ճիշտ պահպանմանը, «օրինապահները» ավտոմեքենա վարել չեն կարողանում և չեն սովորի, որովհետև գիտակցաբար վախենում են դրանից:

Երբեմն «օրինապահների» հետ պատահում է այնպիսի անախորժություն, որի արմատները ընկած են նրա կողմից լուսացույցի կամ կարգավորողի ցանկացած ազդանշանը ակնթարթորեն կատարելու ձգտման մեջ: Եթե այդպիսի վարորդը նույնիսկ «կանգ» գիծը անցնելիս տեսնում է լուսացույցի դեղին ազդանշանը, ապա կտրուկ արգելակում է և մեխվում տեղում: Ահա այստեղ էլ ետևի ավտոմեքենան հարվածում է նրան: Կամ, օրինակ, պետավտոտեսչության աշխատակիցը ձողիկով ցույց տվեց դեպի գետին (ընդ որում եռանդագին) և «օրինապահ» վարորդը, առանց շուրջը նայելու, ավտոմեքենան անմիջապես կանգնեցնում է: Փորձված վարորդն այդպիսի դեպքերում ձեռք կառնի նախազգուշական բոլոր միջոցները և հետո միայն կանգ կառնի, չէ որ ծերությանն էլ հատուկ է սխալվելը: Այդ պատճառով հանկարծա-

կի կանգ առնել խորհուրդ չի տրվում, Մի եղեք «օրինապահ», այլապես ձեր ավտոմեքենայի ետևի կողմի հարվածից դուք կարող եք ստանալ ավելի շատ տհաճություններ, քան տեսուչի տված նկատողությունից:

«Մենակյաց խեցգետինը»:
նը»: Որոշ վարորդներ

մշտապես իրենց հետ կարծես կրում են ճանապարհատրանսպորտային պատահարների պատճառը, այնպես, ինչպես մենակյաց խեցգետինը իր խեցուն (նկ. 39):

Հնկնելով պատահարի մեջ, նրանք որպես կանոն, պատճառ են բռնում տագնապալի իրադրության հանկարծակի առաջացումը: Իրականում այն առաջանում է հմտության, ձեռնահասության, փորձի և մարզման բացակայության, իսկ գլխավորապես ավտոմեքենան վարելու ժամանակ շմտածելու և իրադրությունը թեկուղ 10 վայրկյան առաջ կանխատեսելու հատկություն շզարգացնելու պատճառով, ի՞նչ է նշանակում «վրաերթը կատարվել է հանկարծակի»: Եվ ինչո՞ւ փորձառու վարորդների մոտ նման հանկարծակիություն համարյա չի լինում: Դրանք առաջանում են միայն այն դեպքում, երբ վարորդը շատ լավ չգիտե ճանապարհի, ավտոմեքենայի և իր սեփական վիճակը:

Այսպես, զրի միջով անցնելուց հետո արգելակային կաղապարների վերադիրները կորցնում են իրենց շփման հատկությունը: Եթե մինչև այդ շարժվում էիք փոքր դիստանցիայով, ապա անհրաժեշտ է այն մեծացնել: Այլապես կստացվի հետևյալը: Առջևից շարժվող ավտոմեքենայի վարորդը դեռևս մինչև ջրափոսով անցնելը արգելակել է: Այդ դեպքում արգելակային կաղապարները սեղմվել են թմբուկներին և նրանց միջև ջուրը չի թափանցել, իսկ դուք այդ շեք արել: Մեծ ջրափոսից դուրս գալուց հետո առաջին ավտոմեքենայի վարորդը սովորականի նման արգելակում է և կանգ է առնում, ինչպես միշտ: Դուք ևս արգելակում եք սովորականի նման,



Նկ. 39. «Մենակյաց խեցգետինը»:

բայց կանգ եք առնում, դժբախտաբար, ոչ այնպես, այլ անհամեմատ մեծ տարածության վրա, քանի որ ձեր ավտոմեքենայի արգելակային ուղին սովորականի համեմատությամբ երկարել է։ Ահա և ձեզ հանկարծակի վրաերթ, որից նորմալ շրջայացության դեպքում կարելի է խոսափել։ Դրա համար շրափուն անցնելու պահին անհրաժեշտ էր վարել այնպես, ինչպես առաջին ավտոմեքենայի վարորդը կամ եթե դուք այդ շեք արել, ապա բավականին մեծացնել դիստանցիան, իմանալով, որ թաց արգելակային կաղապարներով արգելակումը պակաս արդյունավետ է։

Եթե դուք տեսնում եք, որ առջևից գնացող ավտոմեքենան անհարթ ճանապարհով անցնելիս գետնից պոկվելով վեր է թռչում, ապա պետք է ավտոմեքենան նախօրոք արգելակել։ Այլապես կարող է ստացվել այսպես։ Առաջին ավտոմեքենան վեր թռչելիս շարժիչը կանգ է առնում և հետևաբար ավտոմեքենան նույնպես։ Զեր ավտոմեքենան նույնպես վեր է թռչում և այդտեղ դուք տեսնում եք, որ ձեր առջևի ավտոմեքենան շափազանց մոտ է գտնվում, սեղմում եք արգելակին, բայց... օդը չի կարող արգելակել անիվներին։ Հետևանքը այն է, որ ևս մեկ անսպասելի անախորժության պատճառով կոտրվել է ձեր ավտոմեքենայի առջևի մասը։

«Հպողը»։ Գործելակերպի հմտության բացակայությունը ճանապարհատրանսպորտային պատահարների ժամանակ լի է շատ ծանր հետևանքներով։ Առայժմ կնկարագրենք միայն մեկ այդպիսի դեպք։ Բազմաթիվ վարորդներ և ուղևորներ գոհվում են, թվում է շատ պարզ ճանապարհատրանսպորտատային պատահարների ժամանակ։ Նեղ ճանապարհ, երկու հանդիպակաց ավտոմեքենաներ։ Մեծ բեռնատար և փոքր մարդատար (նկ. 40)։ Եվ ահա միմյանց մոտիկ անցնելիս մարդատար ավտոմեքենան իր ետևի մասով կառչում է բեռնատարի միջին կամ նույնիսկ առջևի մասին։ Թվում է թե բարդություն չկա՝ «շխկացրին» և վերջ։ Փորձառու վարորդը նման դեպքերում այսպես է վարվում։

Հենց որ կողքից հարված է զգում, անմիջապես մեծացնում է շարժման արագությունը և ծայրագույն դեպքում ծրոված թափարգելով կամ վնասված ետևի անվածածկոցով


«Հաղթանակած» շարումակում է շարժվել (հաճախ կանգ շառնելով մինչև ավտոտնակը՝ ինչպիսի տռկունություն):

Անփորձ վարորդի համար դա համարյա միշտ ավարտվում է աղետով, քանի որ մետաղների ամենանվազագույն կրծտոցի դեպքում նա թողնում է զրոսելի:


Կարգավորման ոտնակը և, որը ավելի վատ է, սեղմում է արգելակի ոտնակը: Հարվածը շոշափման կարգից անցնում է «կողային հպման» կարգին (հպում են կողով): Ի՞նչ է կատարվում այդպիսի անհարմար հարվածի դեպքում: Երկու ավտոմեքենաները սարսափելի ուժով՝ դարսվում են մեկը մյուսի վրա, ինչպես մկրատի կտրող մասերը: Պտտման կետը սկզբնական շոշափման տեղն է: Երբեմն նույնիսկ այնպես է լինում, որ հարվածը «կող-կող» դասից անցնում է «ճակատ-ճակատ» դասին, որը համարյա միշտ ավարտվում է ճանապարհատրանսպորտային պատահարով (աղետային հետևանքով):

«Մոտացիկիստը»: Բոլորին հայտնի է, թե ինչպես մոտոցիկիստները արիաբար երթևեկում են և ավտոմեքենաների միջև ճարպկորեն շեշտակի թեքումներ կատարում: Կան ավտոմեքենաների վարորդներ, որոնք դեկանիվը պտտում են անմիջապես 90° : Դրանք ակնհայտ մոտոցիկիստներ են բառի վատագույն իմաստով (նկ. 41): Իսկ իսկական ավտոմոբիլիստը այդ 90° բաժանում է վեց 15° -ական, իննը 10° -ական կամ ծայրագույն դեպքում երեք 30° -ական մասերի:

Եթե դուք ձեր մեջ զգում եք «մոտոցիկիստային վարմունքի սկիզբ», ապա մեր խորհուրդն է շղանալ ուղևորներ փոխադրող և երկար գաբարիտով բեռներ փոխադրող տրանսպորտային միջոցների վարորդ: Հեղուկ նույնպես մի փոխադրեք: Ամբողջովին շցված ցիստեռնի դեպքում կարող է հիդրավլիկ հարված առաջանալ: Մետաղ կարելի է փոխադրել, բայց առանց կցորդիչի: Հակառակ դեպքում կկոտրեք ավտոմեքենայի կողը կամ այն կշրջվի:



Նկ. 40. «Հպողը»:




Նկ. 41. «Մոտոցիկլիստի» տարատեսակն է «արագաճախարակը»։ Այդպես են անվանել ոչ նրա համար, որ նա կտրուկ և մեծ անկյան տակ է թեքում ղեկանիվը։ Այդպիսի մականուն են կպցրել այն վարորդներին, որոնք նրբանցք են թեքվում, գնալով օղակով կամ պարզապես փոքր շառավիղ ունեցող ճանապարհի կորացումով, առանց արագությունն իշեցնելու։

Նրան չի հետաքրքրում, թե այս դեպքում ի՞նչ է կատարվում ուղեսրահում կամ թափքում։

«Հետապնդում ստվերին»։ Երբեմն փորձառու վարորդի համար և՛ ծիծաղելի է, և՛ ցավալի։ Դա լինում է այն դեպքում, եթե նա տեսնում է «ստվերը հետապնդող» մասնագետի, ինչպիսի՞ վարորդ է նա։ Այդպիսի վարորդն իր ավտոմեքենայով վազանցում է բոլորին՝ անցորդներին, մոտցիկլներին, ավտոմեքենաներին։ Իսկ եթե վազանցելու ոչինչ չկա, ապա աշխատում է վազանցել իր ստվերին (նկ. 42)։

Դա այն վարորդն է, որն անտարբեր չի կարող նայել իր առջևից գնացողներին, նույնիսկ իր ստվերին։ Նրան հատկապես գրգռում են վազանց կատարող ավտոմեքենաները։

Եվ ահա ամբողջ ժամանակ սլանում է այդ ընկերը։ Սլանում ու սլանում, չնայած դրա անհրաժեշտությունը բոլորովին չկա։ Որպեսզի նրան համոզես վարման այդպիսի մեթոդի աննպատակ լինելը, անհրաժեշտ է շատ էներգիա ծախսել։ Դա վարորդի վտանգավոր տեսակ է, բայց ոչ թե ուրիշների, այլ իր համար։ Նրա թերությունը վարորդական անկարգապահությունն է, որը վերածվում է ալկոհոլային



Նկ. 42. Հետապնդում ստվերին։

տիպի խրոնիկական հիվանդության, Դա յուրատեսակ մոլագար է, որը հետապնդելով իր, ոչ միշտ պարզորոշ ձևակերպված նպատակին, ոչ մի ձևով գարշանք չի զգում։ Վարորդը վարում է ավտոմեքենան սահմանային, իսկ երբեմն էլ ֆիզիոլոգիական հնարավորություններից բարձր արագությամբ։ Ճանապարհատրանսպորտային պատահարից փրկում է միայն պատահականությունը։ Այդպիսի վարորդն արագ ծերանում է և որպես վարորդ, և որպես մարդ։


Կարող են ասել, որ յուրաքանչյուր վարորդ անցնում է այդ փուլը։ Ճիշտ է։ Բայց մեծամասնությունը վարման սկզբնական շրջանից հետո շուտով հաղթահարում է այն, իսկ առա ոմանք այդպես էլ մնում են «մանկական հիվանդության» այդ փուլում։

ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՂՈՒՄ ՆՍՏԵԼԱԶԵՎԻ

Նախքան երթևեկության սկսելը վարորդները պետք է ավտոմեքենայում իրենց աշխատանքային տեղն այնպես նախապատրաստեն, որ այն առավելագույն չափով հարմար լինի և հնարավորություն տա վստահությամբ վարվել լծակների, ոտնակների և ղեկանիվի հետ։ Վարորդները ուսման և հմտություն ձեռք բերելու ընթացքում մշակում են իրենց տիպական նստելաձեռ և ավտոմեքենան վարելու յուրաձեռւթյունը։ Այդ տեսակետից նույնպես կարելի է պայմանականորեն թվարկել վարորդների մի քանի տեսակներ։

«Ուրուցք»։ Լավ վարորդը նույնիսկ տագնապալի իրադրություններում համառորեն չի կառչում ղեկանիվից և լայն բացված սառած աշքերը չի հառում ճանապարհին։ Հանգիստ նստելաձեռ, նորմալ բացված աշքեր, որոնք ամեն ինչ տեսնում են և նկատում՝ ահա լավ վարորդի հիմնական հատկանիշները։

Ի՞նչ է տեղի ունենում, եթե վարորդը ամբողջ մարմնով ընկնում է դէկանիվի վրա և կառչում նրանից։ Ահա թե ինչ, ղեկանիվը արագ պտտելու անհրաժեշտության դեպքում արմունկները սեղմվում են կողքերին՝ կողերին և մինչև դուք կշարժվեք, որպեսզի մեծացնեք ձեռքերի գործողության



Նկ. 43 «Ռուբերը»:

ամպլիտուդը, կանցնի
ճիշտ այնքան ժամանակ,
որքան անհրաժեշտ է
խոշընդուռը վրաերթի են-
թարկելու համար: «Ռւ-
բերը» տեսակի վարորդ-
ները (նկ. 43) իրանի
ուժեղ թեքման պատճա-
ռով, որպես կանոն, չեն
կարող արագ (շնայած
նրա մեծ ցանկությանը)

ռտքերը մի ոտնակից մյուսը տեղափոխել: Այդպիսի վարոր-
դը սովորաբար փոխանցումները փոխարկում է մեծ արհա-
մարհանքով, ձեռքի թափահարման ժեստով (կարծես ինչ-որ
մեկին մեծ լավություն է անում):

Նման վարորդներին թվում է, թե իրենք ավտոմեքենան
վարելիս հոգնածություն չեն զգում և դուրս գալով մեքենա-
յից, պատրաստ են գնալ թեկուզ մինչև աշխարհի վերջը, թե
հոգնել է մեշքը, գլուխը պտտվում է, ցավում են ուսերը, այդ
բոլորը վերագրում են ամեն բանի, բայց ոչ աշխատանքային
տեղում անհարմար նստելաձեկին: Նրանք չեն հավատում, որ
ավտոմեքենան վարելիս կարելի է հոգնել և որ այդ հոգնա-
ծությունը մեծ մասամբ կախված է նստելաձեկից: Հաճախ
այդպիսի վարորդները գանգատվում են վզի ցավից: Դա տե-
ղի է ունենում մեծ լարվածության պատճառով, որն առաջա-
նում է գլուխը անհարմար, մշտապես առաջ թեքված դրու-
թյամբ պահելու պատճառով: Ի՞նչ անել, որպեսզի ավտոմե-
քենա վարելիս չնմանվել «ուրուրի»: Սկզբում անհրաժեշտ է
պարզել այդպիսի նստելաձեկի պատճառը, իսկ դրանք երեքն
են. վարորդի ֆիզիոլոգիական և հոգեբանական վիճակը, նրա-
տարանի թիկնակի դեպի ետ շատ մեծ թեքությունը (կոտըր-
ված է թիկնակը), նստարանի շատ ցածր դիրքը: Հետևանքը
լինում է այն, որ վարորդը ստիպված է ձգվել դեպի դեկա-
նիվը, որպիսզի կարողանա նայել՝ դիմապակու մի-
ջով: Վարորդը պետք է նստարանը հարմարեցնի այնպես,
որպեսզի և նստելը հարմար լինի և ամեն բան «ձեռքի և
ոտքի տակ»:


«Վերանսկիշը»: Նայում է ամեն բանի, և պետք եղած ու շեղած ժամանակ ինֆորմացիա է հավաքում։ Ամբողջ ժամանակ պտտեցնում է գլուխը և իրանը (նկ. 44)։ Միշտ ինչոր բան է փնտրում, իսկ ի՞նչ, ինքն էլ շգիտե։ Դրա հետեւանքով ավտոմեքենան սկսում է «օրորվել»։ Որոշ ժամանակ վարորդը դադարում է «վերահսկիչ» լինելուց, բայց ոչ երկար և միայն նրա համար, որպեսզի ավտոմեքենան պահի առաջադրված հետագծի վրա։ Հենց որ ավտոմեքենան նորմալ է ընթանում, նորից սկսվում են ծամածոռությունները, նստելու դիրքի փոփոխումները և իրանի թեքումները, լուսամուտից կախ ընկնելը, թեքումները դեպի կողքին նստածուղմորը։

«Վերահսկիչի» մի այլ տեսակն էլ խցիկում նստում է ինչպես ընձուղտը, դանդաղ շրջելով գլուխն ու իրանը, դիտում է ճանապարհային տարածությունները և հեռուները։ Նա շի տեսնում միայն այն, ինչ կատարվում է անմիջապես իր ավտոմեքենայի մատակայքում։


Լավ, բայց վտանգավոր վերահսկիչին ինչպես դարձնել ավելի լավ, բայց անվտանգ դիտող։ Այնքան էլ դժվար չէ։ Անհրաժեշտ է հետաքրքրվողից վերածվել հարցասերի և առաջին հերթին հետաքրքրվել այն ամենով, ինչ անմիջապես կապ ունի ավտոմեքենայի անվտանգ երթևեկության հետ։

«Պննամոլը»: Բարձրացված օձիքով, նորածե թիկնոցով, որը հնարավորություն շի տալիս գլուխը թեքել, քանի որ նորածե գլխարկը կպշելով օձիքին, սահում է աշքերի վրա (նկ. 45)։ Վեր բարձրացված երկար մազախավով ծոպավոր շարֆը խանգարում է ինչպես որ պետք է տեսնել ճանապարհի մոտակա մասը։ Դեմքի նշանակալի մասը սովորաբար ծածկում է հսկայական սև ակնոցը։ Փաթաթվածքով ղեկանիվը, եղանակին շհամապատասխանող փափլիկ ձեռնոցները, հըսկայական զարդերով կամ բարձր կրունկներով նորածե կոշիկները՝ այս բոլորը պայմաններ շեն ստեղծում ավտոմեքենայի անվտանգ երթևեկության համար։


Ամենաանհարմար պահին շարֆը սահում է աշքերի, ավելի ճիշտ ակնոցների վրա, փաթույթավոր ղեկանիվը «ջրասուզակային» ձեռնոցների հետ զուգակցված թույլ շեն տա-



Նկ. 44. «Վերահսկիլ»:



Նկ. 45. «Պճամոլը»:



Նկ. 46. «Ձեռքից կաղը»:

Լիս արագ մանկը կատարել, ոտքերը, ավելի ճիշտ կոշիկները մնում են մեկ կամ երկու ոտնակներին սեղմված:

Եվ ընդհանրապես ավտոմեքենայի ղեկին նըստած այդպիսի տիպերը հիշեցնում են Տարասկոնացի Տարտարենին, բարոն Մյունհաուզենին, կապիտան Վրանգելին և գրական ուրիշ նմանօրինակ հերոսների, որոնց ինքնավստահությունը բացահայտորեն գերազանցել է իրենց գործնական հնարավորությունները:

«Ձեռքից կաղը»: Զախ ձեռքը դուրս է հանված լուսամուտից (Նկ. 46) և կամ թափահարվում է դուան արտաքին մասում, կամ էլ կախված է դանիքի ջրատար ակոսից: Եթե դա կատարվում է մայրուղում և արագությունը բարձր չէ (70—80 կմ/ժամ), ապա այդպիսի վարմունքը ներելի է: Բայց ահա այդպիսի «մեկ ձեռքանին» շարժվում է լեռնային ճանապարհով: Նրա դեմքից և սեղմված ատամներից երևում է, որ ոլո-


բանների վրա մի ձեռքով շատ դժվար է ավտոմեքենան վարել, առավել ևս, եթե համարյա իրանը կիսով շափ դուրս է հանված լուսամուտից: Եվ բավական է ոլորանի վրա մի փոքր բարդանան պայմանները, որ վարորդի «կիսաֆիզիկական» հնարավորությունները լքավականացնեն ավտոմեքենան իրեն ենթարկելու համար: Փորձառու վարորդները շեն սիրում պճնամոլություն անել: Նրանք հերթականությամբ ձեռքը դուրս են հանում միայն նրա համար, որպեսզի ղեկանիվը լարված բռնելուց հետո չորացնեն ափը:

**ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՀՈՍԱՆՔԻ ՊԱՑՄԱՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ
ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԸՍՏ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆ ՎԱՐԵԼՈՒ ԶԵՎԵՐԻ**


«Կոլեկտիվայինները»: Սրանք տարերայնորեն կազմում են 100—150 մ-ից ավելի երկարությամբ խմբեր (նկ. 47) կամ նույնիսկ շարասյուներ: Երկգոտի կամ եռագոտի ճանապարհում այդպիսի «հոտին» վաղանցելը համարյա անհնար է: Այդ պատճառով պետք է այնուհանդերձ երթեմն զննել շրջապատը և ստեղծել անվտանգության կղզյակներ, որոնք կարող են օգտագործվել մանկրող ավտոմեքենաների կողմից: Ինչպես դա անել: Քաղաքից դուրս հասկանալի է ինչպես, իսկ քաղաքում դա անել ընդհանրապես պետք չէ, քանի որ այստեղ օգնում են լուսացույցները, որոնք ստեղծում են 30—45 վրկ տևողությամբ ընդմիջումներ:

«Սրախոսը»: Սուր (քայլ ոչ սեփական) զգացումների սիրահար է:

Այս տեսակի վարորդը կարող է հատման գոտում երրորդ, նույնիսկ շորրորդ շարքից իր ավտոմեքենայով կտրել մընացած բոլորի ճանապարհը (նկ. 48), որով իրականում ուրիշներին ստիպում է ճաշակել սուր զգացումներ՝ վախ, ստա-




նկ. 47. «Կոլեկտիվայիններ»:



Նկ. 48. «Սրախոսը»:



Նկ. 49. «Կատակամերը»:



Նկ. 50. «Թափթիվածը»:

նալ բութ հարված: Դեռևս լավ է, որ այդ վարորդը բավականին արագ է անցնում, քան մինչեւ մյուսները կմոտենան նըրան: Եվ շես հասցնում նույնիսկ վախենալ: Այդպիսի վարորդի կատարած մաները գուշակել համարյա անհնար է:

Այդպիսի գեղքում մենք կարող ենք տալ մի այսպիսի խորհուրդ՝ երբեք մի աշխատեք արագ դուրս գալ նրանց առջև: Եթե դուք տեսնում եք, որ անհնար է այդպիսի «սրախոսին» ոչ շրջանցել և ոչ էլ առաջ բաց թողնել, ապա կա մեկ ելք՝ աշխատեք շեշտակի թեքել աջ և «թևանցուկ» անել ավտոմեքենայի անվածածկոցից կամ դռնից, բայց որքան կարելի է փոքր անկյան տակ և «թևանցուկ» արած, նրա հետ միասին մաներ կատարել, աշխատելով շղանալ երկրորդ «սրախոսը», որպեսզի շղթայական ռեակցիա շառացնի մյուսների մոտ:


«Կատակամերը»: Կարող է «կատակել» հետիոտների հետ, նրանց վրա շփելով ջրափոսի

կեղտը (նկ. 49), մտնելով բակ, ձայնային աղդանշանով վախեցնել տարիքավոր մարդու, փակել հետիւտնի կամ ուրիշ ավտոմեքենաների անցումը։ Այդպիսի կատակասերների շրջանում հանդիպում է նաև «ուղտ» տիպը, որոնք սիրում են թքել խցիկից, առանց նայելու ուր կամ ում վրա։ Ընդհանրապես այդպիսի վարորդը տհաճ տիպ է։

«Թափթվածը»։ Ավտոմեքենայի արտաքին տեսքը վատ է։ Բեռը թափքում ամրացված չէ (նկ. 50)։ Թափթից կամ հեղուկ է թափվում, կամ էլ բարձր արագության ժամանակ հանկարծ դուրս է թոշում մի կապոց բրոշյուր, մի քանի պարկ թեփ, կիր կամ մեկ այլ սորուն նյութ։ Օրինակ, ցեմենտի շաղախ փոխադրող շատ ավտոմեքենաներ իրենց ետևից թողնում են «այցելումներ», որոնք ճանապարհի ասֆալտապատ ծածկույթի վրա վերածվում են բետոնի և ուրիշ վարորդների պատճառում շատ տհաճություններ։ Ի դեպ նկատի ունեցեք, որ տհաճ տեսք ունեցող ավտոմեքենաների հետ պատահարներ անհամեմատ հաճախ են կատարվում։ Այնպես որ «թափթվածներից» հեռու մնացեք։

ՎԱՐՈՐԻՆԵՐԻ ԳԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀՍՏ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՓՈԽԱԳՐՄԱՆ
ՄԵԹՈԴՆԵՐԻ

«Դյուրագրգիռ»։ Մենք շենք կարծում, որ դուք այն վարորդներից եք, որոնք տանից կարճատե ուղևորության դուրս գալով (շոսելով արդեն հեռավոր երթի մասին), ուղևորներին սկսում են պատմել իրենց ավտոմեքենայի հնարավոր անսարքինությունների մասին (նկ. 51)։ Հստ որում խոսակցությունը տանում են այնպիսի անսարքինությունների մասին, որոնք կնրջ ի վերջո, և հավանաբար հենց այդ ուղևորությունում կարող են բոլորի մահվան պատճառը դառնալ։ Ավտոմեքենայի կառուցվածքից այնքան էլ չհասկացող, բայց մահը լավ պատկերացնող ուղևորների վրա այդպիսի պատմությունները ծանր տպավորություն են թողնում։ Ուղեսրահում տիրում է լարված լոռություն, բոլորն ուշադիր լուս են, ամեն վայրկյան սպասելով, որ ավտոմեքենայի ինչ-որ մասը կպոկվի կամ կպայթի։



Նկ. 51. «Դյուրագրդիուր»:

Ուղևորների մոտ աստիճանաբար զղաձգություն է սկզբում և մինչ վարորդը պատմում է, որ կարող է ավտոմեքենայի կարդանային լիսեռը սլոկվել և հարվածել ոտքերին, կարող է կոտըրվել կիսասոնին և ավտոմեքենան շուրջ գալ, որ այն կարող է պայթել

անսարք ձայնամարիչի հետևանքով, նրանք պատրաստ են թողնել ավտոմեքենան և ոտքով տուն փախչել:

Կան նաև այնպիսի վարորդներ, որոնք զառանցում են, թե յուղի ճնշումն ընկել է, այնինչ ցուցիչ սարքը ցույց է տալիս ավելի քան երեք միջնորդ ճնշում. վախենում են, որ չեն հասնի մինչև ավտոլիցքավորման կայան, բայց փաստորեն դեռևս կես բաք բենզին ունեն և այլն: Լավ վարորդը նույնիսկ ակնհայտ անսարքինության դեպքում ոչ ոքի չպետք է ասի այդ մասին այնքան ժամանակ, քանի դեռ այն չի վերացված:

«Հարմարավետ վարորդը»: Կարծում ենք, որ դուք այն վարորդներից եք, որոնց հետ կարող են ուղևորություն կատարել բոլորը, սկսած ճոճմանը սովոր ամուր կաղնիներից՝ ծովայիններից, տիեզերագնացներից, մեծ բարձրություններում թոփշք կատարող օդաչուներից և վերջացրած այնպիսի մարդկանցով, որոնք սրտխառնոց կարող են ունենալ նույնիսկ պատի ժամացույցի ճոճանակի ճոճումից:


Կան շատ օրինակներ, որ ուղևորն երթևեկության ընթացքում իրեն այնքան էլ լավ չի զգում: Կարող են առարկել, որ դա մեծ մասամբ կախված է ավտոմեքենայից: Այո, դա այդպես է: Բայց ահա հարցն այն է, որ վարորդն ինքը հարմարվի ցանկացած ավտոմեքենային այնպես, որպեսզի գծային և կողային արագացումները չգերազանցեն անթույլատրելի սահմանները:

Որոշ վարորդներ կարծում են, որ ուղևորների հարմարության համար պետք է շարժվել ոչ բարձր արագությամբ և

դարպասով անցնելու համար անհրաժեշտ է ծախսել կես ժամ։ Դա մի այլ ծայրահեղություն է։ «Սովային ծփանքի», ավելի ճիշտ «ավտոմոբիլային ծփանքի» նմանվող երթևեկությունը նույնպես վատ հետևանք է ունենում։

«Բարեկիրթը»։ Եթե դուք մտադիր եք ավտոմեքենան կտրուկ արգելակել, ապա, հավանաբար, ուղևորներին շատ արագ և նախազգուշացնող տոնով կասեք. «Ճգուշացեք», «բռնեք», «բռնեք, արգելակում ենք» և այլն։ «Բարեկիրթը» առանց ուղևորների թույլտվության շի ծխի (ճշմարիտ է, հաճախ ուղևորները չեն հարգում վարորդներին, նրանց դնելով կառապանի տեղ), լուսամուտն այնպես շի բացի, որ քամին խփի ուղևորների ոտքերին և վզին։ Նա կօգնի մեծահասակ մարդկանց ավտոմեքենայից դուրս գալու, բեռը խցիկում այնպես տեղավորելու, որպեսզի դրանք շխանգարեն ուղևորներին։ «Բարեկիրթը» ավտոմեքենայի բեռնախցիկում միշտ պահպանում է իդեալական կարգուկանոն և մաքրություն, այնպես որ կարելի է հանգիստ այնտեղ դնել ցանկացած իրը, դրանցով շծանրաբեռնելով ուղեսրահը։

«Տաքսիստը»։ Այս անունը հասարակ է և բացասական։ Տաքսի ավտոմեքենաների վարորդների մեծամասնությունը «հարմարավետ» վարորդներ են, բայց հանդիպում են նաև «տաքսիստ» վարորդներ։ Վերջիններս աշքի են ընկնում իրենց բացարձակ անհոգի վերաբերմունքով դեպի ուղևորները։ Նըրանք «հարմարավետ» և «բարեկիրթ» շեն։ Խցիկում կեղտուտ է, փշում է բենզինի և յուղի հոտը։ Իրենք՝ վարորդները, նույնպես տհաճ տեսք ունեն, իսկ ավտոմեքենան վարում են շատ անփույթ ձևով (նկ. 52)։ Մի խաշմերուկում տեղից պոկվում է 2 վայրկյանի ընթացքում, մյուսում կանգնում է 7—10 վայրկյան, շնայած արդեն վառվում է կանաչ լուսը։ Այնուհետև պոկվում է տեղից և սլանում, վազանցելով առաջ անցած ավտոմեքենաներին։ Շատերը «տաքսիստների» հետ շեն սիրում երթևեկել։ Եվ դա ունի իր պատճառը։ Ում է հաճելի ցնցվել խցիկում ինչպես տիկնիկը և շնչել նավթամթերքների «բույրը», առավել ևս սեփական փողերի հաշվին։ Հաճախ նման վարորդների հետ երթևեկելը ավարտվում է ստիպված «Շտապ օգնության» ավտոմեքենա փոխադրվելով։



Ակ. 52. «Տաքսիստ»:



Ակ. 53. «Էքսկուրսավար»:



Ակ. 54. «Մեկնարանը»:

«Էքսկուրսավար»: Եթե վարորդը ավտոմեքենան վարելու ընթացքում ըսկըսում է պատմել, թե ինչ-որ տեղ, ինչ-որ ժամանակ եղել է մի սյուն, որը կանգնեցվել է Պուշկինի և Նեկրասովի ծընընդյան օրերի միջև եղած ժամանակամիջոցում, իսկ հաջորդ սյունի մոտ կերմոնտովը երթեք չի եղել, ապա դա տիպիկ «էքսկուրսավար» է (Ակ. 53): Լավ է, եթե նա հումորի զգացողություն ունի, իսկ ավելի լավ, եթե բնավորության այդ գիծը չի ազդում անվտանգ երթևեկությանը:

«Մեկնարանը»: Ավտոմեքենա վարող լավ վարորդը չենք կարծում, որ պետք է անընդհատ խոսի այն ամենի մասին, ինչ կատարվում է ճանապարհին, (Ակ. 54): «Մեկնարան» վարորդը ոչ մի երևույթ բաց չի թողնում:

Նա տեսնելով մի աղջրկա, կտրականապես հայտարարում է, որ գրլիարկը չի համապատասխանում շրջադիմութին, որ ճաղատը ինչպես պետք է սանրված լէ, ծերուկը չի համապատասխանում

պառավին և այլն։ Նա կարող է ցանկացած թեմայով խոսել և այդպիսի վարորդից շուտով մարդիկ հոգնում են։

ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱՔԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես վերաբերվել կարգը խանգարող վարորդներին, որոնց վարմունքը լի է մեծ տհաճություններով։ Վարորդի բարձրակարգությունն այն է, որ չնայած իր իրավացֆությանը, չի պնդում իրենը, «ճակատ առ ճակատի» չի հարվածում անիրավացի վարորդի ավտոմեքենային, այլ պարզապես զիշում է «սրբապիղծ» կամ սկսնակ վարորդին։ Բարձրակարգ վարորդն իր օրինակով միշտ համբերատար ձգտում է ցույց տալ վտանգավոր վիճակից դուրս գալու այս կամ այն ելքը։ «Արա այն, ինչ ես եմ կատարում։ Բարձրակարգ վարորդը չի գտնում, որ եթե ինքը խախտում չի կատարում, ապա ուրիշներն էլ են այդպես վարվում։ Այդ պատճառով նա միշտ պահպանում է առավելագույն հուսալիություն և մշտապես պատրաստ է ամեն տեսակի ակնկալների։

Մի շտապեք վարորդին մեղադրել մի ինչ-որ արարքով և անմիջապես նրան պիտակ կպցնել։ Ավտոմոբիլացին երթենկությունը այնքան բարդ է, իսկ երբեմն էլ նաև անմիջապես անհասկանալի, որ ակնհայտ կապեր փնտրելը բավականին դժվար է։ Երբեմն վարորդին սկսում են կշտամբել, որ նա արգելք է ստեղծում ետևից եկող ավտոմեքենաների հոսանքին։ Բայց ինչպես պարզվում է հետագայում, վարորդը փըրկել է նրանց անխուսափելի ճանապարհատրանսպորտային պատահարից։ Պարզապես նրան լավ հայտնի է, թե տվյալ ճանապարհին ինչ արագության դեպքում կարելի է անցնել նեղ տեղը, որպեսզի շգլորվել անդունդը կամ անսպասելի շընկնել հիվանդանոց։ Եվ այդ պատճառով, որոշելով, որ ետևից գալիս են «գետնավարել» սովորած, բայց դեռևս շվարժված վարորդներ, նա ժամանակավորապես կորցնում է իր առ անվթարայինի անունը։

Լինում է նաև այսպես։ Նորմալ վարորդները ուժիշների և նույնիսկ ամբողջ հոսանքի համար վերածվում են «աքցանորի», փրկիլով և իրենց, և ուրիշներին «ծայրահեղականներից», «առանցքայիններից» և նման այլ վարորդներից։ Մի

շտապեք նրանց վիրավորական անուն՝ դնել և կշտամբել։ Դիտեք շրջապատը, սովորեք մտածել և վճռել։ «Սեղմող» պիտակը չենք կպցնի այն վարորդին, որ ոչ բավականաշափքաղաքավարի, բայց ամբողջովին անվտանգ ձևով կսեղմի ամբողջ հոսանքին խանգարող «անվճռական» վարորդին։

Այժմ, երբ դուք գիտեք վարորդների մի շարք տիպիկ թերությունները, ձեզ համար հեշտ է նրանցից խուսափել, այլ վարորդների մեջ որոշել նրանց և ընտրել երթևեկության անվտանգ տակտիկա։

ԳԼՈՒԽԱ 7

ՎԱՐՈՐԴԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

Վարորդի բարձր ուշակավորման իմաստը։ Ի՞նչ է նշանակում ավտոմեքենա վարելու վարպետություն։ Ո՞ր վարորդն է համարվում վարպետ։ Նա, ով պատրաստված է և վստահութեն է վարում ավտոմեքենան ու անհրաժեշտության դեպքում առավելագույն շափով օգտագործում նրա տեխնիկական հնարավորությունները։ Ինչպես նաև անհրաժեշտ է հաշվի առնել ողևորներ փոխադրելու հարմարավետությունը։ Վարպետ է այն վարորդը, որ կարողանում է ճիշտ և արագ գնահատել ճանապարհատրանսպորտային իրադրությունը, կանխատեսել նրա հնարավոր փոփոխությունները և երբեք ընկնել բարդ իրադրության սեց, իսկ նրանցից խուսափելու անհնարինության դեպքում առավելագույն շափով լեցքաթափել վտանգավոր իրադրությունը։

Վարպետ դառնալու համար անհրաժեշտ է գիտենալ սեփական բուշը, հատկությունները և տիրապետել գիտելիքների, ձեռնահասության, հմտության, Բազմաթիվ ճանապարհատրանսպորտային պատահարներ կատարվում են, երբ վարորդը բարձր արագության դեպքում չի հասցնում ճիշտ և լրիվ գնահատել ճանապարհի բարդ իրադրությունը։

Իսկ եթե նույնիսկ հասցըրել է գնահատել, ապա չի կարողանում կարճ ժամանակում արգելակել, ավտոմեքենան խո-

չընդուտից մի կողմ ուղղել, այսինքն անվտանգ շրջանցել այն, շունենալով այդպիսի իրադրությունում վարվելածեի փորձ:

Վաղուց ապացուցված է, որ հենց մարդիկ, վարորդները, և ոչ թե ավտոմեքենաներն ու ճանապարհներն են ճանապարհատրանսպորտային պատահարների գլխավոր պատճառը: Ամեն ինչ կախված է կանխատեսման վարպետությունից և վարորդի ճիշտ հաշվարկից, ինչպես նաև ճանապարհային իրադրությունը՝ գիտենալուց: Այսպես, քաղաքային վարորդը բարեկարգ ավտոմոբիլային ճանապարհից անցնելով գյուղական ճանապարհ, անսովոր լինելու պատճառով կարող է կտրուկ լայնական թեքումներով սահուն հողե ճանապարհի շրջադարձում ավտոմեքենան շպահել և անսպասելի ընկնել խրամառուն, շնայած առջեռում խանգարող ոչինչ շի լինի: Ընդհակառակը, գյուղական վարորդը, գալով քաղաք, իրեն կորցնում է ավտոմեքենաների, հետիոտների, ճանապարհային նշանների և լուսացույցերի առատությունից:

Իսկ նրանք երկուսն էլ ընկնելով լեռնային նեղ ճանապարհ, հանդիպում են վտանգներով, հակադարձ լծորդումով կորությունների, ժապավենների, ձգված վերելքների, կտրուկ վայրէջքների, ճանապարհի անհարթություններով և նեղ տեղամասերով և այլ տեսակի իրենց համար անսովոր պայմանների:

Կարելի է ասել, որ ավտոմեքենայի անվտանդ վարումը գլխավորապես կախված է վարորդի մարզվածությունից, փորձից, և ճանապարհատրանսպորտային պատահարների հիմնական պատճառը՝ անսպասելիությունն է, ճանապարհային անսովոր իրադրության մեջ ընկնելը, որից վարորդը շի կարողանում դուրս պրծնել: Մենք զարմանում ենք տեսնելով, թե ինչպիսի մտությամբ են անցնում բարդ ուղեգիծը ավտոմոբիլային մրցարշավների ժամանակ: Բայց մի մոռացք, որ յուրաքանչյուր մրցարշավորդ նախօրոք ուսումնասիրում է ուզերթի բոլոր առանձնահատկությունները և կատարում է փորձնական անցումներ, իսկ երկար ավտորալիների ժամանակ վարորդի կողքին նստում է ճանապարհային հատուկ քարտ (բացատրագիր) ունեցող շտուրման:

Անվտանգ երթևեկության հիմքում ընկած են հատուկ մարզումները, հնարավոր վթարային իրադրությունների նախ-

նական ուսումնասիրումը և դրանցից դուրս գալու պայմանները։ Կարելի է ունենալ գերազանց ավտոմեքենա և ճանապարհ, բայց դա չի փոխատուցում մարդկանց անկարողությունը։ Առաջին անգամ դուրս գալով ավտոուժի, անփորձ վարորդը զարգացնում է մեծ արագություն, սկսում է վազանցել ուրիշներին, չկասկածելով, որ դրանում դարանակալված է արագ երթևեկության անհայտ վտանգները։ Դրանց թվին են պատկանում ռդինամիկական միջանցքներից լայնացումը, անտառից դուրս գալու կամ կամուրջով՝ անցնելու ժամանակ վտանգավոր, աէրոդինամիկ էֆեկտները, թաց ճանապարհի վրա դողերի հիդրոսահասավառման երևույթը և այլն։ Այսպես, իտալիայում Սոլնցա տանող ավտոմոբիլային ճանապարհի վրա երբեմն կատարվում են անսպասելի վթարներ, որոնք կապված են, օրինակ, թունելների և ուղեկամությների հաճախակի հերթափոխելու պատճառով առաջացող լուսային և աղմուկի «Հարվածների» հետ։

Այս դեպքում ճանապարհային պայմանների արտաքին հատկանիշների կտրուկ հերթափոխությունը հանգեցնում է վարորդի կուրացմանը և խլացմանը։

Ի՞նչ կերպում ճանապարհային պայմանների արտաքին հատկանիշների կտրուկ հերթափոխությունը հանգեցնում է վարորդի կուրացմանը և խլացմանը։ Ի՞նչպես և ավտոմեքենայի հուսալիությունը շատ կարևոր է, բայց վարել կարողանալը ավելի կարևոր է։ Այդ են վկայում և ճանապարհատրանսպորտային պատահարների վիճակագրությունը և լավագույն վարորդների անվթարային աշխատանքի փորձը, և նույնիսկ ավտոռալիների, ավտոմոբիլային մրցարշավների և արգելարշավների արդյունքները։ Օրինակ, անապատներում կամ լեռներում, ձյունածածկ ձմեռուղիներում և այլ ճանապարհակիմայական բարդ պայմաններում ավտոմեքենաների փորձարկման ժամանակ, հատկապես վարորդի փորձարկողների, վարպետությունը հաղթահարում է ճանապարհային բոլոր դժվարությունները և արգելքները։ Բայց վարորդի վարպետության աճը անվտանգ երթևեկության դասընթացի միայն առաջին աստիճանն է։ Նույնիսկ աս դառնալուց հետո էլ անհրաժեշտ է դարձյալ սովորել ընդհանուր հոսանքում երթևեկության ժամանակ այլ վարորդների հետ փոխըմբռունման գաղտնիքը։ Իսկ դա ավելի դժվար է և կարևոր։

Վարման վարպետության հասկացությունը անհրաժեշտ է ճշտել ոչ այնքան տակտիկայի, որքան բարձրագույն ստրատեգիայի իմաստով։ Կարևորը ավտոմեքենայի ձեռքով, մեխանիկական վարումից ավելի բարդ՝ մտային և նույն հաշվարկային վարման անցնելն է։ Օրինակ, քաղաքի փողոցներով երթևեկելիս խաչմերուկների միջև կարմիր ազդանշանով լուսացույցից առաջ ավտոմեքենայի արագ արգելակում կամ փոխանցումների գործուն փոխարկումը և թափընթացքի ժամանակ գազ տալը այնքան կարևոր չէ, որքան ազդանշանների հերթափոխումը նախօրոք կուահել և առանց ավելորդ արգելակման խաչմերուկի կանաչ լույսին մոտենալ կարողանալը։

Այդ չէ արդյո՞ք փորձառու վարորդների, օրինակ ավտոբուսների և ծանր ավտոգնացքների վարորդների անվթար աշխատանքի երկարաժամկետ կանխատեսության (հարյուրավոր մետրեր առաջ և ժամանակի տասնյակ վայրկյաններ) գաղտնիքը։

Հետեւելով նրանց աշխատանքին, տեսնում ենք, թե նրանք որքան քիչ են կտրուկ արգելակումներ, թափավագքեր և ընդհանրապես ավելորդ մանր շարժումներ կատարում։ Իսկ ահա տաքսի-ավտոմեքենաների և ոչ մեծ բեռնատարություն ունեցող բեռնատար ավտոմեքենաների վարորդների համար բնութագրական է հաճախակի կրկնվող ղեկային մանկրներով և ընթացքի ժամանակ ցնցումներով անհավասարաշափ երթեւեկության ոճը։

Դա ընդհանրապես ավելի շատ յուրահատուկ է երիտասարդ վարորդներին։

Հսկյալ դնելով իրենց ռեակտիվայի արագության (իհարկենակ ձեռքերի և ոտքերի ճարպկության) և մարդատար ավտոմեքենայի փոքր արգելակման ճանապարհի վրա, սրաշ վարորդներ կարճ ուղեմասերում զարգացնում են շափազանց մեծ արագություն և ստիպված են մշտապես հերթական լուսացույցի մոտ «խոնարհվելու»։ Զե՞ որ գլխավոր փողոցներում «կանաչ ալիքով» ազդանշանների հերթափոխման ցիկլը հաշված է ոչ թե առանձին քյալագյող-վարորդների, այլ հասանքի 50—60 կմ/ժամ միջին արագության համար։ Եվ ահա վարորդ-քյալագյողը հաջողությամբ սլանալով մեկ-երկու խաչմերուկ, այնուհետև ընկնում է ազդանշանների ալիքի

Հակափուզում, դեղին լույս տեսնելով, կտրուկ արգելակելով կանգ առնում լուսացույցի կարմիր ազդանշանի առաջ:

Երթևեկության ամենազարմանալի տարօրինակություններից մեկը, որի մասին գրվում է հաճախ հանրամատչելի ամսագրերում, այն է, որ երթևեկության երկու ձեռի՝ նյարդային ու արագ, մեղմ ու շափակոր, փորձնական համեմատության դեպքում առաջնորդող վարորդ-ասը իրենից ետ մնացողին հաղթում է միջին հաշվով ժամանակի ընդամենը 3—5 %-ի շափով, ի հաշիվ իր գերլարվածության, վառելիքի գերածախսի, ավտոմեքենայի մեծ մաշվածության և մեծ ոիսկի:

Տեխնիկական այս համեմատության մեջ թաքնված է նաև սոցիալական կարևոր մի միտք: ԶԵ՞ որ հենց փողոցային երթևեկության անհավասարաշափությունը ծնում է փողոցային ընդհանուր ստրես, հավետ ջղային շտապողականություն, խորհրդանշելով XX դարի տեմպերը: Իսկ անհավասարաշափ, անկանոն ձեռի երթևեկությունը հանգեցնում է շարժման խաթարման, աղմուկի, մեծ շափերի գազերի և ճանապարհատրանսպորտային պատահարների առաջացմանը: Այն կարծես թե իր հետեւից ձգում է մոտորացման բացասական հետեվանքների փեշատուտը, որոնք հատկապես արտահայտվում են ամբողջ հասարակության համար: Այդ պատճ սոռվ էլ անվետանգ երթևեկության ասպարեզում պովետական նոր դպրոցի համար բնութագրական է հետաքրքրությունը դեպի մարդը, լարված ուշադրությունը մարդու հոգեբանության և նույնիսկ երթևեկության բարձրագույն փիլիսոփայության նկատմամբ, նրա ազդեցությունը ամբողջ ապրելակերպի վրա:

Ասում են, որ Ամերիկայում ավտոմեքենայով բնորոշում են նրա տիրոջը և ամերիկացու ամբողջ բնավորությունը հայտնի է դառնում նրա կողմից ավտոմեքենան վարելու ոճում, հատկապես ավտոմոբիլային ճանապարհների վլավագանցի ժամանակ: Չնայած մենք հեռու ենք տեխնիկայի նման ֆետիշացումից, բայց չի կարելի ընդունել, որ ավտոմեքենայի վարման ընթացքում կտրուկ ձեռվ արտահայտվում է մարդու բնավորության բազմաթիվ գծերը և ձեւավորվում է նրա վարվելաձեռի հմտությունը:

Կանոնների խախտում: Եթե ուշադիր հետեւնք քագաքամերձ ճանապարհների վրա վարորդների գործողություններին,

ապա հեշտությամբ կհամոզվենք, որ մասնավորապես՝ 100 վարորդից 95-ը ավտոմեքենան վարելիս ղեկանիվը բռնում են երկու ձեռքով և միայն փոքրամասնությունն է թույլ տալիս իրեն վարման այլ մաներա՝ մեկ ձեռքով։ Այդպիսի վարորդներին սովորաբար համարում են քյալագյողներ և պըճնամոլներ, քանի որ նորմալ մարդը իրեն թույլ չի տա հրաժարվել ղեռսս ավտոմոբիլային դպրոցում ստացած հմտություններից։ Սակայն թույլ տվեք ասել մի քանի ըմբռստ խոսքեր մերձքաղաքային ճանապարհներով ազատ պայմաններում 80 կմ/ժամ արագությամբ երթևեկելիս վարման մեթոդների մասին։

Այդպիսի պայմաններում ժամանակակից ավտոմեքենաները կարելի է վարել մեկ ձեռքով։ Մենք նույնիսկ կասեինք, որ ոչ թե կարելի է, այլ անհրաժեշտ է, քանի որ դա վարորդին թույլ է տալիս ավելի նրբորեն զգալ ավտոմեքենայի աշխատանքը և բավականին շուտ արձագանքել նշված երթուղուց սկսվող շեղումը, քան երկու ձեռքով վարելու դեպքում։

Փորձենք բացատրել, թե ո՞րն է դրա էությունը։ Դեկի կառավարման համար երբեմն երկու ձեռքը շատ է։ Կինում են վարման այնպիսի ռեժիմներ, երբ ճանապարհով երթևեկելիս անհրաժեշտ է ոչ թե փոխել ավտոմեքենայի դիրքը, այլ միայն թեթևակի ճշտումով պահպանել առաջադրված ուղղությունը։ Ի՞նչ է կատարվում ավտոմեքենայի հետ ուղիղ ճանապարհով շարժվելիս։ Ճանապարհի ընդլայնական թեքության պատճառով միշտ նրան տանում է մի փոքր դեպի աջ։ Այդ պատճառով անհրաժեշտ է կարծես թե ավտոմեքենան մի փոքր տանել դեպի ձախ։ Դա անհամեմատ հեշտ և հարմար է կատարել միայն ձախ ձեռքով։ Նրանով պետք է լինում կատարել դեպի ներքև թեթևակի շարժում, որն անհամեմատ բնական է, քան աջ ձեռքով ղեկանիվի շրջանակը վերև հրելը։ Այս դեպքում պահանջվող ուժը շատ փոքր է և մեկ ձեռքը հեշտությամբ հաղթահարում է այն։

Երբ այդպիսի պայմաններում վարում են երկու ձեռքով, ապա այդ փոքրիկ ուժը հավասարաշափ բաժանվելով նրանց միջև, հաճախ շեղման նկատմամբ դառնում է մկանային զգացողության սթիմանից ցածր։ Եվ վարորդը սկսում է շարժուած ճշտել միայն տեսողության օգնությամբ։ Դա հանգեց-

նում է երկու թերության։ Առաջինը՝ ծանրաբեռնում է ընկալման տեսողական կանալը։ Երկրորդ՝ վարորդը սկզբացումով զգալ ավտոմեքենայի շեղումը։ Բացի դա, այդպիսի դեպքերում ճշտման մեթոդներն այնքան նուրբ են և պահանջում են ուսկերչական ճշտություն, որ երկու ձեռքերը պարզապես խանգարում են միմյանց։

Դուք ղեկանիվը ձգում եք մերթ մեկ ձեռքով, մերթ հրամայուս ձեռքով։ Դրանք բոլորովին տարբեր շարժումներ են և լավ չեն համաձայնեցվում միմյանց հետ։ Ծանոթ դեպքում նրանց միացյալ գործողությունը այդպիսի պայմաններում շարժման ուղղման ճշտությանը մեկ ձեռքով վարելու համեմատությամբ իշեցնում է մոտավորապես 1.5 անգամ։ Հետեւանքը լինում է այն, որ ղեկավարման կանալի (վարորդ-ավտոմեքենա համակարգի) թույլատրման հնարավորությունը փոքրանում է, ինքնաղեկավարումը ավելի է դժվարանում վարորդի համար, իսկ երթևեկությունը դառնում է վտանգավոր։

Դժբախտաբար, վարման այդ մեթոդը դեռևս չի գտել իր պաշտոնական ճանաշումը։ Այն չեն սովորեցնում ավտոդրարոցներում և դրա մասին չեն գրում դասագրքերում։ Այնուամենայնիվ փորձեք վարժվել ավտոմեքենան մի ձեռքով վարել (իհարկե, անվտանգ պայմաններում)։ Մենք կարծում ենք, որ այդ մեթոդը ձեզ դուք կգա։ Սկզբում կարելի է ղեկանիվը պտտել, օգտագործելով ամբողջ ձեռքի շարժումը։ Երբ դուք ամբողջովին տիրապետեք այդ հնարքին, անցեք ավելի նուրբ ձևի։ Ձեռքը դրեք խցիկի դոան արմնկակալին և ղեկանիվի դիրքը ճշտեք միայն դաստակի շարժումով։ Սակայն խնդրում ենք այս մեթոդը չհասցնել մինչև անմտության աստիճանի, ավտոմեքենան ցանկացած պայմաններում վարելով «Տեկ ձեռքով»։

ԻՆՉԻՑ Է ԲԱՂԿԱՅԱՇ ՎԱՐՊԵՏԱՒԹՅՈՒՆԸ

Գիտելիքներ՝ ձեր կողմից յուրաժամկած գիտելիքների ամբողջությունն է, որն անհրաժեշտ է ավտոմեքենան վարելու համար։ Դուք պետք է ձեր վարպետությունը բարձրացնելու համար կարողանաք դիտել (տեսնել), լսել և զգալ։ Սակայն ձեր վարպետությունը շատ բանով կախված կլինի գործնա-

կան երթևեկության ժամանակ յուրացրած հմտություններից:

Զեռնահասությանը հատուկ գիտելիքներից և հմտություններից գործնականում նպատակաւացորեն օգտվելու ձեր ունակությունն է:

Հմտությունը գործողություն է, որը վարժությունների ընթացքում հասցվում է մինչև որոշ չափերի կատարելագործման: Հմտությունների ֆիզիոլոգիական հիմքը գլխուղեղի կիսագնդերում պայմանական ռեֆլեքսների համակարգի ձեղավորումն է, որոնք առաջանում են որոշակի կարգով գործողությունները բազմապատիկ անգամ կրկնելու հետևանքով: Ակադեմիկոս Ի. Պ. Պավլովը այդպիսի համակարգն անվանել է դինամիկ ստերեոտիպ: Դրա համար դուք որպես վարորդ պետք է ձեր մոտ առանձնացնեք, զարգացնեք և վարժեցնեք եքեք խմբի հմտություն, սենսորային, մտավոր և շարժիչային: Սենսորակին հմտության օրինակ է հեռավորության, ավտոմեքենայի շարժման արագության ընկալումը: Մտավոր հմտությունները ընկած են ճանապարհային իրադրության գնահատման և համապատասխան որոշում ընդունելու հիմքում: Շարժիչ հմտությունները, դրանք ավտոմեքենայի վարման համար անհրաժեշտ շարժումների ունակություններն են:

Նոր հմտությունները ձևավորվում են նախկինում արդեն մշակված հին հմտությունների հիման վրա, ընդ որում հին հմտությունները կարող են հեշտացնել նորերի ձևավորման ընթացքը կամ արգելակել դրանք: Նախկինում յուրացված հմտությունների այդպիսի ազդեցությունը նորերի վրա կոշվում է փոխադրում: Կախված ժխտման ազդեցությունից փոխադրումը կարող է լինել դրական կամ բացասական: Հըմտության դրական փոխադրումը բացատրվում է մեկ կամ միքանի հմտություններին հատուկ նման էլեմենտների առկայությամբ: Հմտությունների բացասական փոխադրումը դա հմտությունները միմյանց արգելակելու պրոցես է: Հմտության բացասական փոխադրման դեմ պայքարը այն է, որ նոր հմտությունը լավ ամրապնդվի, հասցվի ավտոմատացման այնպիսի աստիճանի, որ իր գոյության համար չպահանջի գիտակցության հատուկ լարում:

Խնչպե՞ս ձեռք բերել և փոխել հմտությունները: Ակդրում արգեն ասացինք, որ այս գիրքը պիտանի է և սկսնակ վա-

բորդների և աս-վարորդների համար։ Այժմ սկսենք ավտոմեքենան գնելու, միևնույն ժամանակ, վարորդական՝ իրավունք ստանալու պահից։ Բայց չէ՞ որ ավտոդպրոցում ստացած վարման ստանդարտ հմտություններից բացի դուք ուզում եք տիրապետել նաև երթևեկության բարձրագույն դպրոցի հմտություններին, դառնալ աս-վարորդ։

Քանի որ դուք թեորետիկ գիտելիքներ արդեն ունեք, ապա անհրաժեշտ է կատարելագործել ձեր շարժումային հմտությունները, որոնցում առանձնանում է երեք փուզ։

Առաջին փուզը Շարժման առանձին տարրերի ուսումնասիրումը և առանձին մասնակի շարժումների համախմբումը մի ամբողջության մեջ՝ սովորեցնում է ավտոդպրոցը։ Այդընթացքում ձեր մոտ կան շատ ավելորդ աննպատակ շարժումներ։ Անշափի լարվածության պատճառով դուք ձեռքերով ամուր սեղմում եք ղեկանիվը, հաճախ դրանցով կատարում կարճատև պտտական շարժումներ, սխալ և ինչ-որ զղաձգորեն փոխարկում ղեկավարման լծակները, արգելակում շատ կտրուկ։ Բոլոր գործողությունները կատարում եք տեսողության հսկողության տակ։ Սկզբում կարելի է նայել նաև ունակներին։

Որպեսզի կրծատել ոչ ճիշտ և ավելորդ շարժումների քանակը, անմիջապես սովորեք ղեկանիվը բռնել անպայման երկու ձեռքով և այնպես, որպեսզի շկառչեք նրանից, անեք որքան հնարավոր է մեծ պտույտ, բռնելով ղեկանիվի բոլորակից, օգտագործեք ձեռքերի, որպես գործադիր լծակների, առավելագույն երկարությունը։ Ղեկանիվը բռնեք թեթև, առանց մկանային լարվածության, բայց պատրաստ եղեք ցանկացած վայրկյանին, կախված ճանապարհային իրադրության փոփոխությունից, այն ամուր սեղմել։ Քանի որ ավտոմեքենան ինքը ձգտում է պահպանել ուղղագիծ շարժման ուղղությունը, ապա ղեկանիվն անընդհատ մի պտտեք և դրանով մի խախտեք ընթացքի սահունությունը։ Այդ շարժումների կատարելագործման հետ միաժամանակ սկսեք սովորել ղեկանիվը պահել մեկ ձեռքով (ճախ), ազատելով երկրորդը (աջը) փոխանցումների փոխարկման համար։

Այլ տիպի ավտոմեքենայի վրա աշխատանքի անցնելիս անհրաժեշտ է հաշվի առնել նրա խցիկի և ղեկավարման

մարմինների առանձնահատկությունը։ Այսպես, օրինակ, ձեռքի արգելակի լծակը, լույսի և ապակեմաքրիչի միացման կոճակները կարող են գտնվել դեկային կոլոնկայից աջ կամ ձախ, վարորդի համար անսովոր կարող է լինել փոխանցումների փոխարկման լծակի այլ դասավորությունը և հմտության այսպիսի բացասական փոխադրումը աշխատանքի առաջին օրերին կարող է կտրուկ անդրադառնալ ավտոմեքենայի վարման որակի վրա։

Որքա՞ն ժամանակ է անհրաժեշտ ավտոմեքենային սովորելու համար։ Փորձը վկայում է, որ այդ ժամանակամիջոցը տատանվում է 2-ից մինչև 5 րոպեի սահմաններում։ Իսկ սովորաբար ամեն օր աշխատող վարորդը տեղից շարժվելուց հետո մինչև համաշափ երթևեկության սկիզբը հարմարվում է ավտոմեքենային 5—15 վայրկյանի ընթացքում։ Մի քանի ամիս ընդմիջումից հետո վարորդն ավտոմեքենային ընտելանում է 0,5—1 ժամվա ընթացքում։ Համանման մակնիշի ուրիշ ավտոմեքենա փոխադրվելիս ընտելանալու համար անհրաժեշտ է 30 վրկ-ից մինչև 2 րոպե։ Նույն մակնիշի նոր ավտոմեքենա վարելու դեպքում ընտելանալու համար անհրաժեշտ է 10 վրկ, իսկ նոր մակնիշի դեպքում մինչև 3 ժամ։

Բնականաբար մենք նկատի ունենք, որ ճանապարհային պայմանները բոլոր դեպքերում նույնն են։

Երկրորդ փուլ։ Վարժությունները կրկնելու հետ դուգընթաց ավելորդ և աննպատակային շարժումների քանակը կրծատվում է, կատարվում է դինամիկ ստերեոտիպի աստիճանական ձեավորում, որը կդառնա ձեր մասնագիտական «եսը» ամբողջ կյանքում։

Շարժումները դառնում են ավելի ճշգրիտ, թուլանում է գործողությունների կատարման անհրաժեշտ տեսողական հրակողությունը։ Դուք պետք է առանց նայելու գտնեք դեկավարման մարմինները։

Այդ ընթացքում սովորեք ավտոմեքենան տեղից շարժել սահուն ձևով, որը գլխավորապես կախված է երկու ոտքերի ճիշտ փոխգործողությունից։ Դա նշանակում է սովորել կցարդման մեխանիզմի ոտնակը արագ բաց թողնել և երբ կցորդման մեխանիզմը սկսում է միանալ, սահուն ձևով

ծացնել կարբյուրատորում դրոսելի բացվածքը, իսկ այնուհետև միացնելով կցորդական մեխանիզմը, շարժվել տեղից՝ Աշխատեք հիշել և յուրացնել այն պահը, երբ միանում է կցորդման մեխանիզմը, այսինքն, երբ շարժիչի ծնկաձև լիսեռի պտուտաթվերը սկսում են ընկնել։ Մարդատար ավտոմեքենայով միշտ պետք է տեղից շարժվել ամենացածր (առաջին) փոխանցումով, իսկ առանց բեռի դեպքում երկրորդ փոխանցումով։ Դրա հետ միաժամանակ աշխատեք լսելով որոշել շարժիչի ձայնի փոփոխությունը, նրա աշխատանքի ժամանակ և դրա հետ կապված նաև զարգացվող հզորությունը՝ ըստ լիսեռի համապատասխան փոխանցման դեպքում որոշել շարժման լավագույն արագությունը։

Հենց սկզբից անհրաժեշտ է սովորել միաժամանակ երեք ոտնակով վարել։ Մեկը ձախ ոտքի, իսկ մյուս երկուսը աջ ոտքի օգնությամբ։ Ուսուցման սկզբում, մոտորային հիշողության օգնությամբ, մշակել ղեկավարման լժակներ փընտրելու հմտություն և գործողությունների անհրաժեշտ հերթականություն։ Դա անհրաժեշտ է անել առանց շտապելու։ Հրահանգ, գիրք կարդալուց և ուսուցչին լսելուց հետո պետք է մենակ փորձեր կատարել լժակների հետ։ Մտովի կստեղծեք շարժման ուժիմներ և շդիպշելով լժակներին մինչև վերջնական որոշումը, կփոխարկեք դրանք և միայն որոշումից հետո արգելակված ավտոմեքենայում կկատարեք անհրաժեշտ մանիպուլյացիաներ։

Հմտություններին յուրահատուկ է խարուսիկությունը։ Վարժությունները, եթե դադարեցվում են, ապա հմտությունները վերանում են (ասլավտոմատացվում)։ Հմտությունների վերացումը նշանակում է, որ կորել են մարդու կողմից դրանց իրականացման բոլոր հնարավորությունները։

Երրորդ փուլը երրորդ փուլում դինամիկ ստերեոտիպը արդեն ձևավորված է։ Գործողությունների մեծամասնությունը կատարվում է ավտոմատ ձևով, այսինքն իրականացվում է միայն հսկման ֆունկցիան։ Այս փուլում հմտությունների տարբերակների մշակման նպատակով կատարվում է երթևեկության պայմանների որոշակի բարդացում, տրանսպորտային միջոցների լարված երթևեկություն, վատ տեսանելիություն, տարբեր կլիմայական պայմաններ։

Հմտությունները աս-վարորդների շրջանում փոփոխության չեն ենթարկվում։ Փոխվում է միայն այս կամ այն գործողության կատարման ժամանակամիջոցը։ Այլ է այն վարորդի մոտ, որի հմտությունները չեն ամրապնդվել (չեն հաստատվել)։ Այդպիսի հմտություններն անհետանում են շատ արագ։ Այդ պատճառով ցանկալի է, որ դուք հմտություններն ամրապնդեք տեսականորեն, մեթոդիկ ձևով (ձեզ համար սովորական շարժումների օգնությամբ) և պրակտիկորեն, մինչև լրիվ ավտոմատացումը։

Հմտությունների թուզացման վրա ամենամեծ առդեցությունն ունենում է ժամանակը։ Մարզումները ընդհատելուց հետո գործողությունները պահանջվող տևողության համեմատությամբ կատարվում են մերթ արագ, մերթ դանդաղ։ Ամենից առաջ ամենակտրուկ ձևով կորչում են բարդ և վատ ամրապնդված հմտությունները։ Փորձված վարորդները միշտ հստակ և համարյա ավտոմատ ձևով կատարում են ճանապարհային նշանների պահանջները։ Օրինակ, թունել մտնելիս և այնտեղից դուրս գալիս ձեռքը ավտոմատ ուղղվում է դեպի լույսի անջատիչը։

Վարել՝ նշանակում է կանխատեսել։ Մինչև ավտոմեքենաստանալը փողոցներում և ճանապարհներում հետևելով երթևեկությանը, դուք պետք է դառնաք «խիստ դատավոր»՝ կայացնելով ձեր, դեռևս սուրյեկտիվ դատավճիռը վարորդների ճիշտ և սխալ գործողությունների մասին, ինչպես նաև նախօրոք գուշակեք, թե ով ինչ մաներ կկատարի 1, 2, 5, 10 և ավելի վայրկյան հետո։ Սա շատ հետաքրքիր և օգտակար խաղ է։

Ուսուցման հետեւյալ փուլում կարեոր է ավտոմեքենայի դիրքի և շարժման կողմնորոշիչների մասին տեսողական պատկերացումներ ձեավորել, առանց դրանց դեկավարումից ուշադրությունը շեղելու։ Հմտությունների հետագա կատարելագործումը պետք է ուղղվի ընկալման ճշտության արագությանը, ավտոմեքենա վարելու դեպքում գործողությունների ճշտության մեծացմանը, ինչպես նաև հայացքը մտադրված մաներներին և ճանապարհային իրադրություններին համապատասխանաբար փոխադրելուն։

Ինքնատիրապետում: Առանց պատճառի չկա հետևանք՝ Սա վերաբերում է նաև ավտոմոբիլային ճանապարհների վրա տեղի ունեցող դեպքերին։ Ցանկացած, նույնիսկ ամենափոքր ճանապարհատրանսպորտային աղետը պատահաբար չի կարող տեղի ունենալ։ Օրինակ, դուք գնում եք մառախուղի միջով, ոլորանի վրա շեք նկատում ձեր ճանապարհը գլխավոր ճանապարհի հետ հատումը նախազգուշացնող ճանապարհային նշանը և ստիպված կտրուկ արգելակում եք։ Եվ այդ պատճառով ընկնում եք ճանապարհատրանսպորտային պատահարի մեջ։ Բայց կան դեպքեր, երբ պատահարից կարելի է խուսափել, սակայն վարորդն արագընթացիկ պրոցեսից հիպնոսացված, չի կարողանում ճիշտ և անվտանգ մաներ ընտրել։ Որովհետև վախենում է և այս դեպքում պարզվում է, որ նրա հոգեբանական և ֆիզիոլոգիական գործունեությունը կաթվածի է ենթարկված։

Օրինակ, ճանապարհատրանսպորտային պատահարի ոչ մի նշույլ չի եղել, բայց ավտոմեքենան կտրուկ գնացել է դեպի աջ և շուրջ եկել։ Ինչի՞ց է դա տեղի ունեցել։ Ավտոմեքենան շուրջ տված վարորդը մոռացել է վարման հիմնական կանոններից մեկը։ Թեկուզ մի քանի րոպեն մեկ անգամ նայել ետեսի տեսքի հայելու մեջ։ Այդ նա չի կատարել և նայել է միայն առաջ։ Այդ ժամանակ ետեից հայտնվել է միջքաղաքային մեծ ավտոբուս։ Վարորդը տեսնելով, որ առջեից գնացող ավտոմեքենան չի արձագանքում լուսային ազդանշաններին, դուրս է եկել վազանցի։ Իսկ վազանցվող ավտոմեքենայի վարորդը շատ է վախեցել, երբ իրենից ձախ դղրդյունով սլացել է հսկայական կարմիր «հկարուսը»։ Տարածությունը բավականին մեծ է եղել և ոչ ոք ոչ մեկի ճանապարհը չի հատել, բայց վարորդը վախենալով, կորցրել է հսկողությունը իր գործողությունների նկատմամբ և ավտոմեքենան շուրջ է եկել։

Այս դեպքում ճանապարհատրանսպորտային պատահարի անմիջական պատճառը վարորդի վախն է, իսկ սարսափը վատ խորհրդատու է։ Հարց է ծագում, ինչո՞ւ վարորդը ժամանակին չի նկատում շարժական և անշարժ արգելքները,

ինչպես նաև այն արգելքները, որոնք հանկարծակի են հայտնը վուամ։ Պատասխանը հասարակ է։ Վարորդն իրեն հաշիվ շի տակիս այն մասին, թե ինչ է կատարվում նրա առջևի ազդեցության գոտու այն տարածովունում (մետրերով), որը թվապես հավասար է արագության եռապատիկ արժեքին և ետևի ճանապարհի վրա, որով ավտոմեքենան անցնում է 10—20 վայրկյանում։ Իսկ ճանապարհին, չհետեւելու պատճառով, վազանցող ավտոմեքենայի հանկարծակի հայտնվելիս լավագույն դեպքում՝ միայն վախի զգացում կառաջանա առանց հետևանքների, իսկ վատագույն դեպքում՝ լինում են նաև տհաճ հետեւանքներ։

Հաճախ վարորդը հասցնում է նույնիսկ կատարվածի մասին գիտակցել, բայց մաների նախապատրաստման և այդ մասին երթևեկության այլ մասնակիցներին հայտնելու համար ժամանակը չի բավականացնում, որը նրանց հաճախ գցում է վթարային իրադրության մեջ։ Վարորդին տրվող պատվիրաններից է։ անհրաժեշտ է մարզվել այնպես, որպեսզի ցանկացած ճանապարհատրանսպորտային իրադրության մեջ կարողանալ լուսնել այն բոլորը, ինչ անհրաժեշտ է։ Դա կօգնի ձեզ «ճանապարհային երթևեկության կանոնների» խստորեն պահպանման դեպքում, ապահովել ավտոմեքենայի ցանկացած մաները (ըստ ընթացքի և տեղի)։

Եղել են դեպքեր, երբ վարորդները վաղաժամ խուճապի են մատնվել, կորցրել են ինքնատիրապետումը, իսկ երբեմն էլ ճանապարհատրանսպորտային պատահարի՝ տեղում ցընցակաթվածքից մահացել են։

Ահա ևս ուշադրության արժանի մեկ օրինակ։ Ավտոմեքենան 30/40 կմ ծամ արագությամբ շարժվել է քաղաքի դատարկ փողոցով և հանկարծ բոլորովին մոտիկ դարպասից դուրս են վազել երկու աղջիկ։ Մեկը մի կերպ հասցրել է արագ վազել ավտոմեքենայի առջևով, իսկ երկրորդը իներցիայով ընկել է նրա տակ։ Տվյալ դեպքում դեկային կառավարումը չի օգնել, որովհետև ավտոմեքենան մի կողմ թեքելը անօգուտ է դարձել, իսկ արգելակներն անզոր են, քանի որ դրանք ավտոմեքենան չեն կարող ակնթարթորեն կանգնեցնել։

Մի վայրկյան հետո աղջիկներից մեկը մի կողմ է թռել և ընկել, իսկ երկրորդը վախից լացելով նետվել է այն դար-

պասների կողմը, որտեղից քիչ առաջ դուրս էր վազել։ Վարորդն ակնթարթորեն դուրս է թռել ավտոմեքենայից, նետվել դեպի պառկած աղջիկը և նրան առել ձեռքերի վրա։ Նա կյանքի նշաններ ցույց շի տվել, վարորդի դեմքը սպիտակել է։ Նա սկսել է դանդաղ նստել։ Սարսափելի միտքն այն մասին, որ ինքը մեղավոր է աղջկա մահվան համար, առաջացրել է ժանր ցնցակաթվածք, որը կատարել է իր ճակատագրական գործը։ Վարորդը մահացել է սրտի պայթյունից։

Վարորդի հետ ողբերգական վերջաբան կարող էր շկատարվել, եթե նա չկորցներ ինքնատիրապետումը։ Չէ որ աղջիկը կենդանի էր և նույնիսկ չէր ստացել ժանր վնասվածքներ։ Պարզապես հարվածից կորցրել էր գիտակցությունը։ Այս անիմաստ դեպքը ցույց է տալիս, թե ինչքան կարեոր է ինքնատիրապետումը, խելացի ղեկավարելը ոչ միայն ավտոմեքենան, այլև իր հույզերը։

Կարողացեք տիրապետել ձեզ։ Վարորդները, ինչպես յուրաքանչյուր մարդ, գտնվում են հույզերի իշխանության տակ և ընդունակ են ուրախանալու, տիրելու, հուզվելու և խանդավառվելու, եվ այդ բոլորը կատարվում է երթևեկության ժամանակ։

Եթեմն հույզերը ակտիվացնում են հոգեկան ուժերը և գրանով կրկնապատկվում են մարդու ֆիզիկական հնարավորությունները, այլ դեպքում ունենում են ճիշտ հակառակ ազգեցություն, ճնշում են կամքը և հոգեկան վիճակը, մարդուն դարձնում անվճռական և անօգնական։

Վարորդի գործունեությունը կապված է նյարդային մեծ լարվածության հետ և պահանջում է համտուկ կամք և սեփական զգացումների կարգավորման կարողություն։ Վտանգի նկատմամբ հուզական ռեակցիաները տարբեր մարդկանց մոտ հանդես են գալիս տարբեր ձևով, մի մասին հանում է հավասարակշռությունից, առաջացնում իսկական հուզական ցնցակաթվածք, իշեցնում է մյուսների գործուներության ընդհանուր արդյունավետությունը, չնայած վարքագիծը հիմնականում խելամիտ է։ Վերջապես երրորդները լրիվ պահպանում են ինքնատիրապետումը, ցուցաբերելով հնարամտություն և խելամտություն։ Այդպիսի մարդկանց անվանում են սուր զգացումների սիրահարներ։ Վտանգի նկատմամբ նրանց

ուեակցիան տնվանում են այսպես կոչված «մարտական գըր-գըռվածություն»։ Այն ի վիճակի է ակտիվացնել մարդու հոգեկան գործունեությունը, որը հաղթահարելով դժվարությունն ու վախը, ճաշակում է բավարարման առանձնահատուկ զգացում։

Բայց այդ ուեակցիաները բռլոր մարդկանցից պահանջում են էներգիայի մեծ ծախս, որը, դժբախտաբար, լրիվ չի վերականգնվում։

Ի՞նչ է կատարվում վարորդի օրգանիզմի հետ տագնապալի իրադրության ժամանակ։ Արտաքին նշանները հետևյալն են. քրտնում են մինչև այդ շոր ձեռնափերը, ծնկներում (դրանից ներքեւ) և ձեռքերում աննշան դող է առաջանում, որը բացատրվում է մկանային առանձին խմբերի լարվածության անհավասարաշափությամբ, թեևը նախաբազուկի շրջանում թուզանում են և դրանց ընկնելուց պահում է միայն դեկանիվը. դա կարող է նույնպես դառնալ ճանապարհատրանսպորտային պատահարի պատճառ, մարդը ներշնչում է բերանով և չի կարողանում հավասարաշափ շնչել, առաջանում է սրտի արագացված և ուժեղացված խփոց, որի գործունեությունը կապված է հուզմունքի հետ (սրտի խփոցի ոիթմը հուզզի զգայուն ինդիկատոր է, դեռևս հնում արտիհաճախականությամբ և խփոցի բնույթով գնահատել են մարդու հուզական վիճակը), ստքերը կարծես դառնում են բամբակե։ Այդպիսի դեպքերից հետո միայն ուզում ես ավտոմեքենան հասցնել մինչև ավտոտնակ և երբեք շնոտել դեկին։

Իսկ ինչպես սովորել այդպիսի դեպքերում տիրապետել իրեն։ Ի՞նչ անել նման դեպքերում։ Եթե ձեր մոտ այդ ժամանակ տեղի է ունեցել ներշնչում, դադարեցնել այն։

Բռլոր դեպքերում անհքաժեշտ է կատարել լրիվ արտաշնչում և շնչառությունը մի քիչ այդպես պահել։ Դա անհրաժեշտ է ճիշտ որոշում ընդունելու համար։

ՄԱՐԶՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՎՐԱ

Մարզման նշանակությունը: Վարորդները պետք է մարզվեն ոչ միայն հատուկ վայրերում, այլև ցանկացած ավտոմոբիլային ճանապարհի վրա երթևեկելիս: Եվ չնայած յուրաքանչյուր անգամ մարզվելը մեծ աշխատանք է պահանջում, բայց հայտնի ասացվածքը բառափոխելով, կարելի է ասել. «Դժվար է ուսման մեջ, հեշտ և անվտանգ է ճանապարհին»: Մարզումը անհրաժեշտ է ուսման ընթացքում մշակված հմտությունների անհրաժեշտ մակարդակի պահպանման և դրանց հետագա կատարելագործման համար:

Մարզվելը դա սիստեմատիկ վարժությունների ճանապարհով օրգանիզմի ֆունկցիոնալ կատարելագործման պրոցես է:

Կարևոր է նշել,որ հմտությունների կորուստը վարորդը չի նկատում, իսկ կորցնելով անհրաժեշտ հմտությունը, նաքարդ ճանապարհային իրադրությունում ավտոմեքենան վարելիս ի վիճակի չէ կատարել անհրաժեշտ գործողություններ, որի հետևանքով դառնում է ճանապարհատրանսպորտային պատահարի մասնակից: Պատահական չէ, որ, օրինակ, հաճախ վթարի մեջ են ընկնում այն վարորդները, որոնց ավտոմեքենա վարելու մշակված հմտությունների մակարդակը անկանոն մարզվելու պատճառով նվազել է:

Բնական է, որ պրոֆեսիոնալ վարորդների հմտությունների որակի իշեցումը կարող է նկատվել միայն աշխատանքի երկարատև ընդմիջումների դեպքում (օրինակ, հիվանդություն կամ մասնագիտության փոփոխում): Բայց նույնիսկ ունենալով սովորական պայմաններում ավտոմեքենան վարելու լավ մշակված հմտություններ, միշտ չէ, որ կարելի է վթարային իրադրությունից բարենպաստ ելք ապահովել, քանի որ այստեղ արգելն պահանջվում է այլ հմտություններ: Այսպես, վթարային իրադրությունում ժամանակի պակասության դեպքում ձեր գործողությունների ամբողջության մեջ կարող են ընդգրկվել ոչ միայն ղեկային կառավարումը և արգելակների օգտագործումը, այլև ցածր փոխանցումների միացումը, ձայնային ազդանշան տալը, լույսի փոխարկումը

և այլն, իսկ մի շարք գեղագերում անհրաժեշտություն է ծագում այդ ամբողջությունից հանել ձեզ համար մի տեսակ սովորական դարձած ավտոմատ կատարվող գործողությունները (օրինակ, սալթաքուն ճանապարհի վրա արգելակման ժամանակ կցորդման մեխանիզմի ոտնակը չսեղմել): Այդ գործողությունները պետք է կատարվեն առավելագույն շափով արագ և ճիշտ, այսինքն՝ ձեր մոտ պետք է մշակվի տարբեր վթարային իրադրություններում գործողությունների հմտություններ:

Վարորդի համար ամենաբարդ և ամենաանհրաժեշտ գործողությունը համարվում է ինչպես իր, այնպես էլ համընթաց և հանդիպակաց ավտոմեքենաների շարժման արագության ճիշտ որոշումը: Անհրաժեշտ է կարողանալ նաև որոշել հետիւտների արագությունը: Վագանցի մաները հաշվի առնելու համար պետք է ճիշտ դիտենալ, թե ինչ արագությամբ է շարժվում վազանցողը և հանդիպակաց ավտոմեքենան: Դրա համար անհրաժեշտ է ամեն օր մարզվել, որոշելով տարբեր տրանսպորտային միջոցների շարժման արագությունը: Ընդ որում ամենապարզ միջոցը արագաշափի սանդղակով հսկելն է:

Յուրաքանչյուր վարորդ պետք է ճիշտ որոշի, թե որքա՞ն է օբյեկտի, որի մոտ նա պետք է կանգնեցնի ավտոմեքենան և իր միջև եղած հեռավորությունը: Դրա համար կարելի է օգտագործել ցանկացած մեթոդը, ընդհուպ մինչև ուղղակի ավտոտրանսպորտային ձեռնարկության տարածքում կատարվող մրցումները:

Փորձեք ավտոմեքենան ձախ կամ աջ կողմով կանգնեցնել պատից 30, 50 և 100 սմ հեռավորության վրա: Դուք կհամոզվեք, որ դա այնքան էլ հեշտ չէ անել: Ամեն տեսակ մարզումից հետո անհրաժեշտ է ինքնուրույն կամ ընկերների օգնությամբ գնահատել սեփական հնարավորությունները:

Մարզման անվանգ մեթոդները: Սովորաբար ավտոմոբիլային ճանապարհի վրա, ինչպիսի հեշտ մարզում էլ լինի, մի անգայուշ կամ անվարժ շարժումը հնարավոր է, որ ունենալ բավականին տհաճ հետեւանք: Շատ բաներում այստեղ մեղավոր է վարորդների թույլ հոգերանական և ֆիզիկական նախապատրաստվածությունը:

Նման դեպքերում օգնության են հասնում տրենաժորները, որոնք հաստատում տեղ են գրավել մի շարք մասնագետների և առաջին հերթին օդաչու մասնագետների նախապատրաստման գործում։ Այս դեպքում օդաչուի նախապատրաստման ծախսերը մի քանի անգամ քիչ է, քան այդ նպատակի համար ինքնաթիռի կամ ուղղաթիռի ուղղակի օգտագործումը։ Օդաչուական գործի որոշ ուսուցիչներ նույնիսկ ենթադրում են, որ ժամանակի ընթացքում անձնակազմի ամբողջ ուսուցումը սկզբից մինչև վերջ կանցկացվի տրենաժերի վրա։ Տրենաժերները բավական լայնորեն տարածված են գնացքների մեջենավարների, ուղիունախոսավարների, դիսպետչերների և այլ մասնագետների ուսուցման դեպքում։

Եվ ամենուրեք, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, օգուտը դրանից հսկայական է։

Վերջին ժամանակներում ինժեներահոգերանական հետազոտությունների և ծրագրային ուսուցման զարգացման հետ միասին ավելի լայն կիրառություն է ստանում սկզբունքայնորեն նոր դիդակտիկայի հիման վրա կառուցված տրենաժորներ։ Դա պայմանավորված է, մասնավորապես նրանով, որ վարորդի մասնագիտությանը ներկայացվում են բավական խիստ հոգեբանական պահանջներ։ Իրադրություննից կախված արագ որոշում ընդունել և ճանապարհային բարդ պայմաններում՝ ավտոմեքենան վարել, տիրապետել շարժողական աշքաշափին, կարողանալ կողմնորոշվել տեղակերպում և այլն։ Մոսկվայում տեղի ունեցած «Ատրակցիոն—71» ցուցահանդեսի աշխատանքների ժամանակ այցելուների նկատմամբ հետաքրքիր հետազոտություններ են կատարվել զվարճալի կարտինգային տրեկներում։ Այստեղ ամենաբնութագրականը եղել է այն, որ այդ «մրցարշավների» մասնակիցների մեծամասնությունը երբեք դեկը շէին պահում ձեռքերում և կարելի էր հեշտությամբ տեսնել սկսնակ վարորդների բնորոշ թերությունները, այդ թվում նաև սահունության բացակայությունը։

Իսկ ինչպիսի՞ արենաժորներ են անհրաժեշտ։ Մոսկվայի պետական համալսարանի աշխատակիցներն առաջարկել են արենաժորները պայմանականորեն բաժանել հինգ խմբի։ Առաջինը՝ շարժման կանոններն ուսումնասիրելու համար։

Երկրորդը՝ ավտոմեքենայի կառուցվածքը և շահագործման հատկությունները, անվտանգության տեխնիկան, օժանդակ սարքավորումները, վերանորոգումը և տեխնիկական սպասարկումը ուսումնասիրելու համար, Երկրորդ խմբի մեջ մըտնոցմ են սարքավորումների սենսորային շարժումների, հըմտությունների ձևավորման համար։ Չորրորդ խումբը ընդգրկում է վարորդների հոգերանական առանձնահատկությունները ու մասնագիտական նախապատրաստումը և նրանց վարքագիծը ավտոմեքենան վարելու ժամանակ։ Վերջին խումբը կոչված է տեխնիկական դիագնոստիկայի, ավտոմեքենայի շահագործման մասին գիտելիքներն ամբազընդելու համար։ Ինչպես մեր Երկրում, այնպես էլ արտասահմանում մեծ տարածում են ստացել առաջին, երկրորդ և հինգերորդ խմբերի տրենաժողովները և սարքավորումները։

ԳԴՀ-ում, Չեխոսլովակիայում, Հունգարիայում և այլ երկրներում կազմակերպված են տրենաժորների սեթիական թողարկում։ Մեծ հեռանկարներ ունեն չեխոսլովակյան տրենաժորները, որոնք կարողանում են վերարտադրել վթարային հիրադրությունների մեծ հաջորդաշարք և բարդ ճանապարհային պայմաններում մարզման միջոցով կատարելագործել ավտոմեքենայի վարման անհրաժեշտ հմտությունները։ Հետաքրքիր է ուսուցման ընթացքը ավտոմատ համակարգի միջոցով գրանցող այսպես կոչված տեսողական տրենաժորը։

ՍԿՍՆԱԿ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ՍԽԱԼՆԵՐԸ

Արագություն ընտրելու սխալները բնութագրական են բայց սկսնակ վարորդների համար։ Նրանք սովորաբար դրսելի կառավարման ոտնակը սեղմում են մինչև վերջ, Գամարյա շհսկելով շարժման արագությունը։ Հնարավոր է, որ այդ համարվում է մարդու մոտ արագության իներցիայի ամենացայտուն արտահայտումը, միշտ առաջ ու առաջ շարժվելու, երթևեկելու անմիջական զգացումը։ Հնարավոր է, որ արագության զգացողությունը և տենչը մարդու համար բնական զգացում է, այնպես, ինչպես թոշունների, ձկների, կեն-